

«Հայաստանի՝ աղետների կառավարման և վտանգների մասին տեղեկատվական համակարգերի օրենսդրության և հաստատությունների գնահատում»



Հաշվետվությունը մշակվել և տպագրվել է ՄԱԶԾ «Աղետներին նախապատրաստվածության և ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների իզորացում» ծրագրի միջոցներով:

Սույն հաշվետվությունում արտահայտված տեսակետներն անպայման չէ, որ ներկայացնեն ՄԱԿ-ի կամ ՄԱԶԾ պաշտոնական տեսակետներն ու քաղաքականությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ	3
2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	4
3. ԱՂԵՏՆԵՐԻ ՎՏԱՆԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	4
3.1 Բնական վտանգներ.....	4
3.2 Երկրաբանական վտանգներ	4
3.3 Օդերևութաբանական վտանգներ	5
3.4 Տեխնաժին վտանգներ.....	6
3.5 Բնապահպանական վտանգներ.....	7
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.....	7
4.1 Միջազգային համագործակցություն	8
4.2 Հանրապետական մակարդակում.....	9
4.3 Հանրապետական գործադիր մարմինների մակարդակում	10
4.4 Լիազոր մարմինների մակարդակում.....	11
4.5 Մարզային իշխանությունների մակարդակում	11
4.6 Տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակում	12
4.7 Կազմակերպությունների մակարդակում.....	12
5. ՏԱՐԲԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԸ.....	14
5.1 ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	14
5.2 ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	23
5.3 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	25
5.4 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	30
6. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	33
6.1 ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ	33
6.2 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼ	35
6.3 ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՒԼ.....	37
6.4 ՌԻԹՅՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	41
7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ	44
8. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	47

1. ՀԱՄԱՌՈՏ ԵԿԱՐԱԳԻՐ

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է Միավորված ազգերի կազմակերպության Ջարգացման ծրագրի (ՄԱԶԾ) «Աղետների պատրաստվածության և ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում՝ նպատակ ունենալով գնահատել Հայաստանում աղետների կառավարման (ԱԿ) ինստիտուցիոնալ և օրենսդրական դաշտը: Ուսումնասիրության նպատակն էր նաև ուսումնասիրել Հայաստանում աղետների վտանգի կառավարման ամբողջ գործընթացը, ներառյալ՝ վտանգի բացահայտումը և գնահատումը, տվյալների հավաքումը և վերլուծությունը, նախապատրաստումը և այլն:

Ուսումնասիրությունն իրականացնելու համար ՄԱԶԾ-ի հայտարարած մրցույթի արդյունքում ընտրվել է երեք փորձագետ: Աշխատանքը կատարվել է երկու ամսում, այդ ընթացքում փորձագետները մշակել են հաշվետվության ձևը, հատուկ հարցաշարը, այնուհետև կազմակերպվել են հանդիպումներ ոլորտում գործող հիմնական դերակատարների հետ:

Համաշխարհային փորձը վկայում է, որ մեծածավալ աղետների դեպքում որևէ պետություն ի վիճակի չէ զուտ իր ուժերով և կարողություններով արձագանքելու ստեղծված իրավիճակին և վերացնելու առաջացած հետևանքները: Հետևաբար, անչափ կարևոր է այս գործում տեղական ու միջազգային կազմակերպությունների դերը, որոնք իրենց գործունեությամբ նպաստում են պետության առջև ծառայած խնդիրների լուծմանը: Այս տեսանկյունից Հայաստանը կարելի է դասել միջազգային հանրության կողմից շոշափելի աջակցություն ստացող երկրների շարքը, քանզի ներկայումս երկրում գործում են նման կազմակերպություններ, և շատերը ծրագրեր են իրականացնում աղետների կառավարման ոլորտում: Սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են նաև այս ոլորտում գործող կազմակերպությունների կառուցվածքն ու դերը: Փորձագետները զուգահեռ ուսումնասիրել են աղետների կառավարման ոլորտին առնչվող ՀՀ օրենսդրությունը և պետական ու տեղական կառավարման մարմինների դերն ու իրավասությունը:

Արդյունքում հնարավոր եղավ գնահատել ոլորտին առնչվող օրենսդրական դաշտը, վեր հանել նրա ուժեղ և թույլ կողմերը, կրկնություններն ու բացերը, բոլոր դերակատարներին՝ ըստ կառուցվածքի, դերի և իրականացվող ծրագրերի, ինչպես նաև ոլորտի հաղորդակցության և համակարգման ներկա վիճակը և, վերլուծելով այս ամենը, առկա վիճակի բարելավման որոշակի առաջարկություններ անել:

Ի վերջո, ուսումնասիրությունը հնարավորություն տվեց ունենալու Հայաստանում աղետների վտանգի կառավարմանն առնչվող տեղեկատվական շտեմարան, որը հետագայում՝ ծրագրեր մշակելիս և գործունեություն ծավալելիս, կօգտագործվի նաև գործընկերների կողմից: Ավելին, ուսումնասիրության արդյունքները ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող ծրագրի սկզբնակետ են, որի նպատակն է հզորացնել Հայաստանում աղետների վտանգի կառավարման համակարգը, ինչն էլ, իր հերթին, կնվազեցնի աղետների բացասական ազդեցությունը երկրի զարգացման վրա:

Ուսումնասիրությունը կատարող փորձագետներ՝

Կարապետ Սարաֆյան

Էդմոն Ազարյան

Արթուր Խաչիկյան

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրության առարկա խնդիրների վերաբերյալ ավելի ընդգրկուն և հստակ տվյալներ ստանալու նպատակով համակցվել են տարբեր մեթոդներ: Մասնավորապես.

- հարցազրույցներ ազգային մակարդակի 39 համապատասխան գործընկերների հետ (ցանկը տես հավելված 5-ում),
- ոլորտին առնչվող օրենքների, որոշումների, իրավական ակտերի և միջազգային համաձայնագրերի ուսումնասիրություն,
- ոլորտին առնչվող բոլոր հետազոտությունների և այլ փաստաթղթերի ուսումնասիրություն,
- ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների (ՈՒԹՅՎ) վերլուծություն:

Այս տարբեր մեթոդների կիրառումը հնարավորություն տվեց հավաքել և համադրել անհրաժեշտ տեղեկատվությունը, որն էլ հետագայում ենթարկվեց վերլուծության: Արդյունքում ձևավորվեցին համապատասխան եզրակացություններն ու առաջարկները:

3. ԱՂԵՏՆԵՐԻ ՎՏԱՆԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այն հանգամանքը, որ Հայաստանը գտնվում է խիստ աղետավտանգ գոտում, անհրաժեշտ է դարձնում սպառնացող վտանգների մանրամասն և տարբերակված ուսումնասիրությունը և քարտեզագրումը: Ակնհայտ է, որ աղետների ժամանակ բնակչության խոցելիությունը նվազեցնելու համար պետք է համապատասխան ներդրում անել աղետների նախապատրաստման և դրանց ազդեցության նվազեցման գործում:

Աղետների ազդեցության մեղմացումը ներառում է այն բոլոր միջոցները, որոնք ձեռնարկվում են մինչև աղետը, ներառյալ պատրաստվածությունը և ռիսկերի նվազեցման երկարաժամկետ ծրագրերը:

Ստորև ներկայացված են Հայաստանին սպառնացող այն բնական, տեխնածին և բնապահպանական վտանգները, որոնց դեմ պետք է ուղղվեն երկրի կառավարության և ոլորտի այլ դերակատարների համախմբված ջանքերը՝ աղետների նկատմամբ խոցելիությունը նվազեցնելու, նախապատրաստվածությունը բարձրացնելու և երկրի կայուն զարգացումը ապահովելու համար:

3.1 Բնական վտանգներ

Բնական վտանգները բնության գործընթացներ կամ երևույթներ են, որոնք կարող են կյանքի կորստի, վնասվածքների կամ առողջապահական խնդիրների, գույքի վնասի, ապրուստի և ծառայությունների կորստի, սոցիալական և տնտեսական խաթարման կամ շրջակա միջավայրի վնասների պատճառ դառնալ:

Բնական աղետները բնական վտանգների արգասիք են: Հայաստանին բնորոշ են հետևյալ բնական վտանգները:

3.2 Երկրաբանական վտանգներ

1. Երկրաշարժ
2. Սողանք
3. Քարաթափում
4. Ջրակալում
5. Սելավ

3.3 Օդերևութաբանական վտանգներ

1. Ջրհեղեղ
2. Կայծակ
3. Չնահոսք
4. Ցրտահարություն
5. Ուժեղ մառախուղ
6. Կարկուտ
7. Ուժեղ ձնաբուք
8. Երաշտ
9. Բնական հրդեհներ
 - ա) անտառի
 - բ) տորֆի
 - գ) տափաստանի

Հայաստանի տարածքում հիմնական վտանգը երկրաշարժն է: Պատմության ընթացքում բազմաթիվ երկրաշարժեր են եղել: Միայն XX դարում Ռիֆտերի սանդղակով 8-10 բալ հզորությամբ վեց երկրաշարժ է տեղի ունեցել:

XX դարի ամենամեծ ցնցումը 1988 թվականի Սպիտակի երկրաշարժն էր: Այն վնասեց 80 կիլոմետր շառավղով մի տարածք, որը կազմում է հանրապետության տարածքի ավելի քան 40%-ը և ներառում է Գյումրի, Սպիտակ, Ստեփանավան ու Վանաձոր քաղաքները: Շուրջ 30 հազար քառ. կմ տարածքում երկիրը ցնցվել է 6 բալ ուժգնությամբ: Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) պաշտոնական տվյալների համաձայն՝ երկիրը կրել է 14.2 միլիարդ դոլարի վնաս, 25.000 մարդ զոհվել է, 19.000 մարդ՝ վիրավորվել: Ի լրումն՝ 517.000 մարդ մնացել է անօթևան: 15.000 մարդ փրկվել է փրկարարական աշխատանքների շնորհիվ: Ներկայումս Հայաստանի 48 քաղաքները՝ 2.541.200 բնակչությամբ, գտնվում են սեյսմավտանգ գոտում և համարվում են վտանգի ենթակա:

Մոտ 569.500 մարդ բնակվում է կարկտավտանգ տարածքում գտնվող 368 համայնքներում: Կարկուտը կարող է զգալի վնաս հասցնել ցանքատարածքներին, խաղողի և մրգատու այգիներին, ինչպես նաև մարդկանց:

Հայաստանում ջրհեղեղներ տեղի են ունենում ամեն տարի՝ ստեղծելով արտակարգ իրավիճակներ (ԱԻ): Դրանք մեծ վնաս են պատճառում երկրին: Հանրապետության 10%-ը գտնվում է պոտենցիալ ջրհեղեղային գոտում: Այդ տարածքներում կան 114 գյուղ՝ 221.900 բնակչությամբ և 13 քաղաք՝ 259.200 բնակչությամբ:

Հանրապետության ողջ տարածքի 70%-ը զբաղեցնում են 3.000 սողանքային գոտիներ, որտեղ գտնվում են 633.172 բնակչությամբ 519 գյուղեր: Ըստ Հայաստանի փրկարար ծառայության (ՀՓԾ) տվյալների՝ անկախությունից մինչ օրս սողանքների հասցրած տարեկան վնասը միջին հաշվով կազմում է 3 միլիոն դոլար: 1997 թ. վնասի չափը հասել է 16 միլիոն դոլարի, իսկ 1998 թ.՝ 25 միլիոնի: Ներկայումս ընդամենը տասներկու սողանք է ապառնում բնակավայրերին: Սողանքները կարող են լինել սեյսմիկ ակտիվության երկրորդային հետևանք, ինչպես նաև՝ մարդկային գործունեության (ծառահատում, ոչ ճիշտ ոռոգում և ճանապարհաշինություն):

Համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2007թ. հանրապետության տարբեր շրջաններում տեղի են ունեցել 38 սելավ և 7 սողանք. տուժածներ չկան:

Մեր ոչ վաղ անցյալից հայտնի են Երևանի Գետառ գետի 1946թ. սելավը (250 գոհ), 1972թ. Ալավերդու սելավը (8 գոհ), 1996թ. Գորիսի սելավը (4 գոհ): Հայտնի են Դիլիջանի սողանքների խումբը, Կապանի սողանքների խումբը, Ողջաբերդ, Սև քար, Մարտիրոս և Զիվա գյուղերի սողանքները և այլն: Կան սողանքներ, որոնք սպառնում են

մայրուղիներին, օրինակ՝ Քոբեր-Սանահին հատվածում, Ալավերդի տանող ճանապարհին, Հաղարծին գյուղի մոտ և այլն, կան նաև սողանքներ, որոնք վտանգի են ենթարկում պատմամշակութային օբյեկտները, օրինակ՝ Մակարավանքը և Ջուխտակ վանքը: Հայաստանի Հանրապետության (ՀՀ) քաղաքաշինության նախարարության և ճապոնիայի կառավարության պատվերով ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը (JICA) 2006թ. Հայաստանի տարածքում ուսումնասիրել և քարտեզագրել է 2500 սողանքային օջախ:

Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2003-2007թթ. գրանցվել է բնական աղետների 1381 դեպք, տարեկան՝ միջին հաշվով 276 դեպք:

3.4 Տեխնածին վտանգներ

Տեխնածին վտանգները տեխնիկական կամ արտադրական գործընթացներից ծագող վտանգներն են, ներառյալ՝ վթարները, վտանգավոր ընթացակարգերը, ենթակառուցվածքների խաթարումը կամ յուրօրինակ մարդկային գործունեությունը, որոնք կարող են մարդկային կյանքի կորստի, վնասվածքների, հիվանդության կամ այլ առողջապահական խնդիրների, գույքի վնասի, ունեցվածքի ու ծառայությունների կորստի, սոցիալական կամ տնտեսական խաթարման կամ շրջակա միջավայրի վնասի պատճառ դառնալ:

Հայաստանին բնորոշ տեխնածին բնույթի վտանգները դասակարգվում են հետևյալ կերպ.

1. Ատոմակայանի վտանգ
2. Ջերմաէլեկտրակայանների վտանգ
3. Քիմիական օբյեկտների վտանգ
4. Կենսաբանական օբյեկտների վտանգ
5. Պայթուցիկ նյութերի արտադրության և պահեստների վտանգ
6. Շենքերի և շինությունների փլուզումների վտանգ
7. Տրանսպորտային վտանգ
8. Հրդեհային վտանգ (արդյունաբերական օբյեկտների, սոցիալ-մշակութային օբյեկտների, բնակելի շենքերի, բնակավայրերի, պահեստների շտեմարանների և այլն)
9. Հիդրոտեխնիկական կառույցների հիդրոդինամիկ վտանգ
10. Կենսապահովման կոմունալ համակարգերի վտանգ
11. Համակցված վտանգներ

Այսպիսով, Հայաստանին սպառնացող վտանգներից մեկը Հայկական ատոմակայանն է, որը գտնվում է Արարատյան դաշտավայրում՝ Երևանից 28 կիլոմետր հեռավորության վրա: Կառույցը նախագծելիս ատոմակայանի տարածքը գնահատվել է 8 բալ հզորությամբ սեյսմիկ տարածք (ըստ MSK 64 սանդղակի): Ատոմակայանն սկսել է գործել 1976թ.: 1989թ. անվտանգության միջազգային չափանիշներին չհամապատասխանելու պատճառով դրա գործունեությունը դադարեցվեց: 1995թ. ատոմակայանի շենքի սեյսմիկ անվտանգությունը հզորացնելուց և սարքավորումները նորացնելուց հետո, ելնելով տնտեսական կարիքներից, գործի դրվեց երկրորդ բլոկը: Ներկայումս 180.000 բնակչությամբ 37 համայնք և 2 քաղաք գտնվում են ատոմակայանից 16 կիլոմետր շառավղով տարածքում: Այն պոտենցիալ վտանգների մեծ ազդեցության գոտի է, որոնց պատճառ կարող են դառնալ ռադիոակտիվ աղտոտումների հոսքերը:

Հայաստանի տարածքում տեղակայված են նաև 3 ՋԷԿ, 32 քիմիական վտանգավոր օբյեկտ, պայթուցիկ նյութերի հետ առնչվող 3 օբյեկտ, մոտ 90 ջրամբար և 15 պոչամբար: Հոսալիությունը շենքի յուրաքանչյուր տարրի պարտադիր հատկությունն է: Նախնական ուսումնասիրություններով պարզվել է, որ կառուցված բազմահարկ շենքերի մեծ մասի կայունությունը նախագծերում ցածր բալերի նախատեսման, անորակ շինարարության,

անբարեխիղճ շահագործման և այլ պատճառներով զիջում է իրական վտանգի չափերին: Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2003-2007 թթ. գրանցվել է տեխնաժին բնույթի 16.983 աղետ, տարեկան՝ միջին հաշվով 3397 դեպք:

3.5 Բնապահպանական վտանգներ

Բնապահպանական վտանգները բնական գործոնների կամ մարդու տնտեսական գործունեության հետևանքով բնական միջավայրի տարրերի որակի վատթարացման հավանականություն են, որը կարող է սպառնալ էկոլոգիական բաղադրիչների գոյությանը: Որպես օրինակ՝ կարելի է բերել օդի աղտոտվածության աստիճանի մոնիթորինգի արդյունքները:

Հայաստանին բնորոշ բնապահպանական բնույթի վտանգները դասակարգվում են հետևյալ հիմնական տեսակների.

1. Ծանր մետաղներ
2. Պեստիցիդներ
3. Դիոկսին
4. Խիստ փոխակերպված հողեր
5. Վառելիքաքսուլային նյութեր
6. ճառագայթային աղտոտում
7. Բնական աղետների հետևանքներ
8. Սորեխների պարս
9. Ընդերքի պաշարների աղետալի նվազում
10. Ջրային ավազանների աղտոտում
11. Հողերի անապատացում
12. Անտառահատում

Վերը նշված բոլոր վտանգներն առկա են և ըստ վիճակագրական տվյալների՝ մեծ չափերի են հասնում: Դրանք կարող են հսկայական վնաս պատճառել թե՛ երկրի տնտեսությանը, թե՛ բնակչությանը՝ մեծապես խոչընդոտելով սոցիալ-տնտեսական զարգացմանը: Հարկ է նշել, որ վտանգների մակարդակի նվազեցումը յուրաքանչյուր պետության զարգացման երաշխիքներից է: Բնապահպանական պոտենցիալ աղետների շարքն են դասվում Հայաստանի երեք մարզերում կենտրոնացված պոչամբարները:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Սույն ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են աղետների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կնքած միջազգային համաձայնագրերը, պայմանագրերը, ՀՀ օրենքները, կառավարության որոշումները և այլ իրավական ակտեր:

Ուսումնասիրվել և վերլուծվել է իրավական ակտերով աղետների կառավարման ոլորտի հարաբերությունների կարգավորումը՝ աղետների կանխատեսման և կանխարգելման, աղետների հակազդմանը նախապատրաստվելու, աղետներին արձագանքելու, աղետների հնարավոր հետևանքների նվազեցման ու հետևանքների վերացման ուղղություններով: Ավելին, ուսումնասիրվել և վերլուծվել են աղետների կառավարման բնագավառում տարբեր մարմիններին վերապահված իրավասությունները՝ իրավունքները և պարտականությունները, նրանց ներգրավվածության աստիճանը, ուժեղ ու թերի կողմերը և բացթողումները: Վերլուծությունը կատարվել է՝ առաջադրված խնդիրները հորիզոնական, ուղղահայաց և խաչաձև համադրելով:

4.1 Միջազգային համագործակցություն

Միջազգային համագործակցության ուղղությամբ նշանակալի և արդյունավետ գործունեություն է ծավալվել: ՀՀ-ն միացել է հնարավոր արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների, արտակարգ իրավիճակների կառավարման, հետևանքների նվազեցման և վերացման վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության և Եվրոպայի խորհրդի (նաև Եվրամիության) շրջանակներում կնքված մի շարք կոնվենցիաների և համաձայնագրերի (տես Հավելված 1):

Արտակարգ իրավիճակների հակազդման և փոխօգնության բնագավառում ՀՀ-ն համագործակցում է սահմանակից ու տարածաշրջանի պետությունների հետ և նրանց հետ կնքել է համապատասխան համաձայնագրեր ու պայմանագրեր:

ՀՀ-ն հետևողականորեն շարունակում է այլ պետությունների հետ արտակարգ իրավիճակներից պաշտպանության և համագործակցության համաձայնագրերի կնքման և, համատեղ գործողությունների իրականացման գործունեությունը:

ՀՀ օրենքներով աղետների կառավարման ոլորտը գրեթե 80%-ով կանոնակարգված է: Ընդունվել են «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Հիդրոտեխնիկական գործունեության մասին», «Սեյսմիկ պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին», «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին», «Հայաստանի փրկարար ծառայության մասին» և «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» ՀՀ օրենքները, ինչպես նաև բնագավառին առնչվող բազմաթիվ այլ օրենքներ (տես Հավելված 2):

Ենթաօրենսդրական մակարդակով աղետների կառավարման բնագավառը նույնպես լրջորեն կանոնակարգված է. գործում են ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի հարյուրավոր որոշումներ, նախարարների և այլ մարմինների ղեկավարների հրամաններ (տես Հավելված 3):

Ներկայումս, համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին» և այլ ՀՀ օրենքների, աղետների կառավարման համակարգում ընդգրկված են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ) և կազմակերպությունները:

Ուսումնասիրվել և վերլուծվել են նաև ՀՀ կառավարությանը, լիազոր մարմնին, նախարարություններին, կառավարությանն առընթեր մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին վերապահված իրավասություններն ու խնդիրները (տես Հավելված 4):

Օրենսդրական և ենթաօրենսդրական մակարդակներում հստակորեն սահմանված են նախարարությունների ու այլ գերատեսչությունների իրավասությունները՝ ինչպես ընդհանուր առումով, այնպես էլ հնարավոր արտակարգ իրավիճակ առաջացնող երևույթների մասնավոր դեպքերում:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված են արտակարգ իրավիճակների բնագավառում հանրապետական լիազոր գործադիր մարմնի՝ արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) և նրա ենթակա մարմինների լիազորությունները, որոնք գրեթե ծածկում են արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման ուղղությամբ ծավալվող գործունեության դաշտը:

Հստակորեն սահմանված են մարզային իշխանությունների գործունեության բոլոր ուղղություններն ու իրավասությունները: Մարզային մակարդակում արտակարգ իրավիճակների կանխումը, հնարավոր հետևանքների նվազեցումը և վերացումը օպերատիվ ու արդյունավետ իրականացնելու նպատակով մարզային իշխանություններին օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով հանրապետական գործադիր մարմինների մարզային ստորաբաժանումներին անմիջականորեն հանձնարարականներ տալու իրավասություններ են վերապահվել:

Օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով սահմանված են կազմակերպությունների՝ արտակարգ իրավիճակներից հիմնականում իրենց աշխատողներին և կազմակերպության գործունեությունը պաշտպանելու իրավասությունները:

Ստորև բերված են վերլուծության ընթացքում բացահայտված թերացումներն ու բացերը աղետների կառավարման բոլոր մակարդակներում:

4.2 Հանրապետական մակարդակում

- Բացակայում է համակարգված, մեկ միասնական հայեցակարգային մոտեցումը:
- Սահմանված չեն ՀՀ կառավարությանը տրված իրավասությունների իրականացման մեխանիզմները, կատարված աշխատանքների և գործունեության գնահատման կարգն ու չափանիշները, որոնք հնարավորություն կտային բարձրացնելու աշխատանքների արդյունավետությունը, բացահայտելու և վերացնելու հնարավոր թերություններն ու բացթողումները:
- Բացակայում է հաշվետվողականությունը՝ կոնկրետ որոշման կամ հանձնարարականի, ինչպես նաև ընդհանուր գործունեության (տարեկան) կտրվածքներով:

Նշվածի, ինչպես նաև ֆինանսանյութական բազայի բացակայության պատճառով չեն իրացվում օրենքներով ՀՀ կառավարությանը վերապահված իրավասությունները, և չեն ընդունվում կամ չեն կատարվում անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերը:

Այսպես, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ կառավարությունը՝

- Հաստատում է ԱԻ հետևանքների նվազեցման ու վերացման, բնակչության պաշտպանության ծրագրերը և վերահսկում դրանց կատարումը:

1999 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 796 որոշմամբ հաստատվել է Արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման ու վերացման, բնակչության պաշտպանության 2000-2004 թվականների ծրագիրը, որը չի իրականացվել, և հետագայում նման ծրագրեր չեն հաստատվել:

- Սահմանում է ԱԻ առաջացման հնարավոր պատճառ համարվող օբյեկտների, առարկաների ու գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննություն իրականացնելու կարգը:

Նման կարգ չի հաստատվել:

- Հայտարարում է աղետի գոտի և սահմանում դրա տարածքը, ինչպես նաև կազմակերպում է այդ տարածքին առավելագույն օգնություն և նյութական պաշարներ տրամադրելու աշխատանքները:

1990 թվականից ի վեր կառավարության որոշմամբ աղետի գոտի չի հայտարարվել, քանի որ մեծ մասշտաբի արտակարգ իրավիճակ չի եղել, իսկ փոքր մասշտաբի արտակարգ իրավիճակի դեպքում կառավարության քայլերը սահմանված չեն (արտակարգ իրավիճակներն ըստ մասշտաբների չեն դասակարգվել): Օրենքի

ձևակերպումն ընդհանրական է և ներկա տնտեսական սուղ պայմաններում պահանջում է պետությունների միջոցների առավելագույն ծախս:

- Հաստատում է ԱԻ հետևանքով բնակչությանը պատճառված վնասի գնահատման և փոխհատուցման կարգը:

Նման կարգ չի հաստատվել:

- Հաստատում է լիազորված մարմնի ներկայացրած ԱԻ-ում տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծման ու դրանց օգտագործման կարգը:

Նման կարգ չի հաստատվել:

- «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ կառավարությունը՝ սահմանում է սեյսմաշրջանացման աշխատանքների լիցենզիաների տրման կարգը:

Նման կարգ չի հաստատվել:

- «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ կառավարությունը՝ Հաստատում և ֆինանսավորում է հանրապետական նպատակային ծրագրերը:

Հրդեհային անվտանգության ուղղությամբ հանրապետական նպատակային ծրագրեր չեն հաստատվել:

- Ստեղծում, վերակազմակերպում և լուծարում է հրդեհատեխնիկական գիտահետազոտական հիմնարկները և հրդեհատեխնիկական ուսումնական հաստատությունները:

ՀՀ կառավարության ձեռնարկմամբ հրդեհատեխնիկական գիտահետազոտական հիմնարկներ չեն ստեղծվել:

«Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ կառավարությունը՝

- հաստատում է հատուկ, կարևորագույն օբյեկտների, ինչպես նաև առարկաների, գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննության իրականացման կարգը:

Նման կարգ չի հաստատվել:

4.3 Հանրապետական գործադիր մարմինների մակարդակում

- Սահմանված և հստակեցված չեն աղետների կառավարման բնագավառում նախարարությունների ու այլ գերատեսչությունների՝ օրենքներով սահմանված իրավասությունների և գործողությունների կատարման մեխանիզմները:
- Նանց կանոնադրություններում հիմնական նպատակների և խնդիրների հետ միասին ամրագրված չեն արտակարգ իրավիճակների բնագավառում օրենքներով նրանց վերապահված իրավունքների և պարտականությունների դրույթներ:
- Մարմինների աշխատակազմերում չկան արտակարգ իրավիճակների հարցերով զբաղվող պատասխանատու պաշտոնատար անձինք:

4.4 Լիազոր մարմինների մակարդակում

Աղետների կառավարման բնագավառում բացակայում են համակարգման, միասնական մոտեցումների ապահովման մեխանիզմները:

Այսպես.

- «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը, համակարգում և վերահսկում է հանրապետական գործադիր, պետական կառավարման, տարածքային և ՏԻՄ-երի, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների գործունեությունը բնակչության պաշտպանության բնագավառում:

Սակայն համակարգման, վերահսկման մեխանիզմները սահմանված և հստակեցված չեն: Արտակարգ իրավիճակներ առաջացնող տարբեր երևույթների դեմ պայքարի կամ դրանց հետևանքների նվազեցման ու վերացման նպատակով ՀՀ կառավարությունը տարբեր նախարարությունների և մարմինների հանձնարարում է որոշակի խնդիրներ, որոնք չեն համակարգվում լիազոր մարմնի կողմից:

- Օրենքներով վերապահված խնդիրները չեն լուծվում մեխանիզմների կամ միջոցների բացակայության պատճառով:

Օրինակ՝ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ լիազոր մարմինը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը, ստեղծում և կուտակում է ԱԻ-ում տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարներ, ֆոնդեր և ապահովում դրանց նպատակային օգտագործումը:

ԱԻ-ում տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարներ, ֆոնդեր չեն ստեղծվել:

- Արագ արձագանքման ուժերի գործունեության համակարգման, տեղեկությունների ստացման ու հաղորդման և այլ խնդիրների համատեղումը և կրկնակումը արտակարգ իրավիճակների նախարարության, Հայաստանի փրկարար ծառայության, «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության, Պետական ռեզերվների գործակալության, այլ նախարարությունների և մարմինների միջև:
- Աղետների կառավարման կենտրոնացված համակարգի ու ճգնաժամային կառավարման կենտրոնի իրավական հիմքի բացակայությունը:
- Աղետների կառավարման բնագավառում նորագույն տեխնոլոգիաների և մոտեցումների ներդրման ծրագրերի բացակայությունը:

4.5 Մարզային իշխանությունների մակարդակում

- Գոյություն չունեն օրենքով վերապահված իրավասությունների կատարման հստակ մեխանիզմներ:
- Գոյություն չունեն մարզի վարչական տարածքում գտնվող համայնքներին արտակարգ իրավիճակների հակազդման գործում ներգրավելու, նրանց հաշվետվողականության և աշխատանքի գնահատման մեխանիզմներ:

- Գոյություն չունեն հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումներին հանձնարարականներ տալու, հաշվետվություն պահանջելու, գնահատելու մեխանիզմներ:
- Մարզային իշխանությունները պատասխանատու են մարզի տարածքում բնակչության պաշտպանությունն ապահովելու համար, ասկայն հստակեցված չէ, թե ինչ է ենթադրում այդ պատասխանատվությունը:

4.6 Տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակում

- Այս մակարդակում նույնպես արտակարգ իրավիճակներում համայնքի բնակչության պաշտպանության ապահովման համար սահմանված չեն հստակ մեխանիզմներ:
- Տեղական ինքնակառավարման մարմիններն արտակարգ իրավիճակների կառավարման ուղղությամբ իրականացնում են միայն պետության կողմից պատվիրված կամ կամավոր լիազորություններ:
- Արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման համար պարտադիր լիազորությունների բացակայությունը: Հանդիսանալով համայնքի բնակչության և կազմակերպությունների հիմնական հարկահավաքը՝ որևէ պարտականություն չեն ստանձնում նրանց պաշտպանության համար:
- Համայնքային հասարակական և կամավորական շարժման բացակայությունը:
- Համայնքների և համայնքային բնակչության կամավորության բացակայությունը:

4.7 Կազմակերպությունների մակարդակում

- Կազմակերպությունների պարտականությունները չկատարվելը և դրա համար պատասխանատվության միջոցներ չկիրառելը կամ այդ միջոցների բացակայությունը:
- Կազմակերպությունների կողմից խնդիրների իրականացման (իրենց աշխատողների պաշտպանության, փրկարարական և անհետաձգելի աշխատանքների իրականացմանն աջակցելու կամ նման աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ ուժեր ստեղծելու) մեխանիզմների կամ ցանկության (կամքի) բացակայությունը:
- Կազմակերպությունների՝ իրենց իսկ մեղքով առաջացած արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած բնակչությանը, կազմակերպություններին, շրջակա միջավայրին հասցված վնասների փոխհատուցման պարտականության բացակայությունը:
- «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների կողմից հնարավոր վտանգավոր ազդեցության գոտու բնակչության անհապաղ իրազեկումը և պաշտպանությունը չապահովելը և դրանց մեխանիզմների բացակայությունը: ՀՀ կառավարությունը նման կարգ նույնպես չի սահմանել:
- Բացակայում է նաև աղետներից ապահովագրության, աղետների վտանգների, աղետների արձագանքման և այլ տվյալների բազայի ստեղծման ու կիրառման իրավական կարգավորումը, ինչպես նաև պետական բյուջեում աղետների կառավարման համար որոշակի հոդվածը:

Եզրակացություն

Ուսումնասիրելով և վերլուծելով աղետների կառավարման իրավական շրջանակները՝ հանգում ենք այն եզրակացության, որ գոյություն ունեն արդյունավետ միջազգային համագործակցություն, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների համակողմանի աջակցություն, զարգացած իրավական բազա, նորաստեղծ Արտակարգ իրավիճակների նախարարություն և նրա կազմում գործող բազմամյա փորձ ունեցող մարմինների իրավասություններ, գիտական և ուսումնական բազա, մասնագիտական բազա և վերապատրաստված կադրեր, կառավարման արդյունավետ համակարգ, որը հնարավորություն կտա վերացնելու առկա թերությունները և բացթողումները: Ընդ որում, ուսումնասիրության և վերլուծության արդյունքում վեր են հանվել հիմնական և ամենակարևոր խնդիրները, որոնք ուղղահայաց և հորիզոնական հարաբերություններում որոշիչ դեր են խաղում:

Այդ թերությունները և բացթողումները վերացնելու, ինչպես նաև հետագայում բացառելու նպատակով անհրաժեշտ է մշակել և ընդունել **«Բնակչության պաշտպանության հայեցակարգ»**՝ հաշվի առնելով աղետների կառավարման և հակազդման բնագավառում Հայաստանի շուրջ 20-ամյա փորձը, ինչպես նաև զարգացած եվրոպական երկրների փորձը:

Հարկ է այդ հայեցակարգով նախանշել օրենքների անհրաժեշտ փոփոխությունների կամ նոր օրենքների ընդունումը, մասնավորապես՝

- հանրապետության օրենսդրական դաշտի համապատասխանեցումը միջազգային և եվրամիության չափանիշներին.
- ՀՀ կառավարությանը տրված իրավասությունների կատարման մեխանիզմների սահմանումը.
- ԱԻ բնագավառում կատարված աշխատանքների և գործունեության գնահատման կարգի ու չափանիշների, հաշվետվողականության սահմանումը, ՀՀ կառավարությանը վերապահված իրավասությունների իրացումը և նախատեսված իրավական ակտերի ընդունումը.
- նախարարություններին ու գերատեսչություններին վերապահված լիազորությունների և գործողությունների կատարման մեխանիզմների սահմանումը և հստակեցումը և այլ խնդիրների կատարումը.
- աղետներից ապահովագրության համակարգի ստեղծումն ու այլ առօրեական հարցեր:

Հայեցակարգի ընդունումից հետո անհրաժեշտ է օրենքի և ենթօրենսդրական ակտի մակարդակով սահմանել ու կանոնակարգել ոչ միայն վերը նշված հարցերը կամ հարաբերությունները, այլև՝

- նախարարությունների ու գերատեսչությունների կանոնադրական հիմնական նպատակների և խնդիրների շարքում ամրագրել ԱԻ բնագավառում նրանց վերապահված իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դրույթներ.
- ստեղծել իրավական հիմք՝ նախարարությունների ու գերատեսչությունների աշխատակազմում ԱԻ հարցերով զբաղվող պատասխանատու պաշտոնատար անձի նշանակման համար.
- լիազոր մարմնի կողմից ԱԻ բնագավառում վերահսկողության ու համակարգման իրավասությունների ապահովման, իրականացման մեխանիզմները, լիազոր մարմնի խնդիրների կատարումը կամ վերանայումը.

- բացառել տարբեր մարմինների խնդիրների համատեղումը և կրկնողությունը.
- ԱԿ կենտրոնացված համակարգի ու ճգնաժամային կառավարման կենտրոնի ստեղծումը.
- մարզային իշխանություններին ԱԿ բնագավառում վերապահված իրավասությունների կատարման մեխանիզմները, մարզի վարչական տարածքում գտնվող համայնքներին ԱԻ հակազդման գործում ներգրավելու, նրանց հաշվետվողականության և աշխատանքի գնահատման մեխանիզմները.
- հստակ մեխանիզմներ՝ համայնքի կողմից ԱԻ-ում համայնքի բնակչության պաշտպանության ապահովման համար.
- ամրագրել ԱԻ կառավարման ուղղությամբ ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունները, խթանել համայնքների հասարակական և կամավորական շարժումը՝ եվրոպական երկրների օրենսդրության, փորձի և ներկա ձեռքբերումների օրինակով.
- կազմակերպությունների միջոցով խնդիրների իրականացման մեխանիզմներ, նրանց մեղքով առաջացած ԱԻ հետևանքով տուժած բնակչությանը, կազմակերպություններին, շրջակա միջավայրին պատճառված վնասների փոխհատուցման կարգը և այլ հարցեր:

Վերոնշյալը չկատարելու դեպքում հավանական են միջազգային համագործակցության խաթարման, առկա ձեռքբերումների կորստի, միջազգային չափորոշիչներին համընթաց զարգացման խաթարման, առկա օրենսդրական բազայի և հասարակական հարաբերությունների զարգացման համեմատ հետ մնալու և, որ ամենակարևորն է, աղետներից բնակչության և տարածքների պաշտպանությունը չապահովելու վտանգները:

5. ՏԱՐԲԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐՈՆ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԸ

Այս փուլում ուսումնասիրվել են աղետների կառավարման ոլորտում գործունեություն ծավալող կամ ոլորտին առնչվող պետական, գիտական, կրթական, միջազգային, հասարակական և տեղական այլ կազմակերպությունների ներգրավվածությունը աղետների կառավարման գործընթացում: Ստորև բերված տեղեկատվությունը կօգնի հստակ պատկերացում կազմելու բոլոր մարմինների դերի, կառուցվածքի, իրականացվող ծրագրերի և համագործակցության մասին, ինչն իր հերթին կօգնի բացահայտելու այդ դերակատարների հետ ապագայում համագործակցություն ձեռնարկելու հնարավորությունները: Այդ տեղեկատվության հավաքումն ու վերլուծությունը հնարավոր դարձավ հարցազրույցների անցկացման և նախապես պատրաստված հարցաշարի (տես հավելված 6) շնորհիվ:

5.1 ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջին հերթին ուսումնասիրվել են պետական կառավարման մարմինների դերը, կառուցվածքը, իրականացվող ծրագրերը և տեղական համագործակցությունը՝ գիտակցելով, որ այս կառույցներն են, համաձայն ՀՀ օրենսդրության, հանդիսանում բնակչության պաշտպանության, աղետների դեմ պայքարի և երկրի կայուն զարգացման հիմնական պատասխանատուները: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր նախարարություն, ծառայություն կամ մեկ այլ պետական մարմին ունի օրենքով սահմանված իր պարտականությունները և իրավասությունները, որոնց ավելի մանրակրկիտ անդրադարձել ենք սույն ուսումնասիրության 2-րդ, 3-րդ և 4-րդ գլուխներում, սակայն փորձը վկայում է, որ ոչ բոլոր դեպքերում են պետական կառավարման մարմինները

դրանցով ուղղորդվում և ապահովում դրանց կատարումը: Հետևաբար, անցկացված հարցազրույցների և հարցման միջոցով հնարավոր դարձավ քարտեզագրել և սահմանել աղետների վտանգի կառավարման ոլորտում ընդգրկված պետական կառավարման մարմինների դերը, ներկայումս իրականացվող ծրագրերը և համագործակցությունը: Այսպիսով, ուսումնասիրված վերոնշյալ բոլոր խնդիրների վերլուծությունն ու ամփոփումը տվեց հետևյալ պատկերը:

5.1.1 Արտակարգ իրավիճակների նախարարություն

Արտակարգ իրավիճակների նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում, իրականացնում և համակարգում է օրենքով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

ԱիՆ-ը հանդիսանում է աղետների կառավարման լիազոր մարմին: Նախարարության հիմնական խնդիրներից են՝

- բնակչության պաշտպանության բնագավառում միասնական պետական քաղաքականության մշակումն ու իրականացման համակարգումը,
- Աի առաջացման հնարավոր պատճառ համարվող օբյեկտների, գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննության կազմակերպումն ու համակարգումը,
- Աի կանխման ու հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպումն ու համակարգումը և այլն:

Նախարարության ենթակայության կառույցներն են՝

- ա) Հայաստանի փրկարար ծառայությունը,
- բ) «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը» գործակալությունը,
- գ) Հիդրոօդերևութաբանական և մոնիտորինգի պետական ծառայությունը,
- դ) Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը,
- ե) Պետական ռեզերվների գործակալությունը:

Նախարարությունը համագործակցում է աղետների կառավարման համակարգի բոլոր կառույցների հետ, ինչպես նաև այլ երկրների համապատասխան կառույցների հետ մասնավորապես ԱՄՆ, Արգենտինա, ՌԴ, Իտալիա, Բելուոսիա, Ռեկրահնա, Վրաստան, Ֆրանսիա, Գերմանիա, Շվեյցարիա, Շվեդիա, Ռումինիա, Հունգարիա, Բուլղարիա, Անգլիա, Էստոնիա, Բելգիա, Ճապոնիա, Չինաստան:

Միջազգային կազմակերպությունների հետ սերտորեն համագործակցում է՝ ՄԱԶԾ (UNDP), Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպություն, Եվրախորհրդի «Խոշոր աղետների դեմ պայքարի բաց համաձայնագիր», Կարմիր խաչի և կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիա, ՆԱՏՕ (PFP), ՄԱԳԱՏԵ, Բժիշկներ առանց սահմանի, Սևծովյան համագործակցության երկրներ, Բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների միջպետական խորհուրդ, Շվեդիայի ու Էստոնիայի փրկարարական ծառայությունների, ԱՊՀ միջպետական խորհրդի, Համաշխարհային բանկի, JICA-ի, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC), Ասիական աղետների նվազեցման խորհրդի (ADRC) և Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ) երկրների Աի հարցերով միջպետական խորհրդի հետ:

Համագործակցության մեծ դաշտ է նախանշված Էներգետիկայի և բնական պաշարների, Գյուղատնտեսության, Տարածքային կառավարման, Քաղաքաշինության, Կապի և տրանսպորտի, Հայաստանի կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի և այլ նախարարությունների ու

գերատեսչությունների համար (ՀԱԷԿ, ՋԷԿ-եր, ջրամբարներ, պոչամբարներ, ճանապարհներ, գազատարներ և այլ վտանգավոր օբյեկտներ) :

Աի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումները ծավալում են հետևյալ գործունեությունը՝

ա) Հայաստանի Փրկարար ծառայություն (ՀՓԾ)

Հանդիսանում է Արտակարգ իրավիճակների նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին, որն իրականացնում է քաղաքացիական պաշտպանությունը և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությունը, ինչպես նաև համակարգում է արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման աշխատանքները: Այն նաև համակարգում է աշխատանքները տեղական կառավարման մարմինների մակարդակում իր տարածքային վարչությունների միջոցով:

Ծառայության ենթակայության տակ գտնվող կառույցներն են՝ ՃԿՊԱ, մարզային վարչություններ, Պետական հրդեհային տեսչություն, 60 հրշեջ փրկարարական ջոկատներ, հատուկ ջրափրկարարական և լեռնափրկարարական ջոկատ, Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության կենտրոն:

ՀՓԾ-ն համագործակցում է ՀՀ կառավարության, Հայաստանում գործող աղետների կառավարման միջազգային կազմակերպությունների հետ՝ անկախ իրավական ձևից, Շվեդիայի փրկարարական գործակալության, Էստոնիայի փրկարարական ծառայության, ԱՄՆ Կանգասի նահանգի ազգային զվարդիայի, Ֆրանսիայի Լիոնի համալսարանի և ԱՊՀ երկրների նմանատիպ կառույցների հետ:

բ) «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալություն

«Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալությունն իրականացնում է Հայաստանի տարածքում սեյսմիկ ռիսկերի նվազեցման ուղղությամբ տարվող աշխատանքների համակարգումը, ինչպես նաև հնարավոր երկրաշարժերի կանխատեսման համակարգերի կառավարման ապահովումը: Այն ունի տարածքային չորս ստորաբաժանում՝ Հյուսիսային, Հարավային, Կենտրոնական և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, որոնք հիմնականում զբաղվում են իրենց տարածքներում սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքներով:

ՍՊԱԾ-ի կազմում գործում է նաև ՀՀ ՍՊԱԾ կառուցվածքների սեյսմակայունության կենտրոնը, որն Իրականացնում է կառուցապատման տվյալների բազայի ստեղծման և վարման, սեյսմիկ վտանգի գնահատման և նվազեցման քաղաքականության և ռազմավարության մշակման աշխատանքներ: Իր ենթակայության տակ ունի հինգ փորձարարական լաբորատորիա:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ Հայաստանի տարածքի և Երևան քաղաքի սեյսմիկ վտանգի նվազեցման հանրապետական ծրագիր, սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների սեյսմիկ խոցելիության գնահատում, Հայաստանի տարածքի ուժեղ շարժումների տվյալների բազայի հավաքում և մշակում, Հայաստանի և Երևան քաղաքի կառուցապատման տվյալների բազայի ստեղծում և մշակում՝ սեյսմիկ վտանգի գնահատման նպատակով, Երևան քաղաքի նախնական սեյսմիկ վտանգի գնահատում, Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի վերջնական սեյսմիկ վտանգի գնահատում: Վերոնշյալ վտանգի գնահատման քարտեզները հիմք են ծառայել համայնքների գոտևորման քարտեզների, տարաբնակեցման ու զարգացման համար:

ՄՊԱԾ-ն իրականացնում է Հայաստանի, Երևանի, Սպիտակ, Մարալիկ և Արթիկ քաղաքների սեյսմիկ ռիսկի գնահատում և սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրեր:

ՀՀ արտակարգ իրավիճակների, տարածքային կառավարման և այլ նախարարությունների մասնակցությամբ իրականացվել են ուսումնասվարժան քննարկումներ, սեմինար խորհրդակցություններ և բազմաթիվ կանխարգելիչ գործողություններ՝ համաձայն երկարաժամկետ պետական ծրագրերի մեջ նախանշված միջոցների, որտեղ կարևոր դերակատարություն են ունեցել Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինները, Գիտությունների Ազգային Ակադեմիան (ԳԱԱ) և ԵՊՊԱ:

ՄՊԱԾ-ը համագործակցում է բոլոր գերատեսչությունների, տարածքային կառավարման մարմինների, ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի, Ռադիոֆիզիկայի ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, ՄԱԶԾ-ի, Հայկական կարմիր խաչի ընկերության, Իրանի Իսլամական Հանրապետության սեյսմոլոգիայի և սեյսմակայուն շինարարության կենտրոնի, Մակեդոնիայի սեյսմոլոգիայի և սեյսմակայուն շինարարության կենտրոնի և ADRC-ի հետ:

գ) Հիդրոդերևութաբանական և մոնիտորինգի պետական ծառայություն

Իրականացնում է հիդրոդերևութաբանական գործունեության բնագավառի պետական քաղաքականության ու ռազմավարության մշակումը և իրագործումը, հիդրոդերևութաբանական երևույթների ռեժիմային և հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների, կանխատեսումների աշխատանքները:

Տեղական և հանրապետական մակարդակներում տեղեկատվական սպասարկում է իրականացնում բոլոր ոլորտների մարմինների համար: Կառույցի կազմում գործում են 46 օդերևութաբանական կայան, 7 հիդրոլոգիական կայան և 97 դիտակետ, որոնցից երեքը՝ Ազատ, Ապարան, Ախուրյան ջրամբարների վրա:

Ոլորտում ներկայումս ծրագրեր չեն իրականացվում:

Մեծ է համագործակցությունը, հիմնականում՝ օպերատիվ տեղեկատվության բնագավառում, որտեղ համախմբված են ՀՀ բնության պաշտպանության, էներգետիկայի և բնական պաշարների, կապի և տրանսպորտի, առողջապահության, արտակարգ իրավիճակների, գյուղատնտեսության նախարարությունները և մի շարք գերատեսչություններ, որոնց գործունեությունը կապված է կլիմայական պայմանների հետ (Քաղաքացիական ավիացիայի վարչություն), ինչպես նաև Հայաստանի կարավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն, Հայաստանի նախագահի և վարչապետի աշխատակազմը:

Համագործակցություն է ծավալված նաև մասնավոր սեկտորի, Համաշխարհային բանկի, Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) և ՄԱԶԾ-ի հետ:

դ) Պետոճերվների գործակալություն

Աղետի հետևանքների վերացման ոլորտում իրականացնում է բնակչության, ինչպես նաև արձագանքման ու վերականգնողական գործողությունների ընդհանուր նյութական կամ նյութատեխնիկական ապահովում: Գործակալությունն իր կազմում ունի երեք կազմակերպություն, որոնք ներկայումս իրավական մասով վերակազմավորման փուլում են:

Իրականացվող ծրագրեր չկան:

Համագործակցում է պետական կառավարման բոլոր մարմինների և ԱՊՀ երկրների նմանատիպ կառույցների հետ:

ե) Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն

Իրականացնում է արտադրական վտանգավոր օբյեկտներում տեխնիկական անվտանգության ապահովման նկատմամբ վերահսկողությունը, տեխնիկական անվտանգության կանոնների պահպանման պահանջների սահմանումը և ապահովումը: Իրականացվող ծրագրեր չկան:

5.1.2 Առողջապահության նախարարություն

Ապահովում է առողջապահական հարցերի մասին բնակչության իրազեկումը, համապատասխան եզրակացություն է տալիս աղետի հետևանքների սանիտարահամաճարակային իրավիճակի վերաբերյալ, իրականացնում է հակահամաճարակային և կարանտինային միջոցառումներ, կազմակերպում է օպերատիվ բժշկական խմբերի՝ ժամանակին աղետի գոտի հասնելը և ապահովում առաջնային միջոցառումների ձեռնարկումը, իրականացնում է տուժած բնակչության բժշկական սպասարկումը, տարահանման ժամանակ ապահովում է տարահանվող բնակչության բուժ սպասարկումը և այլն:

Նախարարության ենթակայության տակ գտնվող կառույցներն են՝ բուժմիավորումներ, հիվանդանոցներ, ծննդատներ, ամբուլատոր պոլիկլինիկական հաստատություններ, Պետական հիգիենիկ համաճարակային տեսչություն, հոգեբուժական կլինիկաներ և դիսպանսերներ:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ աղետների բժշկության խմբերի նախապատրաստում Վայոց ձորի և Տավուշի մարզերում SDC ֆինանսավորմամբ, Աբ Գրիգոր բժշկական կենտրոնի հետ համատեղ աղետների բժշկության մարզային կառույցների հիմնում:

Նախարարությունը համագործակցում է պետական կառավարման բոլոր մարմինների հետ, ինչպես նաև Առողջապահական համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հետ:

5.1.3 Արտաքին գործերի նախարարություն

Աղետների կառավարման գործում ապահովում է միջազգային համագործակցությունը, միջպետական համաձայնագրերի և պայմանագրերի մշակման և կնքման գործընթացները, հումանիտար օգնության կազմակերպման գործընթացները, միջազգային փրկարարական ուժերի և կառույցների մասնակցությունը ԱԻ հետևանքների վերացման աշխատանքներին և այլն:

Հայաստանի Ազգային անվտանգության խորհրդի, Արտակարգ իրավիճակների, էներգետիկայի և բնական պաշարների, Քաղաքաշինության, Կրթության և գիտության, Բնապահպանության, Կապի և տրանսպորտի, Գյուղատնտեսության, Ֆինանսների և այլ նախարարությունների համագործակցության արդյունքում, Արտաքին գործերի նախարարության ջանքերով միջպետական պայմանագրերի հիման վրա իրականացվել են մի շարք միջպետական ծրագրեր, որոնց մասնակցել են Շվեդիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Իրանի Իսլամական Հանրապետության, Հնդկաստանի, Չինաստանի, ԱՄՆ-ի, Արգենտինայի, Գերմանիայի, Ռուսաստանի Դաշնության, Էստոնիայի, Վրաստանի, Ուկրաինայի, Մեծ Բրիտանիայի և մի շարք այլ երկրների փորձագետներ և պետական պատվիրակություններ: Այս ոլորտում գործունեությունն իրականացվել է ըստ բնակչության պաշտպանության բնագավառում միջազգային համագործակցության հայեցակարգի և գիտակցելով միջազգային համագործակցության դերը աղետների կառավարման ոլորտում:

Աշխատանքներն իրականացվում են միջգերատեսչական համագործակցության շրջանակներում, ՄԱԿ-ի համապատասխան կառույցների, Սևծովյան տնտեսական համագործակցության անդամ պետությունների, ԱՊՀ անդամ երկրների համապատասխան գործընկերների, ՆԱՏՕ-ի անդամ երկրների, Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի շրջանակներում մի շարք եվրոպական երկրների համապատասխան կառույցների հետ, Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ազգային ընկերությունների և այլ կազմակերպությունների հետ:

5.1.4 Բնապահպանության նախարարություն

ԱԿ ոլորտում իրականացնում է, էկոլոգիական անվտանգության կարգավորումն ու վերահսկումը, հողերն աղտոտումից պահպանելու և աղտոտվածության գնահատման գործընթացները, մթնոլորտային արտանետումների կարգավորումն ու վերահսկումը, բնական արգելոցների անվտանգության բարձրացման գործընթացները, կլիմայի փոփոխության հետ կապված հիմնախնդիրները և այլն:

Նախարարության ենթակայության կառույցներն են՝

- Բնապահպանության հանրապետական տեսչությունը.
- Կենսատեսակների կառավարման և Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունները.
- Բնապահպանական փորձաքննության պետական ոչ առևտրային կազմակերպությունը (ՊՈԱԿ).
- Շրջակա միջավայրի վրա ներգործության ՊՈԱԿ.
- Ազգային պարկերը.
- Հատուկ պահպանվող տարածքները:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ հողերի կառավարման ծրագիր՝ աղքատության նվազեցման համար, էռոզիայի ենթարկված հողերի վերականգնման ու սողանքների դեմ պայքարի ծրագրերի մշակում: Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի միջոցով բնօգտագործման ռիսկերի գնահատում, ադապտացիոն ծրագրեր ՄԱԶԾ-ի և Գլոբալ բնապահպանական ֆոնդի հետ:

Նախարարությունը համագործակցում է պետական կառավարման բոլոր մարմինների հետ, ինչպես նաև Ազգային անվտանգության խորհրդի, ՄԱԶԾ-ի, ԳՏՀ-ի, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ), ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) և Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) հետ:

5.1.5 Գյուղատնտեսության նախարարություն

Նախարարությունը ԱԿ համակարգում իրականացնում է բույսերի կարանտինային, անասնահակահամաճարակային միջոցառումներ, հակասելավային միջոցառումներ, հանդիսանում է ՀՀ ջրային օրենսգրքով նախատեսված գետերի ջրերի վնասակար ներգործության կանխման և վերացման միջոցառումների կազմակերպման և իրականացման պետական կառավարման լիազոր մարմին:

Նախարարության ենթակայության կառույցներն են՝

- Հողերի օգտագործման մեխորացիայի վարչությունը.
- Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիրը.
- Հայանտառ ՊՈԱԿ:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ գետերի և հեղեղատարերի ափերի ամրացման և հունների մաքրման աշխատանքներ և գյուղական տարածքների

տնտեսական զարգացման ծրագիր (Ճապոնիայի կառավարության դրամաշնորհով), հակակարկտային համակարգերի ձեռք բերում և տեղադրում: Գյուղատնտեսության նախարարության և ԱԻ նախարարության համագործակցության արդյունքում, Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ, միջոցառումներ են իրականացվել 22 ջրամբարների անվտանգության մակարդակի բարելավման ուղղությամբ: Այս նախարարությունների համատեղ ջանքերով Հայաստանում ստեղծվել է հակակարկտային համակարգ:

Նախարարությունը համագործակցում է նաև պետական կառավարման բոլոր մարմինների հետ, Համաշխարհային բանկի, ԳՏՀ-ի, Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID), ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) հետ:

5.1.6 Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

Նախարարությունը ԱԿ համակարգում իրականացնում է ՀԱԷԿ-ի միջուկային կամ ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումներ, ՀԱԷԿ-ի անվտանգության բարձրացման, հիդրոէլեկտրակայաններին պատկանող ջրամբարների անվտանգության բարձրացման, անվտանգ շահագործման միջոցառումներ, էներգետիկ համակարգերի, կառույցների անվտանգ շահագործման և կայուն աշխատանքի ապահովման՝ ինչպես առօրյա պայմաններում, այնպես էլ աղետների ծագման դեպքում և այլն:

Ներկայումս ԱԿ ոլորտում իրականացվող ծրագրեր չկան:

Նախարարությունը համագործակցում է պետական կառավարման բոլոր մարմինների հետ

5.1.7 Կրթության և գիտության նախարարություն

Կրթության և գիտության նախարարությունն (ԿԳՆ) իրականացնում է աղետների կառավարման հարցերով ուսուցման կազմակերպումը հանրապետության բոլոր ուսումնական հաստատություններում: Նրա ենթակայության տակ գտնվող կառույցներն են՝ Գիտությունների ազգային ակադեմիան, հանրակրթական դպրոցներ, միջին մասնագիտական կրթօջախներ, արհեստագործական կրթօջախներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ և գիտահետազոտական ինստիտուտներ:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ դասագրքերի հրատարակում ավագ դասարանների համար և տարրական դասարաններում ԱԿ հիմնահարցերի ներդրում: Իրականացվել են դպրոցական համակարգի համար նախատեսված դասագրքերի և ծրագրերի ներդրման աշխատանքներ, որոնց մասնակցել են ՃԿՊԱ-ի, Պաշտպանության, Արտակարգ իրավիճակների նախարարությունները:

Նախարարությունը համագործակցում է պետական կառավարման բոլոր մարմինների և ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի (ՃԿՊԱ) հետ:

5.1.8 Տարածքային կառավարման նախարարություն

Աղետների կառավարման գործում տարածքային կառավարման նախարարությունը (ՏԿՆ), ըստ կանոնադրության, համակարգողի դեր ունի Տարածքային կառավարման մարմինների համար, և առանձին դեպքերում՝ ղեկավարի դեր, քանի որ նախարարը հանդիսանում է երկրի փոխվարչապետ:

Նախարարության ենթակայության կառույցներն են՝

- Ջրային տնտեսության պետական կոմիտեն:

- Ազգային արխիվը.
- Միգրացիոն գործակալությունը:

Նախարարությունը համագործակցում է «Գերմանական տեխնիկական համագործակցություն» (ԳՏՀ) կազմակերպության, Համաշխարհային բանկի և JICA-ի հետ, ինչպես նաև իրականացնում է օպերատիվ ծրագրեր՝ արձագանքման նպատակով:

Նախարարությունը համագործակցում է պետական կառավարման բոլոր մարմինների հետ:

ՏԿՆ Զրային տնտեսության պետական կոմիտե

Տարածքային կառավարման նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, որը մշակում և իրականացնում է պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման ու օգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Կոմիտեի ենթակայության կառույցներն են՝ Հրազդան ջրառ ՓԲԸ, Ախուրյան ջրառ ՓԲԸ, Դեբեդ ջրառ ՓԲԸ, Շիրակ ջրառ ՓԲԸ, Լոռի ջրմուղ կոյուղի ՓԲԸ, Նորակունք ջրմուղ կոյուղի ՓԲԸ, Հայ ջրմուղ-կոյուղի ՓԲԸ, Երևան ջուր ՓԲԸ և Մելիորացիա ՓԲԸ:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ գրունտային ջրերի մոնիթորինգ Արարատյան հարթավայրում և ոռոգելի ու չորացված հողերի մելիորատիվ վիճակի կադաստր:

Զրային տնտեսության պետական կոմիտեն համագործակցում է պետական կառավարման բոլոր մարմինների հետ:

5.1.9 Քաղաքաշինության նախարարություն

Նախարարության դերը ԱԿ գործում հետևյալն է. սեյսմակայուն շինարարությանը վերաբերող գիտական հետազոտությունների և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների, սեյսմակայուն շինարարության բնագավառի նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի մշակման գործընթացի, տարածքների հետազոտության և ճարտարագիտական պաշտպանության աշխատանքների կազմակերպում և համակարգում: Աղետի գոտու բնակ ֆոնդի վերականգնում: Նախարարությունը պատասխանատու է նաև սանիտարահամաճարակային սպառնալիքի դեպքում մահացածների մարմինների դիակեզման և հուղարկավորման համակարգման համար:

Ներկայումս ԱԿ ոլորտում իրականացվող ծրագրեր չկան: Սակայն նախկինում իրականացվել են մի շարք համատեղ ծրագրեր: Մասնավորապես՝ սեյսմակայուն շինարարության ազգային նորմերի մշակումը և հաստատումը իրականացվել է ՀՀ քաղաքաշինության, ԱԻ նախարարությունների համագործակցությամբ: Փոխհամաձայնեցված գործողությունների արդյունքում ճապոնիայի կառավարության և Հայաստանի կառավարության միջև կնքված պայմանագրերի շնորհիվ իրականացվել է սողանքների կառավարման հետազոտական ծրագիրը, որին մասնակցել են Քաղաքաշինության, ԱԻ, ԱԳ նախարարությունները և ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը: Այս ծրագիրը մեծապես նպաստեց սողանքային գոտիներում գտնվող բնակավայրերի վրա ուշադրություն հրավիրելուն և ազգային քաղաքականության ձևավորմանը:

Նախարարությունը համագործակցում է պետական կառավարման բոլոր մարմինների հետ:

Եզրակացություն

Վերլուծելով նախարարությունների դերը աղետների կառավարման համակարգում հանգում ենք այն եզրակացության, որ դերերի բաժանումը, համագործակցման մեխանիզմները, իրավունքների և պարտականությունների բաժանումը հստակ կանոնակարգված է: Ամեն մի գերատեսչություն պատասխանատվություն է կրում աղետների կառավարման իր ուղղության համար: Այս գլխում ներկայացված չեն մի շարք նախարարություններ, սակայն ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ բոլոր նախարարությունները ընդգրկված են այս գործընթացում: Նրանց միջև գործում է հստակ համագործակցություն, որոնք կանոնակարգվում են տարբեր որոշումներով, հրամանագրերով, համապատասխան օրենքներով:

Բերենք համագործակցության մի քանի օրինակներ:

Գոյություն ունի Հայաստանի Սեյսմիկ Ռիսկի նվազեցման 35 տարվա ռազմավարական ծրագիր: Այս ծրագրում ընդգրկված են աղետների կառավարման համակարգի բոլոր կառույցները՝ աղետների կառավարման հորիզոնական և ուղղահայաց դասավորությամբ: Վերջիններս ամեն տարի ներկայացնում են սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ իրենց մասով իրականացված աշխատանքների հաշվետվություն և գալիք տարվա միջոցառումների պլաններ: Այս գործընթացը վերահսկվում է կառավարության կողմից:

Կառավարության որոշման համաձայն գոյություն ունի հատուկ կարևորություն ունեցող օբյեկտների կայուն աշխատանքի և անվտանգության ապահովման միջոցառումների մասին հայտ, որը ներկայացնում են տարբեր գերատեսչությունների, պետական կառավարման ՏԻՄ ենթակայության տակ գտնվող օբյեկտները: Վերջիններս հաշվետվություններ են ներկայացնում օբյեկտների իրավիճակի, անհրաժեշտ աշխատանքների, թերությունների և նրանց շտկման աշխատանքների վերաբերյալ: Այս գործընթացը վերահսկվում է ԱԻՆ կողմից:

Նախարարությունների միջև համագործակցության ամենացայտուն օրինակը աղետների կառավարման մասին ցանկացած որոշման կայացման գործընթացն է: Նման որոշման նախագիծը անցնում է բոլոր նախարարություններով, տրվում է համապատասխան եզրակացություն բոլորի կողմից, իսկ հաստատմանը ներկա են գտնվում բոլոր նախարարությունները:

Աղետների կառավարման գործընթացում իրենց ուրույն դերակատարությունն ունեն Տեղական կառավարման (ՏԿ) և Տեղական ինքնակառավարման (ՏԻ) մարմինները: Մեր կողմից չեն ուսումնասիրվել այդ մարմինների ներգրավվածությունը և դերը, սակայն նույնիսկ նախարարությունների գործունեության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հստակ կանոնակարգված են ՏԿ և ՏԻ մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Վերջիններիս գործունեությունը ԱԿ համակարգում կազմակերպվում, իրականացվում և վերահսկվում է մարզային ՓԾ վարչությունների կողմից: Բոլոր մարզերում գոյություն ունեն բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնցով զբաղվում են նախարարությունները, սկսած գյուղատնտեսական խնդիրներից մինչև բնակչության պաշտպանությանը վերաբերող խնդիրները: Այս գործընթացն առանց ՏԿ և ՏԻ մարմինների ներգրավման և համագործակցության անհնարին է պատկերացնել:

Այս հատվածի վերլուծությունը ցույց տվեց, որ գոյություն ունեն նաև որոշակի խնդիրներ, մասնավորապես՝ ոչ բոլոր գերատեսչություններն ունեն աղետների կառավարման վարչություններ կամ մասնագետներ: Անդրադառնալով այս հարցին անհրաժեշտ է նշել բոլոր գերատեսչություններում աղետների կառավարման պատասխանատու մասնագետ ներգրավելու անհրաժեշտությունը, որը պետք է համապատասխան պատրաստվածություն ունենա աղետների կառավարման բնագավառում: Այս կադրերի պատրաստման և վերապատրաստման խնդիրը նույնպես միջգերատեսչական համագործակցության կարևոր խնդիրներից է: Այն հիմնական

պատճառն է այն բացթողման, որ որոշ նախարարությունների տարբեր աստիճանի մասնագետներ կամ ղեկավարներ հստակ չեն պատկերացնում իրենց անելիքները ԱԿ համակարգում:

Թույլ կողմերից կարելի է նշել նաև այն համգամանքը, որ ջրամբարները բաժանված են՝ ըստ նշանակության, էներգետիկայի նախարարության, որի պատասխանատվության տակ են Հիդրոէլեկտրակայաններ ունեցող ջրամբարները, և գյուղնախարարության միջև, որի ենթակայության տակ են ոռոգման համար նախատեսված ջրամբարները: Այստեղ շատ կարևոր է տվյալ տարածքի տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավվածությունը ջրամբարների անվտանգության հետ կապված խնդիրներում: Միայն ազդարարման և տարահանման պլաններն ու միջոցառումների մեջ ներգրավվածությունը բավական չէ տվյալ համայնքների անվտանգության համար: Այս խնդրին պետք է մոտենալ բոլոր կողմերի ներգրավվածության սկզբունքով:

Առողջապահության նախարարության թույլ կողմերից կարելի է նշել աղետների ժամանակ և հետո տուժած բնակչության հոգեբանության խնդիրների կարգավորման բլոկի թուլությունը: Նման կառույց չկա, որը զբաղվի այս հիմնահարցով:

Հոգեբանական պատրաստվածության ինստիտուտները թույլ են նաև փրկարարական աշխատանքների կազմակերպման գործընթացում ներգրավված բոլոր կառույցներում:

Ուսումնասիրության ընթացքում բացահայտվել են նաև մի շարք կրկնակումներ, որոնցից հարկ է նշել այն, որ սողանքների հիմնահարցերով զբաղվում են՝ Տարածքային կառավարման նախարարությունը, Գյուղնախարարությունը, Բնապահպանության նախարարությունը, Տարածքային կառավարման մարմինները և Տեղական ինքնակառավարման մարմինները: Այս դաշտում շատ թույլ է կամ ընդհանրապես չկա համագործակցության հստակ կանոնակարգված դաշտ: Այստեղ պետք է ձևավորել միասնական համակարգ, որի օգնությամբ կկարգավորվեն սողանքների անվտանգության ուղղությամբ իրականացվող միջոցառումները:

Իսկ օրինակ սեյսմիկ ռիսկի շրջայնացման քարտեզներով, սեյսմակայուն շինարարության նորմերով զբաղվում են Քաղաքաշինության նախարարությունը և ՍՊԱԾ-ը: Այստեղ նույնպես բացակայում է համագործակցությունը: Ամեն կառույց իրականացնում է իր սեփական ուսումնասիրությունները առանց համադրելու դրանք մյուս կառույցի ունեցած տվյալների հետ:

5.2 ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանրահայտ է, որ աղետների կառավարումը շարունակական գործընթաց և փոխկապակցված գործողությունների շղթա է, որում իր հստակ դերն ունի աղետների վտանգի կառավարման փուլը: Այն նպատակ ունի վտանգների բացահայտման և վերլուծության, աղետներին նախապատրաստվելու միջոցով նվազեցնել բնակչության խոցելիությունը աղետների նկատմամբ և բարձրացնել նրա կարողությունները, ինչպես նաև աղետների կանխարգելման գործողությունների միջոցով կրճատել աղետների հնարավոր հետևանքները: Այս համատեքստում էական է գիտական և կրթական մարմինների ուսումնասիրությունը, քանզի թե՛ վտանգների գնահատումը և թե՛ աղետների վերաբերյալ իրազեկման բարձրացումը կամ ուսուցումը պետք է լինեն գիտականորեն հիմնավորված և պետական լիազոր մարմինների կողմից ընդունված ու հաստատված: Խորհրդատուների խումբը կազմել է նման կառույցների ցուցակ, որոնց ներկայացուցիչների հետ հետազայում անցկացվել են հարցազրույցներ և հարցումներ՝ աղետների կառավարման գործում նրանց դերը, կառուցվածքը, իրականացվող ծրագրերը և տեղական համագործակցությունը սահմանելու նպատակով: Հարցման արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը:

5.2.1 ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ

Կատարում է համալիր տվյալների շտեմարանների ստեղծում՝ երկրաբանական, երկրաֆիզիկական, սեյսմոլոգիական, երկրադինամիկական, տեղագրական, ենթակառուցվածքների և ջրաբանական: Ավելին, իրականացնում է տարածքների քարտեզագրում աշխարհագրական տեղեկատվական համակարգերում (GIS), բնական վտանգների և ռիսկերի գնահատում, երկրադինամիկական և սեյսմոլոգիական գործընթացների մոնիթորինգ և ջրի ապարների ֆիզիկաքիմիական և մեխանիկական հատկությունների լաբորատոր ուսումնասիրություններ: Ինստիտուտը ԳԱԱ ենթակայության տակ է, նրա կազմում գործում են Գառնիի երկրաֆիզիկական դիտակայանը և տարածքային երկրաբանական հեռակետեր Լոռու, Սյունիքի ու Գեղարքունիքի մարզերում:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ երկրաֆիզիկական ուսումնասիրություններ, սեյսմիկ շրջանացում, բնական վտանգների և շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության գնահատում, պատվարների փլուզման վտանգի և ջրածածկման գոտիների գնահատում GIS տեխնոլոգիաների միջոցով, ինչպես նաև շրջակա միջավայրի աղտոտման բնույթի դինամիկայի և աղտոտման մակարդակի գնահատում:

Համագործակցում է պետական կառավարման բոլոր մարմինների հետ, ԱՊՀ բոլոր և մի շարք այլ երկրների նմանատիպ գիտահետազոտական ինստիտուտների հետ:

5.2.2 ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն

Կենտրոնն իրականացնում է լանդշաֆտների կայունության և էկոլոգիական ռիսկերի գնահատում, աղտոտման մակարդակների գնահատում, շրջանացում և լաբորատոր վերլուծություն:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ աղետների և էկոլոգիական ռիսկերի վերլուծության մեթոդաբանության մշակում, լանդշաֆտների կայունության գնահատում, քիմիական տարրերով աղտոտման ազդեցության տակ գտնվող բնակչության ռիսկային խմբերի հայտնաբերում, ծանր մետաղների և ճառագայթային վտանգների գնահատում և վերլուծություն, տրոֆիկական շղթաների մեջ վնասակար տարրերի հայտնաբերում և շրջակա միջավայրի վրա վտանգավոր օբյեկտների ազդեցության համալիր գնահատում:

Համագործակցում է ԱԻ միջպետական խորհրդի, Ռուսաստանի Դաշնության նմանատիպ ինստիտուտների և այլ կազմակերպությունների հետ, ծավալում է նաև համագործակցություն համատեղ գիտական հետազոտությունների միջպետական ծրագրի շրջանակներում:

5.2.3 Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ

Բնական աղետների ուսումնասիրման, կանխատեսման և դրանց դեմ պայքարի միջոցների մշակման ուղղությամբ խորհրդատվություն և աշխատանքների կատարում՝ աշխարհագրական, գեոմորֆոլոգիական, երկրաբանական, երկրաֆիզիկական և երկրաքիմիական մեթոդների կիրառմամբ: Ֆակուլտետի կազմում գործում է Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) երկրաբանական հետազոտությունների կենտրոն ՍՊԸ-Ը:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ բնական լանջերի կայունության և սողանքային երևույթների ուսումնասիրություն և Սևանի ավազանի գեոէկոլոգիական խնդիրների ուսումնասիրություն:

Համագործակցում է Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության, ԳԱԱ, Ջրային պրոբլեմների ինստիտուտի, Ճարտարագիտական պետական համալսարանի քիմիական ֆակուլտետի, ՍՊԱԾ-ի, Հայպետհիդրոմետի և Հայջրնախագիծ ինստիտուտի հետ:

5.2.4 Գոնաժամային կառավարման պետական ակադեմիա

Կազմակերպում և իրականացնում է աղետների կառավարման ուսուցում բոլոր պետական, պետական կառավարման, տեղական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների համար, ինչպես նաև ոլորտի համար կադրեր է պատրաստում և վերապատրաստում:

Ակադեմիան գործում է Հայաստանի փրկարար ծառայության կազմում և ունի քոլեջ Ստեփանավան քաղաքում:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ ՄԱԶԾ-ի հետ Արարատի մարզում ուսուցման կազմակերպում, ԳՏՀ-ի հետ Լոռու և Տավուշի մարզերում ուսուցման կազմակերպում, Հայ-շվեդա-էստոնական համագործակցության շրջանակներում դպրոցներում տարիանման ուսուցում, SDC-ի «Արձագանք» ծրագրով հրշեջների ուսուցում:

Ակադեմիան իրականացնում է նաև աղետների ռիսկի, խոցելիության, կարողությունների, տարբեր տեսակի վտանգավոր երևույթների ծագման, զարգացման, հնարավոր հետևանքների վերաբերյալ գիտական ուսումնասիրություններ և հետազոտություններ, մշակում է բնակչության ուսուցման տարբեր տեսակի ուսումնական նյութեր, տարբեր խոցելի խմբերի հետ ուսուցման կազմակերպման մեթոդներ, կազմակերպում է գիտական և ուսումնական սեմինարներ՝ աղետների կառավարման և բնակչության ուսուցման վերաբերյալ և այլն:

Համագործակցում է բոլոր պետական կառավարման, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական և միջազգային կազմակերպությունների, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Շվեդիայի, ԱՄՆ, Ճապոնիայի, Չինաստանի և մի շարք այլ երկրների համապատասխան ուսումնական հաստատությունների հետ:

Եզրակացություն

Նշված հաստատությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երկրում առկա է հզոր գիտական պոտենցիալ, որը բազմաբնույթ աշխատանքներ, ուսումնասիրություններ և ուսուցում է իրականացնում ԱԿ բնագավառում: Այս կառույցների աշխատանքներն իրենց մեջ ներառում են աղետների վտանգների կարողությունների, խոցելիության գնահատման, վերլուծության, մոնիթորինգի վերաբերյալ ուսումնասիրություններ, ինչպես նաև աղետների կանխարգելման և կանխման միոցառումների մշակումներ:

Անհրաժեշտ է ստեղծել համակարգող մեկ մարմին, որի միջոցով կկանոնակարգվեն այս կառույցների աշխատանքները մեկ ընդհանուր նպատակի իրականացման համար, որը հնարավորություն կտա այս կառույցների կողմից իրականացվող աշխատանքները բերել համագործակցության մեկ ընդհանուր հարթակի և ավելի արդյունավետ դարձնել վերջիններիս աշխատանքը:

5.3 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում գործունեություն են ծավալում բազմաթիվ միջազգային կազմակերպություններ, որոնց մի մասն իրականացնում է ծրագրեր աղետների կառավարման բնագավառում: Աղետների կառավարման գործընթացն իր մեջ ներառում է

նաև միջազգային համաձայնագրերի և երկրի ստանձնած պարտավորությունների կատարում, որը մասամբ իրականացվում է երկրում գործող այնպիսի միջազգային կառույցների հետ ինչպիսիք են ՄԱԶԾ-ն, Համաշխարհային բանկը, ԵՄ և այլն:

Շատ դեպքերում միջազգային կազմակերպություններն իրականացնում են սեփական ծրագրերը առանց համագործակցելու նմանատիպ այլ կառույցների հետ: Ուստի հստակ պատկերը հասկանալու համար ուսումնասիրվել են նաև միջազգային կազմակերպությունները ըստ ԱԿ ոլորտում ունեցած դերի, իրականացվող ծրագրերի և համագործակցության՝ ստացել ենք հետևյալ պատկերը:

5.3.1 Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր

ՄԱԶԾ դերակատարությունը կայանում է ազգային և տեղական մակարդակներում ԱԿ ոլորտի կարողությունների զարգացումը՝ առավելապես կենտրոնանալով աղետների կանխարգելման և նվազեցման վրա:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ «Աղետներին պատրաստվածության և ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացում» (2007-2009) առաջին փուլ, որի նպատակն էր Արարատի մարզում իրականացնել տեղական մակարդակում ռիսկերի կառավարման փորձնական ծրագիր, բարձրացնել ազգային իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև զարգացնել Հայաստանի փրկարար ծառայության լրատվական կենտրոնի կարողությունները:

Հայաստանում նշված գործընթացների շարունակությունն ապահովելու և ծրագրի պլանի մնացած ոլորտները հասցեագրելու նպատակով՝ ծրագրի երկրորդ փուլի միջոցառումները (2009-2010) նպատակաուղղված են աջակցելու Հայաստանում աղետների ռիսկի կառավարման օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգի հզորացմանը, ինչպես նաև աղետների ռիսկի նվազեցման ազգային համապարփակ ռազմավարության մշակմանը:

2008թ-ից ի վեր, ՄԱԶԾ-ն ԱԻՆ հետ հանդիսանում է աղետների կառավարման համակարգող խմբի համանախագահ: 2009թ. մարտի դրությամբ, այս խումբը համատեղվեց ԱԿ թիմի հետ, որի ղեկավարն է ՄԱԿ-ի մշտական համակարգողը և որում ընդգրկված են ՄԱԿ-ի բոլոր կառույցները, ԱԻՆ-ը, Փրկարար ծառայությունը, ՀԿԽԸ, մի շարք միջազգային կառույցներ, դոնորներ և տեղական ՀԿ-ներ: Թեև ԱԿ թիմի հիմնական ուղղվածությունը աղետների պատրաստվածությունն ու արձագանքումն է, այն նաև հնարավորություն է ընձեռում ծրագրային քննարկումներ անցկացնելու, ուստի հանդիսանում է աղետների կառավարման ոլորտի համակարգման և տեղեկությունների փոխանակման միակ թիմը:

Համագործակցում է ԱԻՆ-ի, Տարածքային կառավարման նախարարության, ՀՓԾ, ԵԿՊԱ, ՀԿԽԸ և երկրում գործող բոլոր միջազգային կազմակերպությունների հետ:

5.3.2 ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (UNICEF) հիմնական գործունեությունը աղետների դեպքում երեխաներին աջակցություն ցույց տալն է, ԱԻ դեպքում կանանց և երեխաների առաջնային առողջապահական կարիքների, երեխաների համար բարեկամական միջավայրի ապահովումը, որտեղ նրանք կարող են ընդգրկվել բնականոն կենսակերպ ապահովող գործողություններում, ինչպես նաև երեխաների պաշտպանությունը ծնողներից բաժանվելուց և նրանց ընտանիքների վերամիավորման ապահովումը:

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն ունի նաև նախապես պահեստավորված ԱԻ գույք, որում կան ընտանիքների համար նախատեսված հիգիենիկ պարագաների արկղիկներ,

ուսումնական պարագաներ, առողջապահական արկղիկներ, անկողիններ, վերնակներ և այլն:

Ոլորտում իրականացվող ծրագրերը, տարվա ընթացքում կհիմնվի ԱԻ պայմաններում երեխաների սոցիալ-հոգեբանական աջակցության տեխնիկական թիմ, համապատասխան ֆինանսավորման դեպքում նախատեսվում է իրականացնել «Արտակարգ իրավիճակներին դպրոցների նախապատրաստում» ծրագիր, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում կստեղծվի նոր համակարգ՝ ԱԻ դեպքում երեխաների տեղաշարժը վերահսկելու նրանց ընտանիքների հետ կապի խզումը բացառելու նպատակով:

Համագործակցում է ԱԻՆ, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Առողջապահության և Կրթության ու գիտության նախարարությունների հետ: Միաժամանակ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը հանդիսանում է ԱԿ ընդլայնված թիմի անդամ:

5.3.3 Համաշխարհային առողջապահական կազմակերպություն

Կազմակերպության հիմնական նպատակն է առողջապահական համակարգի կարողությունների հզորացման միջոցով աջակցել Առողջապահության նախարարությանը ԱԻ նախապատրաստման և արձագանքման ոլորտում:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ 2010-2011թթ. համագործակցության երկամյա համաձայնագրի շրջանակներում աջակցություն Առողջապահության նախարարությանը երկու ուղղությամբ՝ ԱԻ դեպքում առողջապահական հաստատությունների կայունության և անվտանգության հզորացման և ճգնաժամային կառավարման բնագավառում ուսումնական ծրագրի վերանայման:

Համագործակցում է Առողջապահության, Արտակարգ իրավիճակների և Բնապահպանության նախարարությունների հետ, ինչպես նաև հանդիսանում է ԱԿ ընդլայնված թիմի անդամ:

5.3.4 Համաշխարհային բանկ

Համաշխարհային բանկն իրականացնում է ԱԿ ոլորտի ինստիտուցիոնալ դաշտի ուսումնասիրություն՝ համապատասխան առաջարկություններ անելու համար: Կառավարության պատրաստակամության դեպքում հնարավոր է հետագա ծրագրերի ֆինանսավորում:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ «Հայաստանում աղետների ռիսկի նվազեցման ինստիտուցիոնալ բարեփոխումների ձևավորում», վերջին 10 տարիների ընթացքում իրականացվող «Ջրամբար 1» և «Ջրամբար 2» ծրագրերը, որոնք իրականացվել են 22 համայնքներում և վերջինիս նպատակն է պաշտպանել ջրամբարներից վար բնակվող մոտ 500.000 մարդու կյանքը: Այս տարածքներում տեղադրվել են նաև վաղ ազդարարման համակարգեր:

Համագործակցում է Կառավարության, ԱԻՆ և Տարածքային կառավարման նախարարության, ՀԿԽԸ և երկրում գործող բոլոր միջազգային կազմակերպությունների հետ:

5.3.5 Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն

Գործակալության հիմնական նպատակն է ԱԻՆ ՀՓԾ-ի աղետների նախապատրաստման և արձագանքման կարողությունների զարգացումը: Ավելին, 2008թ.

դեկտեմբերի 8-ին Հայաստանի և Շվեյցարիայի կառավարությունների միջև կնքվեց ԱԻ պայմանագրերում համագործակցության համաձայնագիր:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ «Արձագանք», որն ուղղված է հրշեջ-փրկարարների պատրաստմանը, «Հրշեջները համայնքներում» իրազեկման ծրագիր, ՀՓԾ կարողությունների զարգացում, «Որոնում» ծրագիր և բժշկական ստորաբաժանումների ստեղծում (ղասընթացների անցկացում և սարքավորումներով հագեցում):

Համագործակցում է ԱԻՆ-ի, առողջապահության նախարարության, ՀՓԾ, ՄԱԶԾ-ի, ՀԿԽԸ-ի, ՊՏՀ-ի և «Լոռե» փրկարարական ջոկատի հետ:

5.3.6 Գերմանական տեխնիկական համագործակցություն

ԱԿ ոլորտում իրականացվող ծրագիրն ունի հետևյալ նպատակը. Հարավային Կովկասի առանձնապես վտանգված համայնքների՝ բնական աղետների բացասական ազդեցություններից պաշտպանվելու ունակությունների բարելավում:

Ոլորտում իրականացվող «Աղետների կանխարգելում Հարավային Կովկասում» ծրագիրը լիովին ուղղված է աղետների ռիսկի կառավարմանը և հատկապես այս փուլում՝ 5 ռիսկային համայնքներում աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներին: Հատուկ շեշտադրում կա վաղ ազդարարման վրա՝ բացահայտելու նույն ջրային ավազանում գտնվող վտանգված համայնքները և, անհրաժեշտության դեպքում, հիմնելու վաղ ազդարարման համակարգ: Ծրագրի շրջանակներում արդեն իսկ իրականացվել է Տավուշի և Լոռու մարզերի աղետների ռիսկի գնահատում:

Համագործակցում է ԱԻՆ, Տարածքային կառավարման նախարարության, ՀՓԾ, Տավուշի և Լոռու մարզպետարանների հետ: Մյուս գործընկերներն են քաղաքացիական հասարակությունը, մասնավորապես՝ ՀԿ-ներն ու միջազգային կազմակերպությունները:

5.3.7 Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն

Գործակալությունն աջակցություն է ցուցաբերում ՀՓԾ կարողությունների զարգացման և տեխնիկական վերազինման գործում:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են. 2009 թ. սկսած՝ երկրաշարժի վտանգի քարտեզագրում Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում, ԱԻՆ համապատասխան գույքով կահավորված հրշեջ մեքենաների տրամադրում: Իրականացվել է նաև երկրի ողջ տարածքում գտնվող սողանքների հետազոտության ծրագիր(2006 թ):

Համագործակցում է ԱԻ և Քաղաքաշինության նախարարությունների, ՀՓԾ-ի հետ:

5.3.8 Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ)

ԵԱՀԿ մանդատով պարտադիր չէ, որ կազմակերպությունը ներգրավվի ԱԿ ոլորտում, այսուհանդերձ ներգրավված է տեղեկատվության լուսաբանման և իրազեկման բարելավման ուղղություններում:

Ոլորտում իրականացվող ծրագիրն է՝ ՀՓԾ Արտակարգ տեղեկատվական կենտրոնի հզորացում:

Համագործակցում է ԱԻՆ, ՀՓԾ և ՄԱԶԾ-ի հետ:

5.3.9 Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա

Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԽ/ԿՄ ՄՖ) առաքելությունն է բարելավել խոցելի բնակչության կյանքը՝ համախմբելով

մարդասիրության ուժերը: ԿԽ/ԿՄ ՄՖ-ն իրականացնում է մարդասիրական օգնության աշխատանքներ՝ աջակցելով աղետներից տուժածներին և հզորացնում է իր անդամ ազգային ընկերությունների կարողությունները: ԿԽ/ԿՄ ՄՖ-ի գործունեությունը հիմնականում ծավալվում է 4 ոլորտներում՝ մարդասիրական արժեքների խթանում, աղետների արձագանքում, աղետների նախապատրաստում, առողջության և համայնքի պահպանում:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են. սկսած 1988թ. երկրաշարժից՝ ԿԽ/ԿՄ ՄՖ-ն Հայաստանում տրամադրել է մարդասիրական օգնություն, ինչպես նաև իրականացրել է վերականգնողական և Հայկական կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կարողությունների զարգացմանն ուղղված մեծ թվով ծրագրեր: 1998թ. ի վեր ՀԿԽԸ-ի հետ համատեղ ԿԽ/ԿՄ ՄՖ-ն Հայաստանում իրականացնում է Աղետների կառավարման ծրագիրը: Ներկայումս ԿԽ/ԿՄ ՀԿԽԸ-ի հետ համագործակցելով, նախատեսում է սկսել Համայնքային աղետների ռիսկի նվազեցման ծրագիր:

Համագործակցում է երկրի կառավարության և միջազգային կազմակերպությունների հետ:

5.3.10 «Վորդ Վիժն Հայաստան»

Կազմակերպության նպատակն է բարձրացնել համայնքների կայունությունը և աշխատել նրանց հետ՝ ԱԻ դեպքում համատեղ և համապատասխան արձագանք իրականացնելու համար: Ներկայումս Հայաստանի 7 մարզերում իրականացնում է տարածքի զարգացման 10 ծրագիր. յուրաքանչյուր գրասենյակ ունի պահեստ և օգնության ու զարգացման ծրագրեր իրականացնելու առումով փորձառու աշխատակազմ:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ Աղետների ռիսկի նվազեցման գործում երեխաների և երիտասարդների կարողությունների զարգացում (Գյունրիում և Ստեփանավանում):

Համագործակցում է ԱԻՆ, ՀՓԾ-ի, ՄՊԱԾ-ի, ՃԿՊԱ-ի, Հայկական կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ), ՄԱԶԾ-ի, ԳՏՀ-ի, «Փրկեք երեխաներին»-ի, SDC-ի, «Լոռէ» փրկարար ջոկատի և այլ կազմակերպությունների հետ:

5.3.11 Սելվ դը Չիդրեն

Կազմակերպության առաքելությունն է տևական փոփոխությունների ապահովումը կարիքավոր երեխաների կյանքում: Իրականացնում է առողջապահական, ուսումնական և սոցիալական բնույթի ծրագրեր՝ քաղաքային և գյուղական համայնքների կարողությունների ուժեղացման նպատակով:


Ոլորտում իրականացվող ծրագրեր. 2007-2008թթ. թռչնագրիպի վերաբերյալ դասընթացների կազմակերպում և պաստառների բաշխում համայնքներում: Ներկայումս «Փրկեք երեխաներին»-ի կենտրոնական գրասենյակի հրահանգով կատարվել են խոզի գրիպի վերաբերյալ նախապատրաստական աշխատանքներ՝ համաճարակի դեպքում արագ արձագանք ապահովելու նպատակով:

Համագործակցում է ՏԿՆ, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Առողջապահության և Կրթության ու գիտության նախարարությունների, ՄԱԶԾ, մարզպետարանների, ՏԻՄ-երի և տարբեր հասարակական կազմակերպությունների հետ:

Եզրակացություն

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ աղետների ռիսկի կառավարման և ազգային կարողությունների հզորացման գործում իրենց ուրույն մասնակցությունն ունեն նաև միջազգային կազմակերպությունները: Վերջիններիս հաղորդակցության և համակարգման ներկա վիճակն ունի հետևյալ պատկերը:

Գծապատկեր 1



Այսպիսով, գծապատկերը հստակ ցույց է տալիս, որ միջազգային կազմակերպություններն ունեն իրենց ազգային գործընկերները, որոնց հետ համակարգում են ընթացիկ ծրագրերն ու գործունեությունը: Ավելին, ԱԿ թիմն օգտագործվում է տարբեր շահառուների կողմից՝ արժեքավոր տեղեկությունների փոխանակման և գործողությունների համակարգման համար:

Աղետների կառավարման բնագավառի հետագա զարգացման համար, անհարաժեշտ է օգտագործել միջազգային հարուստ փորձը, որպեսզի նպատակաուղղված միջազգային համագործակցության ռազմավարության ճիշտ իրականացման միջոցով Հայաստանում ավելի ճկուն և գործուն դարձվի բնակչության պաշտպանության համակարգը, բարձրացվի համայնքների ինքնուրույնությունը, բարելավվի շրջակա միջավայրը և ապահովվի կայուն զարգացման նախադրյալներ:

Անհրաժեշտ է նաև օգտագործել միջազգային կառույցների կողմից իրականացվող ծրագրերն ու ներդրումները ընդհանուր համատեղ մոտեցմամբ, ինչպես ռիսկային օբյեկտների բացահայտման, այնպես էլ խոցելիության մակարդակի նվազեցման և աղետների կառավարման բնագավառի համընդհանուր ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների ստեղծման և բնականոն զարգացման համար:

5.4 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարևորելով աղետների կառավարման և առհասարակ յուրաքանչյուր համընդհանուր շահերից բխող խնդիրների լուծման գործում կամ ծրագրերում հասարակական և տեղական այլ կազմակերպությունների կարևոր նշանակությունը՝

ուսումնասիրվել են նաև աղետների ռիսկի կառավարման գործում նման կազմակերպությունների դերը, իրականացվող ծրագրերը և համագործակցությունը: Արդյունքների ամփոփման շնորհիվ ստացվել է ստորև ներկայացված պատկերը:

5.4.1 «Արամե Սարաֆյան ակումբ» հիմնադրամ

Հիմնադրամի գլխավոր նպատակն է աջակցել բնակչությանը՝ աղետներից պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու համար: Հիմնադրամը ներգրավված է արտակարգ իրավիճակների կանխարգելման համակարգի ամրապնդման, գիտական, ուսումնական և բնապահպանական ծրագրերի մշակման և իրականացման, արտակարգ իրավիճակների տեղեկատվական բազայի ստեղծման և այլ գործընթացներում:

Ոլորտում իրականացվող ծրագրեր ներկայումս չկան:

Համագործակցում է ԱԻՆ-ի, ՍՊԱԾ-ի, ՃԿՊԱ-ի, Հայսեյսմշին գիտահետազոտական ինստիտուտի, ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի և ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի հետ:

5.4.2 «Գեոռիսկ» գիտահետազոտական ընկերություն ՓԲԸ

Ընկերությունը, համաձայն իր կանոնադրության, իրականացնում է երկրաբանական, երկրաֆիզիկական, սեյսմոլոգիական, երկրադինամիկական, տեղագրական, ենթակառուցվածքների և ջրաբանական համալիր տվյալների շտեմարանների ստեղծում, ինչպես նաև տարածքների քարտեզագրում GIS համակարգում, բնական վտանգների և ռիսկերի գնահատում և քարտեզագրում, երկրադինամիկական և սեյսմոլոգիական գործընթացների մոնիթորինգ, ջրի ապարների ֆիզիկաքիմիական և մեխանիկական հատկությունների լաբորատոր ուսումնասիրություններ և սեյսմիկ միկրոշրջանացում, տարածքների և հատուկ օբյեկտների մանրակրկիտ սեյսմիկ շրջանացում:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ երկրաֆիզիկական ուսումնասիրություններ, սեյսմիկ շրջանացում, բնական վտանգների և նրանց շրջակա միջավայրի ազդեցության գնահատում, պատվարների փլուզման վտանգի և ջրածածկման գոտիների գնահատում GIS տեխնոլոգիաների միջոցով, ինչպես նաև շրջակա միջավայրի աղտոտման բնույթի դինամիկայի և աղտոտման մակարդակի գնահատում:

Համագործակցում է Երկրաբանական գիտությունների ինստիտուտի, Գառնիի երկրաֆիզիկական դիտարանի, ԱՊՀ բոլոր և մի շարք այլ երկրների նմանատիպ գիտահետազոտական ինստիտուտների հետ:

5.4.3 «Գառնի» միջազգային կենտրոն

Կենտրոնը ստեղծում է երկրաբանական, երկրաֆիզիկական, սեյսմոլոգիական, երկրադինամիկական, տեղագրական, ենթակառուցվածքների և ջրաբանական համալիր տվյալների շտեմարաններ, կատարում է բնական վտանգների և ռիսկերի գնահատում, երկրադինամիկական և սեյսմոլոգիական գործընթացների մոնիթորինգ և ստեղծում է արագ արձագանքման կազմավորումներ՝ էպիկենտրոնային գոտում մոնիթորինգի ցանցի կազմակերպման համար:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ երկրաֆիզիկական ուսումնասիրություններ, սեյսմիկ շրջանացում, բնական վտանգների և նրանց շրջակա միջավայրի ազդեցության գնահատում, պատվարների փլուզման վտանգի և ջրածածկման գոտիների գնահատում GIS տեխնոլոգիաների միջոցով, ինչպես նաև շրջակա միջավայրի աղտոտման բնույթի դինամիկայի և աղտոտման մակարդակի գնահատում:

Համագործակցում է Երկրաբանական գիտությունների ինստիտուտի, Գառնիի երկրաֆիզիկական դիտարանի, ԱՊՀ բոլոր և մի շարք այլ երկրների նմանատիպ գիտահետազոտական ինստիտուտների հետ:

5.4.4 Հայաստանի սեյսմոլոգների և երկրի ֆիզիկայի ընկերակցություն

Ընկերակցությունը ոչ կառավարական գիտական կազմակերպություն է և սույն ոլորտում իրականացնում է ուսուցողական, իրազեկման, խորհրդատվական աշխատանքներ, ինչպես նաև բնական ռիսկերի և վտանգների գնահատում:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ «Կովկասում երկրաշարժերի ժամանակ աղետների կառավարում» և «Գիտական կենտրոնների բաց ցանց բնական ռիսկերի նվազեցման համար Հարավային Կովկասում և Հարավային Ասիայում»:

Համագործակցում է ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի, ՍՊԱԾ, ԵԱՀԿ, ՄԱԶԾ-ի, «Գեոռիսկ» գիտահետազոտական ընկերություն ՓԲԸ-ի, ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի, «Եվրասիա» հիմնադրամի և «Բժիշկներ առանց սահմանի» ֆրանսիական հասարակական կազմակերպության հետ:

5.4.5 Հայսեյսմոլոգիա գիտահետազոտական ինստիտուտ ԲԲԸ

Անմիջականորեն ներգրավված է շենքերի և այլ կառույցների փաստացի տեխնիկական վիճակի և սողանքների հետազոտման գործում:

Ոլորտում իրականացվող ծրագրեր չկան:

Համագործակցում է Քաղաքաշինության նախարարության, Երևանի քաղաքապետարանի և համայնքների հետ:

5.4.6 Հայքրնախագիծ ինստիտուտ ՓԲԸ

Ինստիտուտը մասնագիտացած է ջրատեխնիկական կառույցների անվտանգության գծով:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ ոռոգման համար նախատեսված 22 և էներգետիկ նպատակներով օգտագործվող 4 ջրամբարների անվտանգության ծրագիր, որն ավարտվել է 2008թ.: 2007թ. կառավարություն է ներկայացվել «Հակահեղեղային միջոցառումների հայեցակարգ» ծրագիրը, որը մինչ օրս չի ֆինանսավորվել: 2005թ. մշակվել է Հայաստանի ջրամբարների հոսքերի կարգավորման հայեցակարգը: Ներկայումս ֆինանսավորման բացակայության պատճառով ծրագրեր չեն իրականացվում:

Համագործակցում է ԱԻՆ, տարածքային կառավարման, գյուղատնտեսության, տրանսպորտի և կապի, էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունների, Ջրային ռեսուրսների պետական կոմիտեի, ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության և այլ կառույցների հետ:

5.4.7 «Գեոկոն» ՍՊԸ

Կազմակերպությունն իրականացնում է բնական վտանգավոր երևույթների ուսումնասիրման աշխատանքներ:

Ոլորտում իրականացվող ծրագրերն են՝ ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի պատվերով «Ռիսկի գնահատում ՀՀ Արարատի մարզում» և ԳՏՀ պատվերով «Աղետների ռիսկերի գնահատում ՀՀ Տավուշի և Լոռու մարզերում»:

Համագործակցում է ՄԱԶԾ-ի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, ԳՏՀ-ի, SDC-ի, ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՓԾ-ի, ԳԱԱ ԵԳԻ-ի, Եվրամիության Անդրսահմանային ջրային և Գետավազանային պլանավորման ծրագրերի հետ:

5.4.8 Հայկական կարմիր խաչի ընկերություն

ՀԿԽԸ-ն իր գործունեությամբ օժանդակում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը և իրականացնում իր մարդասիրական առաքելությունը հանրապետության ամենախոցելի խմբերի համար: Առաքելության հիմնական ուղղություններից է աղետների նկատմամբ հանրապետության խոցելիության նվազեցումը: Ներկայումս իր կազմում ունի 11 մարզային և 1 տարածքային ԱԿ կենտրոն, որոնց գործունեության մեջ ընդհանուր հաշվով ընդգրկված են մոտ 170 աշխատող և կամավոր:

Ոլորտում իրականացվող շարունակական ծրագրերն են՝ բնակչության իրազեկման բարձրացում, ՀԿԽԸ աղետների արձագանքման կարողությունների հզորացում, համայնքային մակարդակում աղետների ռիսկի կառավարում, ականների վտանգի իրազեկում և այլն:

Համագործակցում է ԱԻՆ, ՀՓԾ-ի, ՍՊԱԾ-ի, ՃԿՊԱ-ի, ՄԱԶԾ-ի, ԳՏՀ-ի, Համաշխարհային բանկի, «Վորլդ Վիժն»-ի, SDC-ի, JICA-ի, ԿԽ/ԿՄ ՄՖ-ի, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի տարբեր ազգային ընկերությունների և այլ կազմակերպությունների հետ:

Եզրակացություն

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ այս կառույցներն ունեն հզոր պոտենցիալ, կատարված բազմաթիվ աշխատանքներ և տվյալների առեւտրի բազա: Վերջիններս ծավալում են բազմաբովանդակ համագործակցություն երկրի գիտական, կրթական, պետական կառավարման, միջազգային և հասարակական կազմակերպությունների միջև:

Վերլուծությունից երևում է, որ այս կառույցների միջև չի իրականացվում կուտակված տվյալների բազաների սիստեմատիկ փոխանակում, որն էլ ավելի կնպաստեր աշխատանքների որակի բարձրացմանը:

Անհրաժեշտ է օգտագործել նման կառույցների պոտենցիալն ու հնարավորությունները, ինչպես նաև ներգրավել վերջիններիս աղետների կառավարման գործընթացում սեփական մասնակցությունն ու ներդրումն ունենալու համար:

6. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ


6.1 ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳ

Ցանկացած պետության կարևորագույն խնդիրը բնակչության պաշտպանությունն է, որն իրենից ներկայացնում է բազմատեսակ գործընթացների մի ամբողջություն՝ տվյալ երկրում գոյություն ունեցող բոլոր կառույցների անմիջական մասնակցությամբ: Այս գործընթացների արդյունավետ կազմակերպումը մեծապես կախված է տվյալ բնագավառի ինստիտուցիոնալ կառուցվածքից, որի հիման վրա սահմանվում են համակարգման և համագործակցության մեխանիզմները, ինչպես նաև կատարվում է պատասխանատվության և լիազորությունների բաշխումը:

Այս համատեքստում ուսումնասիրվեց Հայաստանի աղետների կառավարման միասնական համակարգը՝ նրանում ընդգրկված բոլոր կողմերին բացահայտելու

Նպատակով: Այնուհետև հարցման արդյունքների հիման վրա մշակվեց աղետների ռիսկի կառավարման ներկայիս միասնական համակարգը, որն ունի հետևյալ կառուցվածքը:

Գծապատկեր 2



Ինչպես երևում է բերված ԱԿ հանրապետական միասնական համակարգի կառուցվածքի գծապատկերից, այն ընդգրկում է պետական կառավարման հանրապետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները, ինչպես նաև ոչ կառավարական կազմակերպությունները: Պետք է նշել, որ համակարգի հիմնական նպատակը հանրապետության ողջ տարածքում բնակչության պաշտպանությունն է՝ իրավական, կազմակերպական և համալիր միջոցառումներով: Գծապատկերը հստակ վկայում է, որ Հայաստանի ԱԿ միասնական համակարգն ընդգրկում է հնարավոր դերակատարում ունեցող բոլոր կողմերը և արտացոլում նրանց գործառնական և գործառնական ենթակայությունը և համագործակցության շղթան:

Այնուամենայնիվ, այս գծապատկերը միշտ չէ, որ կիրառելի է. Արտակարգ իրավիճակների նախարարության հիմնադրումից առաջ ոլորտի լիազորված մարմինը հանդիսանում էր Տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը, ուստի ՏԿՆ դեռևս ունի համակարգողի դեր (տե՛ս 5.1.8): ՀՀ կառավարությունը կարող է այս դերը տալ մեկ այլ մարմնի՝ կախված արտակարգ իրավիճակի չափից: Վարչապետը լիազորված է կառավարելու արտակարգ իրավիճակների արձագանքումը կամ համակարգողի դերում նշանակել փոխվարչապետին, որը միևնույն ժամանակ հանդիսանում է Տարածքային կառավարման նախարարը:

Հարկ ենք համարում նշել նաև, որ աղետների կառավարումը, ըստ ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության դրույթների, ազգային անվտանգության բաղադրիչներից է¹:

2008թ. ՀՀ նախագահը ստորագրել է հրամանագրեր Ազգային անվտանգության խորհրդի և նրա աշխատակազմի կանոնադրությունների հաստատման մասին, որոնցում սահմանվել են նրանց լիազորությունները: Համաձայն նշված հրամանագրերի՝ Ազգային անվտանգության խորհուրդը պետք է զբաղվի Ազգային անվտանգության ռազմավարական ծրագրով նախատեսված հայեցակարգերի և պետական ծրագրերի իրականացման աշխատանքների կազմակերպմամբ, համակարգմամբ, վերահսկողությամբ և իրականացման համար համապատասխան որոշումների ընդունմամբ:

Այժմ Ազգային անվտանգության խորհուրդը ինստիտուցիոնալ կայացման փուլում է և հանդիսանում է աղետների կառավարման ոլորտի ներկայացուցչական մարմինը Հանրապետության նախագահի մոտ:

Աղետների ռիսկի կառավարման գործում կարևոր և առանձնահատուկ դեր ունեն ԱԻՆ-ը ՀՓԾ-ն, ՍՊԱԾ-ը, ՃԿՊԱ-ն, «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ը, «Պետական ռեզերվների գործակալություն» ՊՈԱԿ-ը և ՀՀ ՏԿՆ-ի ենթակայության տակ գտնվող Ջրային տնտեսության պետական կոմիտեն: Սրանք առաջնորդվում են ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությամբ, որում հաշվի են առնված բնապահպանական ոլորտի սպառնալիքներն ու մարտահրավերները, մասնավորապես կարևորվում են տարերային աղետները, էներգետիկ ենթակառուցվածքները և խոշոր արդյունաբերական օբյեկտներում տեխնածին բնույթի ԱԻ-ները, բնական ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործումը, անտառահատումները, երկրի ջրային պաշարների անտնտեսվար օգտագործումը և այլն:

Եզրակացություն

Ինստիտուցիոնալ դաշտի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ աղետների կառավարման համակարգում ներգրավված բոլոր կառույցներն ունեն իրենց դերը, նպատակները, ֆունկցիոնալ պարտականությունները, որոնք սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ: Ավելին, աղետների կառավարման բնագավառում իրականացվող գործընթացները, համագործակցման մեխանիզմները, մոտեցումները, ԱԻ-ի կանխման, կանխարգելման, հետևանքների վերացման միջոցառումները պլանավորվում, իրականացվում և վերահսկվում են կառավարության և համապատասխան իրավասու մարմինների կողմից: Սակայն գոյություն ունեն նաև որոշակի խնդիրներ, որոնք պահանջում են համապատասխան լուծումներ: Մասնավորապես անհրաժեշտ է ուշադրություն դարձնել աղետների ռիսկի կառավարման բնագավառում կազմակերպարարական մեխանիզմների անկատարությանը, բնակչության պաշտպանության ոլորտում պետական ոչ բավարար վերահսկողությանը և հասարակության անարդյունավետ մասնակցության ներկայիս վիճակին:

6.2 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Աղետների կառավարման գործում կարևոր քայլերից է վտանգի բազմակողմանի վերլուծությունը և ճիշտ ընկալումը: Հաջորդ կարևոր քայլը ռիսկի գնահատականն է, որը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից կարևորվում են բուն վտանգը և խոցելիությունը:

¹ Համաձայն ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 6–րդ կետի՝ նախագահը ստեղծում է Ազգային անվտանգության խորհուրդ, որը ղեկավարում է հանրապետության նախագահը

Այն հանգամանքը, որ Հայաստանը գտնվում է բարձր աղետավտանգ գոտում, անհրաժեշտ է դարձնում երկրի վտանգների մանրամասն և տարբերակված ուսումնասիրությունը և վտանգների քարտեզագրումը: Ակնհայտ է, որ աղետների դեպքում բնակչության խոցելիությունը նվազեցնելու համար ռիսկերի գնահատումից հետո միայն պետք է լինեն համապատասխան ներդրումներ: Այս կարևոր փուլում մեծ նշանակություն ունի հանրապետության գիտական պոտենցիալի բացահայտումը և դրա ներգրավումը պետական ծրագրերի մեջ:

Այս փուլում հիմնական դերակատարների տեղը սահմանելու համար հարցադրում արվեց՝ պարզելու՝ արդյո՞ք նրանք ներգրավված են աղետների ռիսկի գնահատման փուլի որևէ ենթափուլում (բացահայտում, գնահատում, մոնիթորինգ, տվյալների շտեմարան): Պատասխանների ամփոփումը հնարավոր դարձրեց ստորև բերված աղյուսակի մշակումը:

Աղյուսակ 1. Հիմնական դերակատարների ներգրավվածությունը աղետների ռիսկի գնահատման գործում

Նախարարություններ, գործակալություններ կազմակերպություններ	Բացահայտում	Գնահատում	Մոնիթորինգ	Տվյալների ² շտեմարան
ԱԻՆ	ոչ	այո	այո	այո
ՏԿՆ	այո	ոչ	ոչ	ոչ
Առողջապահության	այո	այո	ոչ	այո
Գյուղատնտեսության	ոչ	ոչ	ոչ	ոչ
Կրթության և գիտության	ոչ	ոչ	ոչ	ոչ
Բնապահպանության	ոչ	այո	ոչ	ոչ
Քաղաքաշինության	այո	այո	այո	ոչ
Էներգետիկայի և բնական պաշարների	ոչ	ոչ	ոչ	այո
Կառավարությանն առընթեր Սիջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե	այո	այո	այո	ոչ
ՍՊԱԾ	այո	այո	այո	այո
Կառուցվածքների սեյսմակայունության կենտրոն	այո	այո	այո	այո
ՀՓԾ	այո	այո	այո	այո
Հայպետհիդրոմետ	այո	այո	այո	այո
Պետական ռեզերվների գործակալություն	ոչ	ոչ	ոչ	ոչ
ԳԱԱ ԵԳԻ	ոչ	այո	այո	այո
ԵԿՊԱ	ոչ	ոչ	ոչ	ոչ
ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ	այո	այո	այո	այո
«Գեոռիսկ» գիտահետազոտական ընկերություն ՓԲԸ	ոչ	այո	այո	այո
Հայսեյսմոլոգիայի ԳՀԻ ԲԲԸ	այո	այո	ոչ	այո
Հայաստանի սեյսմոլոգների և երկրի ֆիզիկայի ընկերակցություն	ոչ	այո	ոչ	այո
«Արամե Սարաֆյան ակումբ» հիմնադրամ	ոչ	ոչ	ոչ	ոչ
Հայջրնախագիծ ինստիտուտ ՓԲԸ	այո	այո	ոչ	այո
ԳԱԱ էկոլոգամոնոֆերային հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ	այո	այո	այո	այո
Ջրային տնտեսության պետական կոմիտե	այո	այո	ոչ	ոչ
«Գառնի» միջազգային կենտրոն	ոչ	այո	ոչ	այո
«Գեոկոմ» ՍՊԸ	այո	այո	ոչ	այո
Հայկական Կարմիր խաչի ընկերություն	այո	այո	ոչ	ոչ
ԸՆդամենը - 27	15	20	11	16

² Բացահայտել, թե ով ունի տվյալների շտեմարան, որում մուտքագրվում են աղետների ռիսկի գնահատման սեփական աշխատանքների տվյալները՝ հետագա վերլուծության և կիրառման համար:

Եզրակացություն

Աղյուսակի տվյալները վկայում են, որ այս գործում շահագրգիռ կողմերի լայն ընդգրկվածություն կա, մասնավորապես՝ գնահատման ենթափուլում: Ավելին, հանդիպումների և քննարկումների ընթացքում հնարավոր եղավ բացահայտել, որ այս փուլում կարևորվում է վտանգների, ռիսկերի և խոցելիության գնահատման միասնական նորմերի մշակումը, դրանց ներառումը օրենսդրական դաշտում և տեղական չափորոշիչների ստեղծումը:

Ուսումնասիրության արդյունքում բացահայտվեց, որ չկա մեկ միասնական կառույց, որտեղ կարելի է մուտքագրել այդ տեղեկատվությունը, և այն հասանելի դարձնել բոլոր օգտագործողներին: Յետևաբար, վտանգների, ռիսկերի և խոցելիության գնահատման մասին տվյալները հավաքվում և պահվում են մի շարք նախարարություններում, գերատեսչություններում, առանձին մասնագիտացված կազմակերպություններում և գիտահետազոտական ինստիտուտներում (ԱԻՆ, ՏԿՆ, Բնապահպանության նախարարություն, ՅԾԾ, ՍՊԱԾ, ԳեՈՌԻՍԿ գիտահետազոտական ընկերություն ՓԲԸ, ԳԱԱ ԵԳԻ, ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն, Ջրային տնտեսության պետական կոմիտե և այլն): Այս հանգամանքը նույնպես խոսում է տվյալ ոլորտի անարդյունավետ հաղորդակցության և համակարգման ցածր մակարդակի մասին:

Ավելին, ՅԾԾ-ի կազմում գործում է մոնիթորինգի կենտրոն, որը համախմբում է ծառայության 5 բաժիններ և տարածքների ու բնակչության պաշտպանության վարչության ենթակայության տակ է: Կենտրոնն իրականացնում է ամեն տիպի աղետների վտանգների վերաբերյալ տվյալների շտեմարանի վարում և տեղական-մարզային մակարդակներով վերլուծություն, որի արդյունքները հետագայում օգտագործվում են ՅԾԾ-ի գործունեությունը ծրագրելիս:

Յարկ է նշել նաև, որ հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ վերոնշյալ բոլոր դերակատարների կողմից աղետների ռիսկերի գնահատումը հիմնականում կատարվում է իրենց ընթացիկ գործունեության և որոշակի ծրագրերի իրականացման շրջանակներում կամ պատվերի առկայության դեպքում: Յետևաբար, նման գնահատումները շարունակական բնույթ չունեն և չեն նպաստում նպատակային երկարատև կամ հեռանկարային խնդիրների լուծմանը:

Անհրաժեշտ է աղետների ռիսկի գնահատման գործընթացն արժանացնել համապատասխան ուշադրության՝ այն դնելով բնակչության և տարածքների պաշտպանության, ինչպես նաև կայուն զարգացման ռազմավարությունների և երկարատև ծրագրերի մշակման և իրականացման հիմքում: Ստեղծել մեկ միասնական համակարգ, որտեղ կիրականացվեն ռիսկի գնահատման բոլոր գործընթացները և կներգրավվեն բոլոր հաստատությունները, որոնք գործունեություն են ծավալում ռիսկերի բացահայտման գործում:

6.3 ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՒԼ

Աղետների կառավարման բոլոր չորս ենթափուլերը՝ նվազեցում, նախապատրաստում, արձագանքում և վերականգնում, փոխկապակցված և իրար հաջորդող ենթափուլեր են, և մի ենթափուլի արդյունավետ իրականացումից է կախված հաջորդ ենթափուլերի արդյունավետությունը: Յետևաբար, հետազոտությունը չսահմանափակվեց լոկ աղետների ռիսկի կառավարմանն առնչվող նվազեցման և նախապատրաստման ենթափուլերի ուսումնասիրմանը, այլ կենտրոնացավ ընդհանուր աղետների կառավարման փուլի վրա՝ ընդգրկելով արձագանքման և վերականգման ենթափուլերը:

Ելնելով վերոնշյալից՝ աղետների կառավարման ոլորտի գործունեությունն ապահովող նախարարությունների, գերատեսչությունների և կազմակերպությունների

դերը և իրականացվող ծրագրերը պարզաբանելու նպատակով նրանց հարց տրվեց, որի արդյունքներն ամփոփված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 2: Հիմնական դերակատարների ներգրավվածությունը աղետների կառավարման գործում

Նախարարություններ, գործակալություններ կազմակերպություններ	Նվազեցում	Նախապատրաստում	Արձագանքում	Վերականգնում
ԱԻՆ	այո	այո	այո	այո
ՏԿՆ	այո	այո	այո	ոչ
Առողջապահության	այո	այո	այո	այո
Գյուղատնտեսության	այո	այո	ոչ	այո
Կրթության	ոչ	այո	ոչ	ոչ
Բնապահպանության	այո	ոչ	ոչ	ոչ
Քաղաքաշինության	այո	այո	ոչ	այո
Էներգետիկայի	այո	ոչ	ոչ	ոչ
Կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե	այո	ոչ	այո	ոչ
ՍՊԱԾ	այո	այո	այո	այո
Կառուցվածքների սեյսմակայունության կենտրոն	այո	այո	ոչ	այո
ՀՓԾ	այո	այո	այո	այո
Հայպետհիդրոմետ	ոչ	այո	այո	ոչ
Պետեզերվների գործակալություն	այո	ոչ	այո	այո
ԳԱԱ ԵԳԻ	այո	այո	ոչ	ոչ
ՃԿՊԱ	այո	այո	ոչ	ոչ
ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ	այո	այո	ոչ	ոչ
«Գեորոշիկ» գիտահետազոտական ընկերություն ՓԲԸ	այո	ոչ	ոչ	ոչ
Հայսեյսմոլոգիկ ԳՀԻ ԲԲԸ	ոչ	ոչ	այո	այո
Հայաստանի սեյսմոլոգների և երկրաֆիզիկայի ընկերակցություն	այո	այո	ոչ	ոչ
«Արամե Սարաֆյան ակումբ» հիմնադրամ	այո	այո	այո	ոչ
Հայջրնախագիծ հնստիտուտ ՓԲԸ	այո	ոչ	այո	այո
ԳԱԱ Էկոլոգա-նոսֆերային հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ	այո	այո	այո	ոչ
Ջրային տնտեսության պետական կոմիտե	այո	ոչ	այո	ոչ
«Գառնի» միջազգային կենտրոն	այո	այո	այո	ոչ
«Գեոկոմ» ՍՊԸ	այո	ոչ	ոչ	ոչ
Հայկական Կարմիր խաչի ընկերություն	այո	այո	այո	այո
ԳՏՀ	այո	այո	ոչ	ոչ
Համաշխարհային բանկ	այո	այո	ոչ	այո
ՄԱԶԾ	այո	այո ³	այո	այո
SDC	այո	այո	այո	այո
ԵԱՀԿ	ոչ	այո	ոչ	ոչ
Սեյվ դը Չիլդրեն	ոչ	այո	այո	այո
ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ	ոչ	այո	այո	այո
ԱՀԿ	այո	այո	այո	այո
«Վորլդ Վիժն»	այո	այո	այո	այո
JICA	ոչ	այո	այո	այո
ԿԽ/ԿՄ ՄՖ	այո	այո	այո	այո
ԸՆդամներ - 38	31	29	23	20

³ ՄԱԶԾ-ն ունի վաղ վերականգնման գործողությունների աջակցման մանդատ:

Եզրակացություն

Աղյուսակի տվյալները վկայում են, որ դերակատարների մեծ մասը գործունեություն է ծավալում նվազեցման և նախապատրաստման փուլերում: Միաժամանակ դրական է այն փաստը, որ նրանցից շատերը ներգրավված են նաև արծագանքման և վերականգնման փուլերում, քանզի աղետի ի հայտ գալու դեպքում սրանք են այն կարևոր փուլերը, որոնք միտված են բնակչության պաշտպանությանը, հետևանքների նվազեցմանն ու վերացմանը:

Աղետների կառավարման փուլում, ըստ հարցման արդյունքների, առանձին ենթափուլերում հիմնական դերակատարները մասնակցում են հետևյալ կերպ:

Կանխարգելման ենթափուլում որպես հիմնական դերակատարներ մասնակցում են ԱԻՆ-ը, քաղաքաշինության, քյուղատնտեսության, էներգետիկայի և բնական պաշարների ու առողջապահության նախարարությունները, որոնք մշակում և ներկայացնում են իրավական դաշտը ձևավորող փաստաթղթեր՝ սկսած միջպետական համաձայնագրերից և վերջացած նորմատիվ փաստաթղթերով:

Վերոնշյալ նախարարությունների ներգրավումը աղետների կանխարգելման ենթափուլում պայմանավորված է նրանց կողմից իրականացվող կազմակերպչական և ինժեներական միջոցառումներով, ինչպես օրինակ.

- ԱԻՆ-ն իր ենթակայության տակ գտնվող կառույցների միջոցով ղեկավարում և համակարգում է սեյսմիկ և այլ աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումները, ստեղծում է համապատասխան ենթակառույցներ և մշակում է պետական նպատակային ծրագրեր.
- Քաղաքաշինության նախարարությունը ղեկավարում և համակարգում է հանրապետության տարածքում սողանքային գոտիների ուսումնասիրման, մոնիթորինգի և կանխարգելման միջոցառումների գործընթացը.
- Գյուղատնտեսության նախարարությունը ղեկավարում և համակարգում է հանրապետության տարածքում հեղեղավտանգ և սելավավտանգ գոտիների ռիսկի նվազեցման և կանխարգելիչ միջոցառումների իրականացումը, ինչպես նաև անասնահամաճարակների կանխման միջոցառումները.
- Առողջապահության նախարարությունը ղեկավարում և համակարգում է, իր իրավասության սահմաններում, համաճարակների կանխման միջոցառումները.
- Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը ղեկավարում և համակարգում է էներգետիկ համակարգերի անվտանգ շահագործումը և բնական պաշարների բնականոն և գիտականորեն հիմնավորված օգտագործումը:

Ավելին, այս ենթափուլում իրականացվում են ինչպես կազմակերպչական, այնպես էլ ինժեներական միջոցառումներ: Որպես կազմակերպչական կարևոր միջոցառման օրինակ կարելի է նշել Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության և ՀՓԾ-ի, ստեղծման փաստը: Հարկ է նշել նաև հատուկ փրկարար ջոկատի ստեղծման ու վերազինման և կադրերի վերապատրաստման ինստիտուտի՝ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի վերակազմավորման մասին:

Որպես ինժեներական միջոցառումների օրինակ՝ կարելի է նշել սեյսմակայուն շինարարության նորմերի մշակումը և հաստատումը, ճապոնիայի կառավարության հետ համատեղ Քաղաքաշինության նախարարության գիտատեխնիկական վարչության աջակցությամբ 2004-2005թթ. իրականացված «Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարման ուսումնասիրություն» ծրագիրը, մի շարք սելավատարերի և սելավապաշտպան այլ կառույցների անվտանգության բարձրացման

աշխատանքների իրականացումը: Հատկապես կարելի է նշել ՀԱԷԿ-ի արդյունաբերական հարթակի երկրաբանա-երկրաֆիզիկական հետազոտությունների իրականացումը՝ երկու փուլով:

Այս ենթափուլում մեծ է նաև սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրված միջազգային և տեղական կազմակերպությունների դերը, քանզի նրանց ֆինանսավորմամբ կամ հայթայթված ծրագրային գումարներով Հայաստանում իրականացվում են աղետների ռիսկերի գնահատման և կանխարգելման մի շարք ծրագրեր, որոնք միտված են նպաստելու տվյալ ոլորտում ՀՀ կառավարության առջև ծառայած խնդիրների հաղթահարմանը:

Նախապատրաստման ենթափուլում հիմնական դերակատար է հանդիսանում Արտակարգ իրավիճակների նախարարությունը, որն իր կառույցների միջոցով ապահովում է բնակչության ուսուցումը, աջակցում համայնքներին աղետների արձագանքման և տարահանման պլանների մշակման գործում և համարվում է վաղ ազդարարման համակարգերի հիմնադրման և ճիշտ շահագործման պատասխանատուն: Նրա հիմնական կրթական կառույցը համարվում է ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան, որը իրականացնում է կառավարման համակարգի բոլոր մակարդակների պատասխանատուների վերապատրաստում: Ամեն տարի աղետների կառավարման բնագավառում աշխատող մոտ 1700 պետական ծառայող անցնում է հատուկ ուսուցում և վերապատրաստում: Հատուկ ուսուցում է իրականացվում բուհերի «ՔՊ և ԱԻ հիմնահարցեր» առարկայի դասախոսների համար և նույն առարկայի դպրոցների ուսուցիչների համար: Անցած 20 տարիների ընթացքում հրատարակվել են աղետներին նվիրված մի շարք ուսումնական ձեռնարկներ և մանկական գրքեր: Անցած տարիներին, որպես աղետների կառավարման բնագավառի մասնագետներ՝ իր առաջին շրջանավարտներն է տվել ԳԿՊԱ-ն:

Առանձնահատուկ դեր ունի նաև ՍՊԱԾ-ի համապատասխան ստորաբաժանումը, որն իրականացնում է ուսուցում երեխաների շրջանում:

Այս ենթափուլի հիմնական մասնակիցներից է նաև Կրթության և գիտության նախարարությունը, որը մշակում է ԱԿ բնագավառի կրթական ծրագրերի իրականացման պետական քաղաքականությունը:

Այստեղ կարևոր է նաև միջազգային ու տեղական կազմակերպությունների դերը, որոնք օժանդակում են այս խնդրի լուծմանը և տարբեր միջոցառումների և ուսումնական նյութերի տպագրման միջոցով, որը նպաստում է բնակչության իրազեկման և կրթական մակարդակի բարձրացմանը: :

Արձագանքման ենթափուլում ԱԻՆ-ը հանդես է գալիս համակարգողի դերում՝ նախարարություններին, մարզպետարաններին և համայնքներին աջակցելով բժշկական, սոցիալական, մարդասիրական օգնության կազմակերպման գործում, ինչպես նաև ՀԾԾ-ի միջոցով՝ իրականացնելով որոնողափրկարարական աշխատանքներ: Առաջատար դեր ունեն նաև ՏԿՆ-ն, Քաղաքաշինության, Առողջապահության, Գյուղատնտեսության, Էներգետիկայի և բնական պաշարների և մի շարք այլ նախարարություններ ու գերատեսչություններ:

Այստեղ նույնպես կարևոր է միջազգային և տեղական կազմակերպությունների դերը, որոնք աջակցելու են արձագանքման գործողություններին՝ սեփական և միջազգային գործընկերների կարողությունների ներգրավմամբ և, որ ոչ պակաս կարևոր է, կամավորական ներուժի նպատակային ներգրավմամբ:

Վերականգնման ենթափուլում կարևոր դերակատարություն ունեն Քաղաքաշինության, Ֆինանսների, Կապի և տրանսպորտի նախարարությունները, որոնց աջակցում են ԱԻՆ-ը, ՏԿՆ-ն, Էներգետիկայի և բնական պաշարների, Գյուղատնտեսության

և մի շարք այլ նախարարություններ և գերատեսչություններ՝ իրականացնելով տարածքների ինժեներական պաշտպանության միջոցառումներ, քաղաքաշինության համար պիտանի նոր տարածքների ընտրություն, շինարարության իրականացում, ճանապարհաշինություն, վթարավերականգնողական աշխատանքներ և այլն: Այս ենթափուլի առնչությամբ նույնպես անհրաժեշտ է խոսել միջազգային և տեղական կազմակերպությունների կարևոր դերի մասին, քանզի համաշխարհային փորձը վկայում է, որ մեծամասշտաբ աղետների դեպքում տուժած պետության համար բավականին դժվար է առանց միջազգային հանրության և կազմակերպությունների միջամտության ու աջակցության ապահովել տուժած տարածքների լիարժեք վերականգնումը:

Ի վերջո, հարցման արդյունքում պարզվել է, որ աղետների կառավարման բնագավառում իրականացվել են և պետք է իրականացվեն պետական, միջպետական և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ ծրագրեր, որոնք պետք է ընդգրկեն բոլոր ոլորտները՝ տնտեսական, քաղաքական, իրավական, հասարակական, գիտական, կրթական և այլն: Աղետների կառավարման բնագավառում Արտակարգ իրավիճակների, Գյուղատնտեսության, Բնապահպանության, Քաղաքաշինության, Տարածքային կառավարման և այլ նախարարությունների, միջազգային և տեղական կազմակերպությունների ուժերով իրականացվել են աղետներից բնակչության պաշտպանության ազգային կարողությունների հզորացման մի շարք կարճաժամկետ ծրագրեր:

6.4 ՈՒԹՅՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԹՅՎ-ն ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ բառերի հապավումն է: Այս վերլուծական մեթոդն իրավիճակի վերլուծությունից ռազմավարական այլընտրանքներ վեր հանելու պարզ միջոց է: Այն անգամ ներկայացվել է 1960-ականներին և մինչ օրս լայն կիրառություն ունի՝ ոլորտների, կազմակերպությունների կամ նրանց կողմից իրականացվող ծրագրերի գնահատման և վերլուծության գործում:

ՈՒԹՅՎ վերլուծությունը կարող է ծառայել որպես մեկնաբանող գտիչ, որը տեղեկատվությունը կրճատում է մինչև հիմնական խնդիրների կառավարելի քանակությունը: ՈՒԹՅՎ վերլուծությունը ընկերության, ոլորտի, գերատեսչության կամ հաստատության ներքին կողմերը դասակարգում է ուժեղի և թույլի, իսկ արտաքին իրավիճակային գործոնները՝ հնարավորությունների և վտանգների: Այս 4 ասպեկտների վերհանումը հնարավորություն է տալիս, ճիշտ օգտագործելով առկա կարողությունները, ուժեղացնելու թույլ կողմերը, օգուտ քաղելու շահավետ հնարավորություններից և կանխելու պոտենցիալ կործանարար վտանգները:

Սույն հետազոտության մեջ ՈՒԹՅՎ մեթոդի կիրառմամբ բացահայտվեցին Հայաստանում աղետների ռիսկի կառավարման ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու վտանգները՝ ոլորտի հետագա նպատակադրված զարգացմանն աջակցելու համար: Վերլուծության արդյունքում ստացվեց հետևյալ պատկերը:

Ուժեղ կողմեր՝

- հնարավոր ԱԻ առաջացնող բոլոր երևույթների, ԱԻ կառավարման, հետևանքների նվազեցման և վերացման վերաբերյալ կոնվենցիաներ և այլ համաձայնագրեր՝ կնքված ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի շրջանակներում, որոնց միացել է Հայաստանը,
- ԱԻ հակազդման և փոխօգնության բնագավառի համապատասխան համաձայնագրեր և պայմանագրեր՝ կնքված ՀՀ սահմանակից և տարածաշրջանի պետությունների հետ,
- ԱԿ թիմի առկայություն, որն օգտագործվում է տարբեր շահառուների կողմից՝ արժեքավոր տեղեկությունների փոխանակման և գործողությունների համակարգման համար,
- ԱԻ բնագավառի հիմնարար օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի բավարար առկայություն, որը կարիք ունի մշտական բարեփոխումների,

- ՀՀ կառավարության գործունեությունը ԱԻ պաշտպանության և կառավարման բնագավառում օրենքների և ենթօրենսդրական ակտերի մակարդակով գրեթե լիովին կանոնակարգված է,
- նախարարությունների ու այլ գերատեսչությունների՝ օրենսդրական և ենթօրենսդրական մակարդակներում հստակորեն սահմանված իրավասությունները՝ ինչպես ընդհանուր առումով, այնպես էլ հնարավոր ԱԻ առաջացնող երևույթների մասնավոր դեպքերում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված ԱԻ բնագավառում հանրապետական լիազոր գործադիր մարմնի՝ արտակարգ իրավիճակների նախարարության և նրա ենթակա մարմինների լիազորությունները, որոնք գրեթե ամբողջությամբ ծածկում են ԱԻ կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման գործունեության դաշտը,
- ոլորտում նշանակալի դեր ունեցող և կայացած պետական կառավարման լիազոր մարմիններ, ինչպես, օրինակ՝ ՀՓԾ-ն և ՍՊԱԾ-ը,
- մարզային իշխանությունների գործունեության հստակորեն սահմանված բոլոր ուղղությունները և իրավասությունները,
- կազմակերպությունների՝ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով սահմանված իրավասությունները՝ ԱԻ-ից հիմնականում իրենց աշխատողներին և կազմակերպության գործունեությունը պաշտպանելու ուղղությամբ,
- բավարար թվով բարձր որակավորման ազգային կադրեր ԱԻ-ի կազմում, որոնք ի վիճակի են վերապատրաստելու նոր կադրեր,
- աղետների կառավարման բնագավառի ժամանակակից ուսումնական համակարգի առկայություն բոլոր մակարդակների համար, որը բարեփոխումների կարիք ունի:

Թույլ կողմեր՝

- ՀՀ բնակչության և տարածքների պաշտպանության հայեցակարգի բացակայությունը,
- օրենքների համակարգվածության, համընդհանուր մոտեցման բացակայությունը, դրանց ներդաշնակեցման կարիքը,
- ԱԻ-ից տարածքների պաշտպանության ռազմավարության և օրենսդրական հիմքերի բացակայությունը,
- լիազորությունների և իրավասությունների հստակեցումը և պատշաճ կատարումը,
- աղետների ռիսկի նվազեցման և համընդհանուր աղետների կառավարման ռազմավարությունների բացակայությունը,
- աղետների կառավարման ոլորտի օրենսդրությամբ սահմանված վերահսկողական և համակարգման գործառույթների իրականացման մեխանիզմների բացակայությունը,
- աղետների արձագանքման ազգային պլանի (որը ներառում է թե՛ պետական մարմինների, թե՛ միջազգային և թե՛ տեղական տարբեր կազմակերպությունների դերերը) բացակայությունը,
- ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի բացակայությունը,
- աղետների կառավարման բնագավառում նորագույն տեխնոլոգիաների և մոտեցումների ներդրման ծրագրերի բացակայությունը,
- ԱԻ բժշկության ոլորտը կարգավորող օրենսդրական հիմքերի բացակայությունը,
- կանավորության մասին օրենքի բացակայությունը,
- ազգային ժառանգություն հանդիսացող բնության երկրաբանական հուշարձանները աղետներից պաշտպանելու պետական կառավարման կարգավորումը ապահովող օրենսդրական դաշտի բացակայությունը,
- աղետների ռիսկի գնահատման միասնական նորմերի և տեղական չափորոշիչների բացակայությունը,
- աղետների ռիսկերի միասնական տեղեկատվական շտեմարանի բացակայությունը,
- աղետների ըստ մաշտաբների դասակարգման չափանիշների բացակայությունը,
- ոլորտի կառավարման գործում չափազանց բարձր անհատականացված և ցածր կառուցվածքային մոտեցումը,
- պետական կառույցների միջև տարբեր մակարդակներում թույլ համակարգումը և անիրազեկությունը,

- աղետների կառավարման բնագավառում նախարարությունների ու այլ գերատեսչությունների՝ օրենքներով սահմանված իրավասությունների և գործողությունների կատարման մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությունը,
- արտակարգ իրավիճակների հարցերով զբաղվող պատասխանատու բաժինների, մասնագետների, պաշտոնատար անձանց բացակայությունը մի շարք հանրապետական գործադիր մարմինների կենտրոնական ապարատում,
- ազգային և տեղական մակարդակների թերի համագործակցությունը և հաղորդակցությունը,
- համայնքային մակարդակում օրենքների և դրանցից բխող իրավասությունների ոչ պատշաճ իրականացումը կամ կիրառելիությունը,
- ԱԿ բնագավառում համայնքներին վերապահված պարտադիր լիազորությունների բացակայությունը,
- համայնքների թույլ ընդգրկումը ոլորտի գործունեության մեջ,
- համայնքներում թույլ մասնագիտական կարողությունները և կադրերի բացակայությունը:

Հնարավորություններ՝

- կոնվենցիաների և միջազգային այլ համաձայնագրերի մակարդակով արդյունավետ միջազգային համագործակցությունը,
- երկրում միջազգային կազմակերպությունների պատշաճ ներկայությունը և տվյալ ոլորտում նրանց կողմից իրականացվող ծրագրերը,
- առկա իրավական բազայի զարգացածությունը,
- նորաստեղծ արտակարգ իրավիճակների նախարարությունը և նրա կազմում գործող բազմամյա փորձ ունեցող մարմինները,
- տեղական ինքնակառավարման համակարգի կայացած կառուցվածքը,
- ժամանակակից տեխնոլոգիաներով աշխատող ազգային գիտական ներուժի համախմբումը՝ այլ երկրների առաջատար մասնագետների և գիտական կառույցների ներգրավմամբ,
- Հայաստանում և արտերկրում գործող ոչ կառավարական կազմակերպությունների ներգրավումը և նրանց գործունեության խթանումը աղետների կառավարման գործում,
- Հայաստանում գործող տնտեսվարող սուբյեկտների ներգրավումը աղետների կառավարման բնագավառում՝ ներդրումային մասնակցությամբ,
- ազգային մակարդակում առկա մասնագիտական բազան և վերապատրաստված կադրերը:

Վտանգներ՝

- անկանխատեսելի ազգային մակարդակի ԱԿ-ները,
- միջազգային համագործակցության հավանական խափանումը,
- հասարակական հարաբերությունների շարունակական զարգացումից առկա օրենսդրական բազայի հետ մնալը,
- երկրի կայուն զարգացման հավանական խաթարումը,
- աղքատության աճի վրա ուղղակի ներգործությունը,
- ազգաբնակչության սոցիալական կենսամակարդակի անկումը,
- ընդերքի շահագործման, հողօգտագործման, անտառային տնտեսության և ջրային պաշարների ոչ արդյունավետ շահագործման հետևանքով առաջացած հավանական տարաբնույթ էկոլոգիական աղետները,
- աղետների կառավարման ոչ արդյունավետ իրականացման հետևանքով ազգային ժառանգություն համարվող բնության երկրաբանական հուշարձանների և պատմամշակութային եզակի հուշարձանների անդառնալի կորուստը,
- աղետների հետևանքով համայնքային մակարդակում շարունակական տնտեսական կորուստները և վնասները:

7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Վերջին 20 տարիներին ամբողջ աշխարհում զգալիորեն ավելացել են բնական և տեխնոլոգիական աղետները: Այդ ժամանակահատվածում Հայաստանում նույնպես բազմաթիվ աղետներ են եղել: Խնդրի կարևորությունը պետության կայուն զարգացման գործում ակնհայտ է դարձրել աղետների ռիսկի կառավարման, բնակչության պաշտպանության, աղետի գոտում հետևանքների վերացման արդյունավետ գործողությունների պետական քաղաքականության և գիտականորեն հիմնավորված անվտանգության ծրագրի ստեղծման անհրաժեշտությունը:

Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ Հայաստանում աղետների կառավարման ոլորտում գոյություն ունեն կայացած և բավարար օրենսդրական դաշտ, տարբեր փուլերում գործունեություն ծավալող մի շարք պետական մարմիններ, տեղական և միջազգային կազմակերպություններ, ինչպես նաև դրանց հաղորդակցության և համակարգման մեխանիզմներ: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ այդ բոլոր գործոնները դեռևս կառավարման բարեփոխումների, համընդհանրացման, ստանդարտացման և օրենսդրական դաշտում ամրագրման կարիք ունեն:

Ավելին, դեռևս թերի է լուծված համակարգման խնդիրը, որը դիտարկվել է երկու ուղղությամբ՝ պետական մարմինների և այլ կազմակերպությունների միջև: Ներկայիս պատկերն ընդգծում է ոլորտում առկա պետական համընդհանուր համակարգման մեխանիզմների բացը, քանզի տարբեր վտանգների դեպքում տարբեր մարմիններ են հանդիսանում լիազոր մարմին, և նրանցից յուրաքանչյուրն իր լիազորությունների շրջանակներում իրականացվող գործունեությունը համաձայնեցնում է ՀՀ վարչապետի հետ: Ուստի չկան համակարգման հստակ մեխանիզմներ, որպեսզի ՀՀ ԱԻՆ-ը կրկնողությունների բացառման, ընդհանուր մոտեցման և արդյունավետության բարձրացման նպատակով համակարգի դրանց գործունեությունը աղետների ռիսկի կառավարման բնագավառում:

Հայաստանում երկրաշարժերի սպառնացող վնասի և կորուստների նվազեցման խնդիրները պետք է լինեն հանրապետության պետական քաղաքականության հիմնական բաղադրիչ, ինչպես նաև երկրի զարգացման և անվտանգության գրավականներից մեկը:

Հանրապետության համայնքների կայուն զարգացման գործընթացին նպաստելու նպատակով հարկ է հիմնական ուժերն ուղղել աղետների ռիսկի նվազեցման բնագավառի զարգացմանը: Անհրաժեշտ է մշակել ազգային աղետների ռիսկի նվազեցման ռազմավարություն՝ ըստ Հյոգոյի շրջանակային համաձայնագրով ՀՀ ստանձնած պարտավորությունների, և դրան նպաստող համապատասխան տեղական ծրագրեր:

Ուսումնասիրելով ԱԿ կառուցվածքը և օրենսդրական դաշտը՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ կառավարությունը, բարեփոխումներ իրականացնելով աղետների ռիսկի կառավարման բնագավառում և օգտագործելով նաև իր իշխանությունը, կարող է ներազդել հասարակության անվտանգության ապահովման վրա և նպաստել համայնքների կայուն զարգացմանը:

Անհրաժեշտ է ստեղծել չափանիշների միասնական համակարգ, որը կապահովի բնագավառի օրենսդրական կարգավորումն ու տնտեսական մեխանիզմների համակարգի ստեղծումը, ինչպես նաև պետության էկոլոգիական և արդյունաբերական անվտանգությունը:

Այս համատեքստում առաջարկվում է ձեռնարկել հետևյալ միջոցները.

Մշակել, հաստատել կամ ընդունել՝

- ԱԻ-ից բնակչության և տարածքների պաշտպանության հայեցակարգ,
- առողջապահության մասին օրենք, որը հնարավորություն կտա կարգավորել այդ բնագավառին առնչվող մի շարք հիմնահարցեր. օրինակ՝ կապված հոգեկան

առողջության հետ, որը սերտորեն կապված է տեխնածին աղետների վրա ազդող մարդկային գործոնի հետ,

- կամավորության մասին օրենք, որը կխթանի համայնքային հասարակական և կամավորական շարժումը՝ եվրոպական երկրների օրենսդրության, փորձի և ներկա ձեռքբերումների օրինակով,
- երկրաբանական ռիսկերի մասին առանձին գլուխ «Ընդերքի մասին» օրենսգրքում,
- աղետների պատրաստվածության և ռիսկերի նվազեցման կարողությունների հզորացման նպատակային երկարաժամկետ ազգային ծրագիր,
- Հայաստանում աղետների ապահովագրության համակարգ՝ կառավարության մասնակցությամբ,
- աղետների ռիսկի գնահատման միասնական նորմեր և ստանդարտներ,
- աղետների՝ ըստ մաշտաբների դասակարգման չափանիշներ,
- աղետների արձագանքման ազգային պլան (որը ներառի թե՛ պետական մարմինների, թե՛ միջազգային և թե՛ տեղական տարբեր կազմակերպությունների դերերը),
- կենսաապահովման օբյեկտների անվտանգության ապահովման միջգերատեսչական համակարգի հայեցակարգ,
- աղետների ռիսկի, վտանգների և խոցելիության տարրերի բացահայտման, վերլուծության և գնահատման միասնական համակարգ,
- աղետների ռիսկի ցուցիչի (DRI-ԱՌՑ) հաշվարկման միասնական մեթոդաբանություն,
- բնական և տեխնածին ռիսկերի քարտեզի կազմման մեթոդաբանություն,
- երկրաշարժերի վնասների նվազեցման միջոցառումների միասնական համակարգ:

Ստեղծել՝

- սողանքների կադաստր,
- սպառնացող բնական, տեխնածին և էկոլոգիական բնույթի աղետների հետևանքով կորուստների գնահատման միասնական համակարգ,
- իրավական հիմք՝ նախարարությունների ու գերատեսչությունների աշխատակազմերում ԱԻ հարցերով զբաղվող պատասխանատու պաշտոնատար անձի նշանակման համար,
- ազգային ժառանգություն համարվող բնության երկրաբանական հուշարձաններն աղետներից պաշտպանելու պետական կառավարման կարգավորումն ապահովող օրենսդրական դաշտ:

Սահմանել՝

- օրենքի և ենթօրենսդրական ակտի մակարդակով լիազոր մարմնի կողմից ԱԿ բնագավառում վերահսկողության ու համակարգման իրավասությունների ապահովման և իրականացման մեխանիզմներ,
- երկրաբանական, օդերևութաբանական և էկոլոգիական աղետների համակարգված միասնական պետական տվյալների շտեմարանի ստեղծման, վարման և տնօրինման կարգ,
- նախարարություններին ու գերատեսչություններին վերապահված իրավասությունների և գործողությունների կատարման մեխանիզմներ կամ հստակեցնել գոյություն ունեցողները,
- մարզային իշխանություններին ԱԿ բնագավառում վերապահված իրավասությունների կատարման մեխանիզմներ,
- հստակ մեխանիզմներ համայնքի կողմից ԱԻ-ում համայնքի բնակչության պաշտպանության ապահովման համար,
- համայնքներին ԱԻ հակազդման գործում ներգրավելու և նրանց աշխատանքի գնահատման մեխանիզմները,
- կազմակերպությունների կողմից խնդիրների իրականացման մեխանիզմներ, նրանց մեղքով առաջացած ԱԻ հետևանքով տուժած բնակչությանը,

կազմակերպություններին, շրջակա միջավայրին հասցված վնասների փոխհատուցման կարգ: Հանրապետության օրենսդրական դաշտը համապատասխանեցնել միջազգային և Եվրամիության չափանիշներին:

Ինչպես նաև՝

- Օրենքով ամրագրել ԱԻ կառավարման ուղղությամբ ՏԻՄ-երի պարտադիր լիազորություններ,
- ԱԿ կենտրոնացված համակարգի և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ ապահովել ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի ստեղծումը՝ նախապես ընդունելով համապատասխան իրավական ակտ,
- կազմակերպել տարածական տեղեկատվության ներկայացման համար անհրաժեշտ աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (GIS)՝ որպես ռիսկերի կառավարման ժամանակակից միջոցի կիրառում,
- հստակեցնել ԱԿ համակարգի մասնակիցների պարտականությունները,
- նախարարությունների ու գերատեսչությունների հիմնական կանոնադրական նպատակների և խնդիրների շարքում ամրագրել ԱԻ բնագավառում նրանց վերապահված իրավունքների և պարտականությունների մասին դրույթներ:

Միջազգային փորձի և տեղական ուսումնասիրությունների արդյունքում կարելի է եզրակացնել, որ ԱԻ կառավարման գործընթացը ոչ թե որևէ կառավարական մարմնի, այլ համապետական խնդիր է:

Միջազգային փորձը աղետների ռիսկի կառավարման բնագավառում վկայում է նաև, որ ամենավտանգավոր տեխնիկական համակարգերը, որպես կանոն, տեղակայվում են բնակչության առավել խիտ բնակեցված տարածքներում: Հետևաբար, հետագա զարգացման ընթացքում բարդ տեխնիկական համակարգերի ստեղծումը և կիրառումը, առանց հաշվի առնելու անվտանգության նոր չափանիշները, կարող են համարվել անընդունելի:

8. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը միացել և կնքել է աղետների կառավարման բնագավառի կամ այդ բնագավառին առնչվող հետևյալ կոնվենցիաները, համաձայնագրեր և պայմանագրերը՝

1. 1992 թվականի օգոստոսի 11-ին կնքված «ՀՀ կառավարությանն առընթեր սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության և ԱՄՆ երկրաբանական ծառայության միջև երկրաշարժերի վտանգի նվազեցման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը, որի հիմնական նպատակները նոր երկրաշարժերի նախանշանների հայտնաբերման, ակտիվ խզվածքների սեյսմիկության և ուժեղ երկրաշարժերի օջախների երկրաբանական միջավայրի ուսումնասիրության ու այլ խնդիրների շուրջ համագործակցությունն է: Կնքված է եղել 5 տարի ժամկետով:
2. 1992 թվականի օգոստոսի 11-ին կնքված «ՀՀ կառավարությանն առընթեր սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության և ԱՄՆ երկրաբանական ծառայության միջև Հայաստանում IRIS գլոբալ սեյսմոգրաֆիկ ցանցի դիտակայանի ստեղծման մասին» համաձայնագիրը, որի հիմնական նպատակը երկրաշարժերի գրանցման և ազդարարման, վերլուծությունների նպատակով՝ Հայաստանում IRIS գլոբալ սեյսմոգրաֆիկ ցանցի դիտակայանի ստեղծումն է:
3. 1995 թվականի ապրիլի 10-ին կնքված (ուժի մեջ է մտել 1996 թվականի մարտի 6-ին) «ՀՀ և Բուլղարիայի Հանրապետության կառավարությունների միջև անասնաբուժասանիտարական բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիան, որի հիմնական նպատակը անասնահամաճարակից իրենց տարածքները պաշտպանելու համար համատեղ միջոցառումների իրականացումն է:
4. 1997 թվականի մայիսի 3-ին կնքված (ուժի մեջ է մտել 2000 թվականի մայիսի 31-ին) «ՀՀ և Վրաստանի կառավարությունների միջև բնական և տեխնածին բնույթի ԱԻ կանխման և դրանց հետևանքների բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը, որի հիմնական նպատակը ԱԻ կանխման և դրանց հետևանքների վերացման բնագավառում համագործակցությունը և փոխօգնությունն է:
5. 2000 թվականի ապրիլի 5-ին կնքված (ուժի մեջ է մտել 2001 թվականի փետրվարի 22-ին) «ՀՀ և Ռումինիայի կառավարությունների միջև բույսերի պաշտպանության և ֆիտոսանիտարական կարանտինի բնագավառներում համագործակցության մասին» կոնվենցիան, որի հիմնական նպատակը կարանտինային վնասատուների և բույսերի հիվանդությունների կանխարգելման ոլորտում համագործակցությունն է:
6. 2001 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված (ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 22-ին) «ՀՀ և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունների միջև սեյսմիկ պաշտպանության բնագավառում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը, որի հիմնական նպատակը սեյսմիկ ռիսկի նվազեցման և դրա կառավարման, սեյսմիկ պաշտպանության և այլ հարցերում համագործակցությունն է:
7. 2001 թվականի մարտի 1-ին կնքված (ուժի մեջ է մտել 2002 թվականի հոկտեմբերի 28-ին) «ՀՀ կառավարության և ՌԷկրաինայի նախարարների կաբինետի միջև ԱԻ կանխման և դրանց հետևանքների վերացման ասպարեզում համագործակցության մասին» համաձայնագիրը, որի հիմնական նպատակը ԱԻ կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման բնագավառում փոխօգնությունը և համագործակցությունն է:

8. 2003 թվականի սեպտեմբերի 18-ին կնքված (ուժի մեջ է մտել 2004 թվականի սեպտեմբերի 7-ին) Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջև «Բնական և տեխնածին բնույթի ԱԻ մասին տեղեկատվության փոխանակման, դրանց հետևանքների վերացման ժամանակ տեղեկատվական փոխգործակցության և տուժած բնակչությանն օգնություն ցույց տալու մասին» համաձայնագիրը, որի հիմնական նպատակը ԱԻ ռիսկերի, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման բնագավառում համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ տեղեկատվության փոխանակման բնագավառում համագործակցությունն է.
9. 2003 թվականի նոյեմբերի 25-ին կնքված (ուժի մեջ է մտել 2004 թվականի մայիսի 4-ին) «ՀՀ և Տաջիկստանի Հանրապետության կառավարությունների միջև սեյսմիկ պաշտպանության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը, որի հիմնական նպատակը սեյսմիկ պաշտպանության, սեյսմիկ ռիսկի նվազեցման և այլ հարցերի շուրջ համագործակցությունն է.
10. 1993 թվականի հունիսի 22-ին ժնկում կնքված (ՀՀ համար ուժի մեջ է մտել 1997 թվականի հունվարի 3-ին) «Խոշոր արդյունաբերական վթարների կանխման մասին» կոնվենցիան, որի հիմնական նպատակը բարձր վտանգ ներկայացնող օբյեկտներում վտանգավոր նյութերի ներգրավմամբ խոշոր վթարների կանխումը և այդպիսի վթարների հետևանքների սահմանափակումն է.
11. 1986 թվականի սեպտեմբերի 26-ին Վիեննայում կնքված (ՀՀ համար ուժի մեջ է մտել 1993 թվականի սեպտեմբերի 24-ին) «Միջուկային պատահարների վերաբերյալ վաղ ազդարարման մասին» կոնվենցիան, որի հիմնական նպատակը միջուկային վթարները կանխելը կամ դրանց հետևանքները նվազագույնի հասցնելն է.
12. 1986 թվականի սեպտեմբերի 26-ին Վիեննայում կնքված (ՀՀ համար ուժի մեջ է մտել 1993 թվականի սեպտեմբերի 24-ին) «Միջուկային վթարի կամ ռադիոակտիվ իրադրության դեպքում օգնության մասին» կոնվենցիան, որի հիմնական նպատակը միջուկային վթարների կամ ռադիոակտիվ արտակարգ իրադրության դեպքում անհապաղ օգնության տրամադրումն է՝ ռադիոակտիվ արտանետումների հետևանքները նվազագույնի հասցնելու և դրանից կյանքի, գույքի և շրջակա միջավայրի պաշտպանությունը (ռիսկի նվազեցում).
13. 1998 թվականի ապրիլի 15-ին Սոչիում կնքված (ՀՀ համար ուժի մեջ է մտել 2003 թվականի մարտի 11-ին) «Սևծովյան տնտեսական համագործակցության մասնակից պետությունների կառավարությունների միջև բնական և տեխնածին աղետների կանխարգելման և դրանց վերացման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը, ինչպես նաև «Արտակարգ իրավիճակներում աջակցության և տարերային ու տեխնածին աղետներին անհապաղ արձագանքման բնագավառում համագործակցության վերաբերյալ» լրացուցիչ արձանագրությունը, որոնց հիմնական նպատակը ԱԻ կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման համար համագործակցությունն է.
14. 1972 թվականի ապրիլի 10-ին կնքված (ՀՀ համար ուժի մեջ է մտել 1994 թվականի հունիսի 7-ին) «Մանրէաբանական (կենսաբանական) և թունավոր նյութեր պարունակող զենքի մշակման, արտադրության և կուտակման արգելման և դրա ոչնչացման մասին» կոնվենցիան, որի հիմնական նպատակը մանրէաբանական և թունավորող նյութերի, զենքերի, սարքավորումների և այլ միջոցների կուտակումը, փոխադրումը, պահպանումը և տեղափոխումն արգելելն է՝ հնարավոր վտանգավոր իրավիճակների ռիսկը նվազեցնելու նպատակով.
15. 1927 թվականի մայիսի 18-ին ժնկում կնքված (ՀՀ համար ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 15-ին) «Շրջակա միջավայրի վրա ներգործության միջոցների

ռազմական կամ ցանկացած այլ թշնամական օգտագործման արգելման մասին» կոնվենցիան, որի հիմնական նպատակը շրջակա միջավայրի վրա ներգործության միջոցների ռազմական կամ ցանկացած այլ թշնամական օգտագործման՝ բիոտային, երկրի կեղևին, ջրոլորտին, մթնոլորտին կամ տիեզերական տարածությանը հասցվող վնասների բացառումն է հնարավոր ԱԻ ռիսկերը նվազեցնելու համար.

16. 1989 թվականի մարտի 22-ին Բազելում կնքված (ՀՀ համար ուժի մեջ է մտել 1999 թվականի դեկտեմբերի 30-ին) «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիան, որի հիմնական նպատակներից է մարդու առողջությանը և շրջակա միջավայրին սպառնացող վտանգների նվազեցումը.
17. ԱՊՀ մասնակից պետությունների միջև 1993 թվականի հունվարի 22-ին կնքված «Տարերային և տեխնածին բնույթի ԱԻ դեպքում համագործակցության մասին» համաձայնագիրը, որի հիմնական նպատակը ԱԻ կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման ոլորտում համագործակցությունն է.
18. 2005թ-ի մարտի 11-ին Երևանում կնքված «ՀՀ և Շվեյցարիայի Համադաշնության կառավարությունների միջև Տեխնիկական և ֆինանսական համագործակցության մասին Հայաստանում ԱԻ արծազանքելու համակարգին օժանդակության վերաբերյալ» շրջանակային համաձայնագիրը, որի հիմնական նպատակը ԱԻ արծազանքման ուժերի վերապատրաստումն է՝ ԱԻ դեպքում հասցվող վնասների ռիսկը նվազեցնելու համար.
19. մի քանի տասնյակից ավելի կոնվենցիաներ, համաձայնագրեր և պայմանագրեր:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝ ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում գործում են աղետների կառավարման բնագավառը կարգավորող կամ այդ բնագավառին առնչվող հետևյալ օրենքները՝

1. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ԱԻ-ում բնակչության պաշտպանության հիմքերն ու կազմակերպումը, այդ բնագավառում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների՝ անկախ կազմակերպական-իրավական տեսակից, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները.
2. «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ՀՀ-ում հրդեհային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները.
3. «Հիդրոոդերևութաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է ՀՀ-ում հիդրոոդերևութաբանական գործունեության բնագավառում հասարակական հարաբերությունները, սահմանում է հիդրոոդերևութաբանական գործունեության իրավական հիմքերը և նպատակաուղղված է հիդրոոդերևութաբանական երևույթների ու պրոցեսների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու ուղղությամբ՝ հասարակության, պետական իշխանության մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց պահանջմունքների բավարարմանը և հիդրոոդերևութաբանական անվտանգության ապահովմանը.

4. «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է հանրապետությունում սեյսմիկ պաշտպանության բնագավառի կազմակերպման հիմնադրույթները և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները.
5. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է քաղաքացիական պաշտպանության սկզբունքները, պետական կառավարման ու ՏԻՄ-ի, կազմակերպությունների (անկախ կազմակերպատիրավական ձևից), ՀՀ քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և օտարերկրյա քաղաքացիների (այսուհետ քաղաքացիներ) իրավունքներն ու պարտականությունները քաղաքացիական պաշտպանության բնագավառում.
6. «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է փրկարար ուժերի ստեղծման և գործունեության հիմքերն ու կարգը, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին մասնակցող փրկարարների ու քաղաքացիների իրավունքները, պարտականությունները, սոցիալական երաշխիքները և նյութական ապահովության հիմքերը.
7. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է հանրապետությունում տեխնիկական անվտանգության ապահովման իրավական, տնտեսական, սոցիալական հիմքերը, տեխնիկական անվտանգության ապահովման համակարգը և կարգավորում է տեխնիկական անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունները.
8. «Հայաստանի փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է ԱԻ և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում լիազորված պետական մարմնի՝ ՀՓԾ գործունեության հիմնական սկզբունքները, այդ մարմնում ծառայությունը, պաշտոնները և կոչումները, ծառայության անցնելու կարգն ու պայմանները, պաշտոնի նշանակման և կոչումներ շնորհելու կարգը, ծառայության հետ կապված՝ ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական և սոցիալական երաշխիքները, ծառայության հետ կապված այլ առանձնահատկություններն ու հիմնական հարաբերությունները.
9. «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է հանրապետության քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների համալրման, նախապատրաստման, մարտական կիրառման կարգը, իրավասությունը և կազմակերպական հիմքերն ու գործունեության սկզբունքները.
10. «Խաղաղ նպատակով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի պետական կարգավորման, միջուկային տեղակայանքների, իոնացնող ճառագայթման աղբյուրների անվտանգության, իոնացնող ճառագայթումից պաշտպանության, ռադիոակտիվ թափոնների կառավարման, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների ֆիզիկական պաշտպանության, միջուկային վնասի, դրա փոխհատուցման և ատոմային էներգիայի օգտագործման հետ կապված այլ հարաբերություններ՝ անձնակազմի, բնակչության, շրջակա միջավայրի և ՀՀ անվտանգության շահերի պաշտպանության նպատակով.
11. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը, որի խնդիրներն են մթնոլորտային օդի մաքրության և որակի բարելավման ապահովումը, մթնոլորտային օդի վիճակի վրա քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլ վնասակար ազդեցությունների նվազեցումը և կանխումը, այդ բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումը, ինչպես նաև օրինականության ամրապնդումը.

12. «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է բուսասանիտարիայի բնագավառում հանրապետության պետական կառավարման լիազորված մարմնի և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆիզիկական ու իրավաբանական անձանց հարաբերությունները.
13. «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը, ինչպես նաև պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցությունը և բարենպաստ պայմաններ ապահովում նրա և ապագա սերունդների կենսունակության համար.
14. «Թափոնների մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը.
15. «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգիրքը, որով սահմանվում է ՀՀ տարածքում ընդերքից օգտվելու սկզբունքները, կարգը, ինչպես նաև ընդերքօգտագործման հետ կապված հարաբերությունները և մի քանի տասնյակ այլ օրենքներ:

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ

Ենթաօրենսդրական մակարդակով աղետների կառավարման բնագավառը կանոնակարգվում են հետևյալ իրավական ակտերով՝

16. ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի «ՀՀ տարածքում մթնոլորտային վտանգավոր երևույթների վրա ակտիվ ներգործության համակարգ ստեղծելու ծրագիրը հաստատելու մասին և ՀՀ պետական բյուջեից գումար հատկացնելու մասին» N1253-Ն որոշումը.
17. ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի «ՀՀ տարածքում ԱԻ առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը հաստատելու մասին» N1925-Ն որոշումը.
18. ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀՀ-ում միջուկային և (կամ) ճառագայթային վթարների հակազդման պատրաստվածության մասին» N1953-Ն որոշումը.
19. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության պլանը (Հայկական ատոմային էլեկտրակայանի արտաքին վթարային պլան) հաստատելու մասին» N2328-Ն որոշումը.
20. ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի «Անհատական պաշտպանության միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N1631-Ն որոշումը.
21. ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի «Կառավարման մարմինների և բնակչության իրազեկման կարգը սահմանելու մասին» N1494-Ն որոշումը.

22. ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 29-ի «Ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ստեղծման և գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին» N1064-Ն որոշումը.
23. ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի «Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը սահմանելու մասին» N633-Ն որոշումը.
24. ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի «ՀՀ-ում որոնման և փրկարարական ծառայությունների կազմակերպման ու համագործակցության կարգը հաստատելու մասին» N1725-Ն որոշումը.
25. ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի «Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» N1532-Ն որոշումը.
26. ՀՀ կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 16-ի «ՀՀ տարածքում ԱԻ առաջացման մասին տեղեկատվության ստացման և ազդարարման կարգը հաստատելու մասին» N1304-Ն որոշումը.
27. ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 3-ի «Հակահրդեհային նպատակներով՝ ջրօգտագործման կարգը սահմանելու մասին» N390-Ն որոշումը.
28. ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» N384-Ն որոշումը.
29. ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 13-ի «Սեյսմիկ պաշտպանության բնագավառում հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների ցանկը սահմանելու մասին» N384-Ն որոշումը.
30. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «ԱԻ և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին» N134-Ն որոշումը.
31. ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» N679 որոշումը.
32. ՀՀ կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» N592 որոշումը.
33. ՀՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 31-ի «ԱԻ հետևանքների նվազեցման և վերացման, բնակչության պաշտպանության՝ 2002-2004թթ. ծրագրի մասին» N706 որոշումը.
34. ՀՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 13-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» N746 որոշումը.
35. ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի «ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» N429 որոշումը.
36. ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 7-ի «Երևանի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման ծրագիրը հաստատելու մասին» N392 որոշումը.

37. ՀՀ կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 19-ի «ՀՀ անտառներում հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու մասին» N589 որոշումը.
38. ՀՀ կառավարության 1997 թվականի մայիսի 29-ի «Ուժեղ երկրաշարժի կամ դրա սպառնալիքի դեպքում ՀՀ կառավարության գործողությունները կանոնակարգելու մասին» N152 որոշումը.
39. ՀՀ կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 8-ի «ՀՀ վտանգավոր և այլ թափոններ ներմուծման, արտահանման և ՀՀ տարածքով տարանցիկ փոխադրումը կարգավորելու մասին» N97 որոշումը.
40. ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 3-ի «Ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման և վնասագերծման կարգը հաստատելու մասին» N533-Ն որոշումը.
41. ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 7-ի «Զրային լողամիջոցների կառուցվածքի և անվտանգ շահագործման կանոնները հաստատելու մասին» N1945-Ն որոշումը.
42. ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ ԱԻՆ կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N531-Ն որոշումը.
43. ՀՀ կառավարության` 2005 թվականի մայիսի 19-ի «ՀՀ ԱԻՆ «Հայաստանի փրկարար ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N634-Ն որոշումը.
44. ՀՀ կառավարության` 2009 թվականի փետրվարի նիստի N 8 արձանագրության 17-րդ կետով հավանության արժանացած «ՀՀ տարածքում քարաթափերի կանխարգելման հայեցակարգը».
45. ՀՀ կառավարության` 1996 թվականի սեպտեմբերի 27-ի «ՀՀ կրթական համակարգում «ՔՊ և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի ուսուցման կազմակերպման մասին» N320 որոշումը.
46. ՀՀ կառավարության` 2008 թվականի մարտի 13-ի «Երաշտի և այլ տարերային աղետների և տեխնածին վթարների ժամանակ բնակչությանը հրատապ օգնություն կազմակերպելու կարգը հաստատելու մասին» N248-Ն որոշումը.
47. ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի «Զրային ռեսուրսների օգտագործման և պահպանության` ԱԻ ռեժիմներ սահմանելու կարգի, հրահանգների և բնակչությանը մատակարարվող խմելու ջրի նվազագույն չափաքանակների, ինչպես նաև ջրային համակարգի կառավարչի կրած վնասների փոխհատուցման կարգի մասին» N76-Ն որոշումը.
48. ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 18-ի «ՀՀ քաղաքացիական ավիացիայի հրդեհային անվտանգության ապահովման մասին հրահանգը հաստատելու մասին» N1343-Ն որոշումը.
49. ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության նորմերը հաստատելու մասին» N1219-Ն որոշումը.

50. ՀՀ կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 22-ի «ՀՀ տարածքից դուրս ԱԻ կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներում փրկարար ուժերն ընդգրկելու կարգը սահմանելու մասին» N1403-Ն որոշումը.
51. ՀՀ կառավարությանն առընթեր ԱԻ վարչության պետի՝ 2003 թվականի մայիսի 27-ի «Հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու մասին» N524-Ն հրամանը.
52. ՀՀ կառավարությանն առընթեր ԱԻ վարչության պետի՝ 2004 թվականի հոկտեմբերի 31-ի «Հրդեհների և դրանց հետևանքների պետական հաշվառման կանոնները հաստատելու մասին» N978-Ն հրամանը.
53. ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի՝ 2005 թվականի օգոստոսի 1-ի «ԱԻ-ում օդանավի անձնակազմի գործողությունների կարգը հաստատելու մասին» N101-Ն հրամանը.
54. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի «ՀՀՇՆ II-6.02-2006 թվականի «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու մասին» N24-Ն հրամանը և այդ հրամանով հաստատված շինարարական նորմերը.
55. «Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում. Հիմնական հասկացություններ, տերմիններ և սահմանումներ» ՀՍՍ 233-2004 Ստանդարտը.
56. «Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում. Տեխնաժին արտակարգ իրավիճակներ» ՀՍՍ 201-2000 Ստանդարտը և այլ իրավական ակտեր:

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱԻ ԿԱՆԽՄԱՆ, ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ՝ ԱԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՏԱՐԲԵՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանում ԱԻ կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման՝ ԱԻ ռիսկերի կառավարման բնագավառում ՀՀ կառավարությանը վերապահված են հետևյալ իրավասությունները՝

1. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝
 - ղեկավարում է բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.
 - հաստատում է ԱԻ հետևանքների նվազեցման ու վերացման, բնակչության պաշտպանության ծրագրերը և վերահսկում դրանց կատարումը.
 - սահմանում է ԱԻ առաջացման հնարավոր պատճառ համարվող օբյեկտների, առարկաների ու գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննությունն իրականացնելու կարգը.
 - ապահովում է բնակչության ազդարարումը և տեղեկատվությունն ԱԻ-ում.
 - հայտարարում է աղետի գոտի և սահմանում դրա տարածքը, ինչպես նաև կազմակերպում է այդ տարածքին առավելագույն օգնություն և նյութական պաշարներ տրամադրելու աշխատանքները.
 - հաստատում է ԱԻ հետևանքով բնակչությանը պատճառված վնասի գնահատման և փոխհատուցման կարգը.
 - հաստատում է լիազորված մարմնի ներկայացրած՝ ԱԻ-ում տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծման ու դրանց օգտագործման կարգը և այլն:
2. «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝
 - իրականացնում է հրդեհային անվտանգության ուղղությամբ պետական քաղաքականությունը.

- հաստատում և ֆինանսավորում է հանրապետական նպատակային ծրագրերը.
 - պլանավորում և կատարում է պետական բյուջեն՝ հրդեհային անվտանգության, այդ թվում՝ հրդեհային պահպանության ապահովման ծախսերի մասով.
 - սահմանում է պետական կարիքների համար հրդեհատեխնիկական արտադրանքի անվանացուցակի, թողարկման և մատակարարման ծավալը և այլն:
- 3. «Հիդրոդերևութաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն ՀՀ կառավարությունն իրականացնում է հանրապետությունում հիդրոդերևութաբանական գործունեության ընդհանուր պետական կառավարումը և՝**
- ապահովում է հիդրոդերևութաբանական գործունեության բնագավառում պետական քաղաքականության իրականացումը.
 - հաստատում է պետական նշանակության հիդրոդերևութաբանական աշխատանքների ծրագրերը.
 - հանրապետական նշանակության հիդրոդերևութաբանական աշխատանքների պատվիրատուն է:
- 4. «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝**
- հաստատում է սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական ծրագրերը.
 - սահմանում է հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների ցանկը.
 - սահմանում է սեյսմաշրջանացման աշխատանքների լիցենզիաների տրման կարգը և այլն:
- 5. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝**
- իրականացնում է ՔՊ ընդհանուր ղեկավարումը.
 - ապահովում է ՔՊ բնագավառում պետական միասնական քաղաքականության իրականացումը.
 - սահմանում է ՔՊ միջոցառումների իրականացման կարգը.
 - հաստատում է ՔՊ զարգացման ծրագրերը և վերահսկում է դրանց կատարումը.
 - սահմանում է ՔՊ խմբին դասվող տարածքների ցանկը՝ ըստ վտանգավորության աստիճանի.
 - սահմանում է ՔՊ ծառայությունների ու կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը.
 - հաստատում է հատուկ, կարևորագույն օբյեկտների, ինչպես նաև առարկաների, գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննության իրականացման կարգը.
 - հաստատում է բնակչության ազդարարման և իրազեկման կարգը.
 - իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:
- 6. «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն ՀՀ կառավարությունը սահմանում է փրկարար ուժերի գործունեության կարգը, 10-րդ հոդվածի համաձայն՝ որակավորման անցկացման կարգն ու պայմանները, իսկ 11-րդ հոդվածի համաձայն՝ կայացնում է որոշում փրկարար ուժերը, ՀՀ տարածքից դուրս, ԱԻ կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներում ընդգրկելու վերաբերյալ:**
- 7. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն ՀՀ կառավարությունը սահմանում է տեխնիկական քննության և հաշվառման կարգը, 20-րդ հոդվածի համաձայն՝ պարտադիր ապահովագրման ենթակա առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների ցանկը, 22-րդ հոդվածի համաձայն՝ վնասակար նյութերի սահմանաքանակները և տեխնիկական փորձաքննություն իրականացնելու**

իրավասություն ունենալու համար իրավաբանական անձանց ու անհատ ձեռնարկատերերի հավատարմագրման կարգը:

8. «Խաղաղ նպատակով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝

- ապահովում է գիտատեխնիկական, ներդրումային և կառուցվածքային պետական քաղաքականության իրականացումը.
- կազմակերպում է միջոցառումներ՝ բնակչությանը, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմերին և շրջակա միջավայրն իրենց նախազգայն վնասակար ազդեցությունից պաշտպանելու ուղղությամբ.
- կազմակերպում է միջոցառումներ՝ ատոմային էներգիայի օբյեկտներում հնարավոր ԱԻ և դրանց հետևանքների վերացման վթարային հակազդման ազգային համակարգում ընդգրկված պետական կառավարման մարմինների և ձեռնարկությունների պատրաստվածության ուղղությամբ.
- կազմակերպում է ՀՀ-ում ճառագայթային իրավիճակի հսկողության համակարգ և սահմանում է այդ համակարգում ընդգրկված պետական մարմինների գործունեության կարգը.
- կազմակերպում է ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների ֆիզիկական պաշտպանությունը.
- հաստատում է անվտանգության նորմերը և կանոնները և այլն:

9. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝

- սահմանում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները.
- սահմանում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը.
- կազմակերպում է մթնոլորտային օդի վիճակի մոնիտորինգը.
- սահմանում է մթնոլորտային օդի պահպանության կարգը և այլն:

10. «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝

- հաստատում է օզոնային շերտը քայքայող նյութերի ցանկը.
- սահմանում է օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման ընդհանուր չափաքանակները (քվոտաները).
- հաստատում է օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման անհատական չափաքանակների սահմանման կարգը.
- ընդունում է օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծմանը, արտահանմանը և տարանցմանը վերաբերող ենթաօրենսդրական ակտերը և այլն:

11. «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝

- ապահովում է պետական քաղաքականության իրականացումը.
- սահմանում է բույսերի պաշտպանության միջոցների պետական գրանցման կարգը.
- սահմանում է բույսերի պաշտպանության միջոցների փորձաքննության անցկացման կարգի և բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի ներմուծման կամ արտահանման եզրակացության ձևերը.
- սահմանում է բույսերի կարանտին և կարանտինը հայտարարում չեղյալ և այլն:

12. «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝

- իրականացնում է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման միասնական պետական քաղաքականություն.
- մշակում է պետական ծրագրեր՝ ուղղված հիվանդությունների կանխարգելմանը, վթարների, տարերային աղետների հետևանքների, բնակչության զանգվածային

հիվանդությունների վերացմանը և թունավորումների կանխարգելման բնագավառում գիտատեխնիկական նվաճումների ներդրմանը.

- բնակչության շրջանում կազմակերպում է հիգիենիկ դաստիարակությունը և ուսուցումը, սանիտարահամաճարակային իրավիճակի վերաբերյալ ապահովում է անհրաժեշտ տեղեկատվություն ինչպես հանրապետական, այնպես էլ տեղական մարմինների միջոցով և այլն:

13. «Պարենային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝

- ապահովում է սննդամթերքի արտադրության խթանման և կարգավորման ոլորտում տարվող աշխատանքների համակարգումը.
- իր լիազորած մարմնի միջոցով մշակում և իրագործում է պարենային անվտանգության ապահովման պետական նպատակային ծրագրեր.
- իրականացնում է բնակչությանը կենսապես կարևորագույն սննդամթերքի մատակարարման վերաբերյալ տեղեկատվության հավաքում և վերլուծություն, ինչպես նաև պարենային անվտանգության ապահովման ոլորտում իրավիճակի կանխատեսում և պարենային ճգնաժամի կանխարգելման միջոցառումների իրականացում, իսկ վերջինիս առաջացման դեպքում՝ նաև հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումներ և այլն.

14. «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝

- ապահովում է թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.
- ապահովում է սակավաթափոն տեխնոլոգիաների ներդրումը, թափոնների հավաքման և օգտահանման խթանման տնտեսական մեխանիզմները.
- սահմանում է թափոնների հաշվառման, գոյացման, հեռացման (ոչնչացման, վնասազերծման, տեղադրման) և օգտահանման կարգը, վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորումը և լիցենզավորման կարգը.
- սահմանում է վտանգավոր և արգելված թափոնների ցանկերը, թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման կարգը.
- իրականացում է թափոնների գործածության ոլորտում միջազգային համագործակցությունը և այլն.

15. Իրականացնում է ՀՀ այլ օրենքներով նախատեսված իրավասություններ:

Հայաստանի Հանրապետությունում ԱԻ կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման՝ ԱԻ ռիսկերի կառավարման բնագավառում լիազոր մարմիններին վերապահված են հետևյալ իրավասությունները՝

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը՝

ա. «ԱԻ-ում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

- մշակում է ԱԻ հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, բնակչության պաշտպանության ծրագրեր և ապահովում դրանց կատարումը.
- ստեղծում և կուտակում է ԱԻ-ում տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարներ, ֆոնդեր և ապահովում դրանց նպատակային օգտագործումը.
- կազմակերպում է ԱԻ առաջացման հնարավոր պատճառ համարվող օբյեկտների, առարկաների, գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննությունը.
- կազմակերպում է փրկարարների ատեստավորման աշխատանքները և բնակչության ուսուցումը՝ ԱԻ-ում բնակչության պաշտպանության հիմնահարցերով, ՀՀ կառավարության սահմանած կարգով.

- համակարգում և վերահսկում է հանրապետական գործադիր, պետական կառավարման, տարածքային և ՏԻՄ-ի, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների գործունեությունը բնակչության պաշտպանության բնագավառում.
- կազմակերպում է ԱԻ-ում բնակչությանն ազդարարումը, տեղեկատվությունը և այլն:

բ. «Հիդրոոդերևութաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝

- իրագործում է հիդրոոդերևութաբանական գործունեության բնագավառում պետական քաղաքականությունը, մասնակցում է պետական ծրագրերի մշակմանը և իրագործմանը,
- ձևավորում է ՀՀ ազգային հիդրոոդերևութաբանական համակարգը.
- ՀՀ պետական մարմիններին և ՏԻՄ-ին, զինված ուժերին, ազգաբնակչությանը և այլ սպառողներին ապահովում է հիդրոոդերևութաբանական ձեռնարկներով, հիդրոոդերևութաբանական երևույթների և պրոցեսների վերաբերյալ փաստացի ու կանխատեսվող հույժ շտապ տեղեկատվությամբ.
- ապահովում է հիդրոոդերևութաբանական երևույթների դիտարկումների մեթոդների, հաշվարկների, կանխատեսումների, տվյալների, հիդրոոդերևութաբանական գործունեության բնագավառում միասնականությունը ու համադրելիությունը.
- կազմակերպում ու կատարում է տնտեսության և բնակչության անվտանգության շահերի օգտին հիդրոոդերևութաբանական ու երկրաֆիզիկական այլ երևույթների վրա ակտիվորեն ներգործելու աշխատանքները և այլն.

գ. «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝

- պատասխանատվություն է կրում սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, սեյսմիկ ռիսկի նվազեցման համար.
- համակարգում է ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման բնագավառում տարվող աշխատանքները.
- հաստատում է ՀՀ տարածքում և դրանից դուրս հանրապետության համար վտանգավոր հեռավորության վրա հնարավոր ուժեղ երկրաշարժի կանխատեսումը.
- հաստատում է ՀՀ տարածքի սեյսմաշրջանացման, դրա խիտ բնակեցված շրջանների, հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների տարբեր մասշտաբների սեյսմամիկրոշրջանացման և սեյսմիկ ռիսկի քարտեզները.
- հաստատում է հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների տարածքների սեյսմիկ ռիսկի փորձագիտական գնահատումները.
- մասնակցում է շենքերի և շինությունների խոցելիության օպերատիվ գնահատմանը՝ բարձր սեյսմիկ վտանգի գոտիներում սեյսմիկ ռիսկի նվազեցման նպատակով.
- սահմանված կարգով՝ տալիս է լիցենզիաներ սեյսմաշրջանացման աշխատանքների համար և այլն.

դ. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝

- մշակում է ՔՊ պլաններ և ծրագրեր, ապահովում է դրանք սահմանված կարգով հաստատման ներկայացնելը և կազմակերպում է դրանց կատարումը.
- համակարգում և վերահսկում է կառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը ՔՊ բնագավառում.
- կազմակերպում է կառավարման մարմինների պատրաստումը և բնակչության ուսուցումը.
- կազմակերպում է բնակչության ազդարարումն ու իրազեկումը.
- կազմակերպում է հատուկ, կարևորագույն օբյեկտների, ինչպես նաև ՔՊ տեսանկյունից վտանգավորություն ներկայացնող առարկաների, գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննությունը.
- համակարգում և վերահսկում է տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով՝ ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի կուտակման գործընթացը և դրանց նպատակային օգտագործումը և այլն.

ե. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

- տեխնիկական անվտանգության ապահովման պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.
- տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառի պետական ծրագրերի մշակումը և դրանց կատարման ապահովումը.
- համագործակցությունը տեխնիկական անվտանգության բնագավառում միջազգային կազմակերպությունների, պետական կառավարման այլ մարմինների և տնտեսավարող սուբյեկտների հետ.
- տեխնիկական անվտանգության վկայագրին ներկայացվող պահանջների սահմանումը.
- աշխատանքային օրենսդրությանը համապատասխան՝ աշխատանքների անվտանգության գծով տեսչական և վերահսկողական գործառույթներով օժտված պետական մարմինների կամ այլ կառույցների հետ համագործակցությունը և այլն.

զ. Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2008 թվականի մայիսի 15-ի «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N531-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կանոնադրության 7-րդ կետի համաձայն նախարարության նպատակները և խնդիրներն են՝

- ՔՊ և ԱԻ-ում բնակչության պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության մշակումը, իրականացման համակարգումը.
- փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և առաջնային անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների համակարգումը.
- ԱԻ առաջացման հնարավոր պատճառ համարվող օբյեկտների, առարկաների, գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննության կազմակերպումը և համակարգումը.
- քաղաքացիական պաշտպանության և ԱԻ-ում բնակչության տարահանման գործընթացների պետական կարգավորման քաղաքականության մշակումն ու դրա իրականացման աշխատանքների համակարգումը.
- իր իրավասության սահմաններում ԱԻ կանխման ու հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպումը և համակարգումը.
- պետական մոբիլիզացիոն ռեզերվների ձևավորումը և կառավարումը.
- պետական պահուստի պաշարների պահպանումն ու սպասարկումը.
- սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացումը.
- հիդրոտեխնիկական երևույթների ռեժիմային ու հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների և կանխատեսումների իրականացման ապահովումը.
- մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքների համակարգումը.
- ԱԻ հունամիտար արձագանքման գործողությունների իրականացման համակարգումը.
- ԱԻ և ՔՊ ոլորտներում պետական կառավարման և ՏԻՄ-ի, կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ տարածքում միջազգային փրկարարական գործողություններ իրականացնող ուժերի համակարգումը և այլն:

է. ՀՀ այլ օրենքներով, ՀՀ կառավարության այլ որոշումներով վերապահված իրավասություններ:

2. ՀՀ ԱԻ-ն Հայաստանի փրկարար ծառայությունը՝

ա. «Հայաստանի փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն ՀՓԾ հիմնական խնդիրներն են՝

- ԱԻ-ում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ մարդկանց կյանքի ու առողջության փրկումը, պահպանումը.

- փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը.
- ՔՊ և ԱԻ-ում բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման ու ՏԻՄ-ի, կազմակերպությունների գործունեության համակարգումը, վերահսկումը և այդ հարցերով իրազեկման ապահովումը.
- ԱԻ կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, ՔՊ, բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակումն ու դրանց կատարման ապահովումը.
- բնակչության ուսուցման կազմակերպումը՝ ԱԻ-ում բնակչության պաշտպանության և ՔՊ հիմնահարցերով.
- ԱԻ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը և ԱԻ կանխման ու հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպումը և իրականացումը և այլն:

բ. ՀՀ կառավարության՝ 2005 թվականի մայիսի 19-ի «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Հայաստանի փրկարար ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ ԱԻՆ ՀՓԾ կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N634-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կանոնադրության 7-րդ կետի համաձայն Ծառայության նպատակները և խնդիրներն են՝

- ԱԻ-ում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ մարդկանց կյանքի ու առողջության փրկումը և պահպանումը.
- փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը.
- ՔՊ և ԱԻ-ում բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման ու ՏԻՄ-ի, կազմակերպությունների գործունեության համակարգումը, վերահսկումը և այդ հարցերով իրազեկման ապահովումը.
- ԱԻ կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, ՔՊ, բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակումն ու դրանց կատարման ապահովումը.
- ԱԻ-ում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծումը և կուտակումը, դրանց նպատակային օգտագործման ապահովումը.
- պետական հակահրդեհային ծառայության մատուցումը և պետական հրդեհային հսկողության իրականացումը և այլն.

գ. ՀՀ այլ օրենքներով, ՀՀ կառավարության այլ որոշումներով վերապահված իրավասություններ:

3. ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալությունը՝

ա. ՀՀ կառավարության՝ 2008 թվականի մայիսի 15-ի «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ ԱԻՆ կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N531-Ն որոշման 3-րդ հավելվածով հաստատված կանոնադրության 7-րդ կետի համաձայն գործակալության հիմնական խնդիրներն ու նպատակներն են՝

- ՀՀ տարածքում սեյսմիկ վտանգի մոնիտորինգի ապահովումը.
- տարածքների սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատումը.
- սեյսմիկ ռիսկի նվազեցումը.
- հարուցված սեյսմիկության մակարդակի գնահատումը.
- սեյսմիկ վտանգի հետ կապված այլ երկրորդային վտանգների գնահատումը.

բ. ՀՀ այլ օրենքներով, ՀՀ կառավարության այլ որոշումներով վերապահված իրավասություններ:

4. ՀՀ ԱԻՆ Պետական ռեզերվների գործակալությունը՝

ա. ՀՀ կառավարության՝ 2005 թվականի օգոստոսի 11-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Պետական ռեզերվների գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N 1337-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կանոնադրության 7-րդ կետի համաձայն գործակալության հիմնական խնդիրներն ու նպատակներն են՝

- պետական պահուստում նյութական արժեքների կուտակման պետական ծրագրերի և առաջադրանքների կատարման ապահովումը.
- պետական ռեզերվների համակարգի կազմակերպություններում, պատասխանատու պահպանում իրականացնող կազմակերպություններում պետական պահուստի ստեղծման նպատակներին համապատասխան նյութական արժեքների տեղաբաշխումը (տարաբաշխումը)՝ ըստ ՀՀ վարչատարածքային բաժանման.
- միասնական տեխնիկական քաղաքականության իրականացումը, գիտության ու տեխնիկայի նորագույն վճարումների և առաջատար փորձի արմատավորումը, գործակալության համակարգի կազմակերպությունների ու հիմնարկների ստեղծման և շահագործման, աշխատատար գործընթացների մեքենայացման ու ավտոմատացման բնագավառներում կազմակերպությունների գործունեության բարձր տեխնիկատնտեսական ցուցանիշների ապահովումը և այլն:

բ. ՀՀ այլ օրենքներով, ՀՀ կառավարության այլ որոշումներով վերապահված իրավասություններ:

5. ՀՀ ԱԻՆ «Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ՝

ա. ՀՀ կառավարության՝ 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1872-Ն որոշման 2-րդ կետով հաստատված «Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 9-րդ կետի համաձայն Ծառայության գործունեության առարկան և նպատակներն են՝

- ՀՀ տարածքում վտանգավոր հիդրոոդերևութաբանական երևույթներից բնակչության և տնտեսության պաշտպանությանը, քաղաքացիների կյանքին և սեփականությանն սպառնացող վտանգի նվազեցմանը, շրջակա միջավայրի վիճակի մոնիտորինգի իրականացմանը նպատակաուղղված միասնական պետական ծրագրերի իրագործումը.
- հիդրոոդերևութաբանական դիտարկումների և շրջակա միջավայրի մոնիտորինգի միջազգային ստանդարտներին համապատասխան կանոնակարգված գործունեության իրականացումը.
- ՀՀ տարածքում պետական նշանակության հիդրոոդերևութաբանական և շրջակա միջավայրի մոնիտորինգի ծրագրերի իրականացումը.
- բնակչության կյանքի ու առողջության, երկրի տնտեսության և շրջակա միջավայրի համար սպառնալիք հանդիսացող վտանգավոր հիդրոոդերևութաբանական երևույթների և գործընթացների փաստացի ու կանխատեսվող կտրուկ փոփոխությունների մասին օպերատիվ տեղեկատվության պատրաստումն ու հաղորդումը.
- միջազգային ու տարածաշրջանային նշանակության հիդրոոդերևութաբանական և շրջակա միջավայրի մոնիտորինգի ծրագրերի իրականացումը, տեղեկատվության փոխանակման համընդգրկուն (գլոբալ) և տարածաշրջանային միասնական միջազգային համակարգերի ձևավորմանն ու զարգացմանը մասնակցությունը.
- ՀՀ տարածքում կլիմայի և դրա փոփոխության ուսումնասիրումը, գնահատումը և կանխատեսումը, ինչպես նաև դրա ազդեցության հետևանքով՝ տնտեսության տարբեր ոլորտների խոցելիության վերաբերյալ շահագրգիռ կազմակերպություններ առաջարկություններ ներկայացնելը.
- ավիացիայում թռիչքների անվտանգությունը, անընդհատությունը և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ դրանց մասնագիտացված օդերևութաբանական սպասարկումը և այլն.

բ. ՀՀ այլ օրենքներով, ՀՀ կառավարության այլ որոշումներով վերապահված իրավասություններ:

6. ՀՀ ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ՝

ա. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն ունի հետևյալ իրավասությունները՝

- տեխնիկական անվտանգության պահանջներ սահմանող տեխնիկական կանոնակարգերի, արտադրական վտանգավոր օբյեկտների վտանգավորության դասակարգման գիտականորեն հիմնավորված չափորոշիչների մշակումը.
- տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացումը և համապատասխան փորձագիտական եզրակացության տրամադրումը.
- արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրի վարումը.
- արտադրական վտանգավոր օբյեկտների ռիսկի վերլուծումը և գնահատումը՝ ըստ վտանգավորության աստիճանի դասակարգման նպատակով.
- տեխնիկական քննության և հաշվառման իրականացումը և այլն:

բ. ՀՀ կառավարության՝ 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2334-Ն որոշման 2-րդ կետով հաստատված «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 9-րդ կետի համաձայն Կենտրոնի գործունեության հիմնական նպատակը ՀՀ տարածքում շահագործվող (շահագործման նպատակով նախապատրաստվող, կոնսերվացվող, ապամոնտաժվող) արտադրական վտանգավոր օբյեկտներում տեխնիկական անվտանգության ապահովման գործառնություններ կազմակերպելն ու իրականացնելն է՝ բացառությամբ միջուկային և էներգատեղակայանքների, ռադիոակտիվ նյութերի վերամշակման, ավիացիայի, ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի, ինչպես նաև ռազմական նշանակության օբյեկտների:

գ. ՀՀ այլ օրենքներով, ՀՀ կառավարության այլ որոշումներով վերապահված իրավասություններ:

ՀՀ ԱԻ կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման՝ ԱԻ ռիսկերի կառավարման բնագավառում ՀՀ հանրապետական գործադիր մարմիններին (նախարարություններ, կառավարությանն առընթեր մարմիններ) վերապահված են հետևյալ իրավասությունները՝

1. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝

ա. կազմակերպում են իրենց համակարգի աշխատողների պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.

բ. կազմակերպում են ենթակա ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների գործունեությունն արտակարգ իրավիճակներում.

գ. իրենց լիազորությունների սահմաններում ապահովում են բնակչության պաշտպանությունը և այդ նպատակով՝ ստեղծում են անհրաժեշտ մասնագիտացված կազմավորումներ և այլն:

2. «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝

ա. ստեղծում են հրդեհային պահպանության ծառայություններ և կազմակերպում նրանց գործունեությունը, մշակում են նպատակային ծրագրեր և կազմակերպում դրանց կատարումը, իրենց իրավասության սահմաններում կազմակերպում են հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի և հրդեհային անվտանգության վերաբերյալ այլ ակտերի մշակումը և հաստատում դրանք.

բ. մշակում և իրականացնում են հրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները.

գ. իրականացնում ու մասնակցում են հակահրդեհային քարոզչությանը և քաղաքացիների հրդեհային անվտանգության միջոցառումների ուսուցմանը.

դ. կատարում են հրդեհաշիջում և դրա հետ կապված վթարային-փրկարարական աշխատանքներ և այլն:

3. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝

ա. կազմակերպում են իրենց համակարգի աշխատողների պաշտպանությունը.

բ. ստեղծում են ՔՊ ծառայություններ.

գ. կազմակերպում են ՔՊ միջոցառումների պլանավորումը և իրականացումը.

դ. կազմակերպում են համակարգի կազմակերպությունների կայուն գործունեությունը և այլն:

4. «Խաղաղ նպատակով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝

ա. մշակում են անվտանգության նորմերն ու կանոնները՝ համաձայնեցնելով կարգավորող մարմնի հետ.

բ. մշակում և իրականացնում են իրենց ենթակա օբյեկտների անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումները, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների հրդեհային, տեխնիկական, սանիտարական և էկոլոգիական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումները.

գ. մշակում և իրականացնում են ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների ֆիզիկական պաշտպանության ապահովմանն ուղղված միջոցառումները.

դ. ապահովում են իրենց ենթակա ձեռնարկությունների պատրաստվածությունն ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների վթարները հակազդելու և պաշտպանական միջոցառումներ իրականացնելու գործում.

ե. ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում և դրանց դիտարկման գոտիներում կազմակերպում և իրականացնում են ճառագայթային իրավիճակի հսկողություն և այլն:

5. 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության պլանը (Հայկական ատոմային էլեկտրակայանի արտաքին վթարային պլան) հաստատելու մասին» N2328-Ն որոշմամբ, ըստ կանոնադրական խնդիրների, վերապահվել են միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանությունն ապահովելու գործառույթներ.

6. 2004 թվականի հուլիսի 29-ի «Ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ստեղծման և գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին» N1064-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն ընդգրկված են ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հանրապետական համակարգում և նրանց տրված են համապատասխան գործառույթներ.

7. 1999 թվականի հունիսի 10-ի «ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» N429 որոշմամբ հավանություն տրված ծրագրով հանրապետական գործադիր մարմինների վրա դրված են միջոցառումներ՝ սեյսմիկ ռիսկի նվազեցման նպատակով և այլ իրավական ակտերով վերապահված գործառույթներ:

Ըստ հնարավոր աղետների որոշակի տեսակների լիազորված տարբեր մարմիններին վերապահված են հետևյալ իրավասությունները՝

1. ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն՝

ա. «Խաղաղ նպատակով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝

- կատարում է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի աշխատանքների, օբյեկտների և սարքավորումների անվտանգության գնահատում, կազմակերպում և անցկացնում է փորձաքննություն.
- կազմակերպում և անցկացնում է հետազոտություններ ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի անվտանգության բարձրացման նպատակով.
- իրականացնում է շահագործող կազմակերպության կողմից ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների շահագործման ժամանակ տեղի ունեցած միջուկային և ճառագայթային միջադեպերի քննության գնահատում, իսկ, անհրաժեշտության դեպքում, ՀՀ կառավարության սահմանած կարգով՝ իրականացնում է լրացուցիչ քննություն, ստեղծում է խախտումների մասին տվյալների բանկ.
- տարեկան մեկ անգամ ՀՀ կառավարություն հաշվետվություն է ներկայացնում ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների միջուկային և ճառագայթային անվտանգության վերաբերյալ.
- վերահսկում է լիցենզավորված անձանց պատրաստվածությունը հնարավոր վթարային իրավիճակներին.
- վթարային իրավիճակների դեպքում ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում գնահատում է իրավիճակը և դրա հնարավոր փոփոխությունների կանխատեսումների հիման վրա՝ ՀՀ կառավարություն, ՀՀ արտակարգ իրավիճակների հարցերով լիազորված պետական կառավարման մարմին առաջարկություններ է ներկայացնում անհրաժեշտ պաշտպանական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ.
- իրականացնում է միջուկային նյութերի պետական հաշվառումն ու վերահսկումը, իոնացնող ճառագայթման աղբյուրների եւ ռադիոակտիվ թափոնների պետական ռեգիստրի վարումը.
- «Միջուկային վթարի մասին օպերատիվ տեղեկացման մասին» կոնվենցիային համապատասխան՝ իրականացնում է միջուկային վթարի մասին միջազգային օպերատիվ ազդարարում և հանդես է գալիս որպես կապի կենտրոնական մարմին՝ վթարի դեպքում տեղեկացման հարցերով.
- իրականացնում է շրջակա միջավայրի ճառագայթային մշտադիտարկում (մոնիտորինգ) և վերահսկողություն և այլն.

բ. ՀՀ կառավարության՝ 2008 թվականի հուլիսի 17-ի N 866-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված՝ Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կանոնադրության 8-րդ կետի համաձայն Կոմիտեի նպատակներն ու խնդիրներն ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի պետական կարգավորումն է՝ բնակչության և անձնակազմի անվտանգության ապահովման, շրջակա միջավայրի պաշտպանության ու ՀՀ անվտանգության շահերի պաշտպանության նպատակներով:

գ. ՀՀ այլ օրենքներով, ՀՀ կառավարության այլ որոշումներով վերապահված իրավասություններ:

2. ՀՀ բնապահպանության նախարարությունը՝

ա. ՀՀ կառավարության՝ 2002 թվականի օգոստոսի 8-ի N 1237-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված կանոնադրության 7-րդ կետի համաձայն Նախարարության նպատակը և խնդիրներն են՝

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմանում ՀՀ շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը.
- շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման և վերարտադրության պետական կառավարման ապահովումը.

- շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործություն ունեցող օբյեկտների ու տարրերի հաշվառման, ուսումնասիրության և սահմանափակումների սահմանման ապահովումը.
- ՀՀ տարածքում արտադրվող և օգտագործվող վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների սահմանման ապահովումը.
- շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության իրականացման ապահովումը և այլն.

բ. ՀՀ այլ օրենքներով, ՀՀ կառավարության այլ որոշումներով վերապահված իրավասություններ:

3. ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը՝

ա. ՀՀ կառավարության՝ 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված կանոնադրության 8-րդ կետի համաձայն Նախարարությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

- գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնաբուծությանը և կենդանիների տոհմային գործին աջակցություն, կարանտին հիվանդությունների ու առավել վնասակար օրգանիզմների դեմ պայքարի, անասնահակահամաճարակային միջոցառումների կազմակերպում, կարանտինային սահմանափակումների իրականացում.
- ՀՀ օրենսդրությանը համապատասխան, իր իրավասության սահմաններում՝ ՀՀ գյուղատնտեսական հողատեսքերի մոնիտորինգի իրականացում, գյուղատնտեսական հողերի մելիորացիայի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի կազմում և իրականացում, գյուղատնտեսական հողերի արդյունավետ հողօգտագործման վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություններ ներկայացնելը.
- անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում պետական կառավարում, ծրագրերի մշակում և իրականացում, անտառային ֆոնդի տարածքների հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացում, անտառային հրդեհների հայտնաբերում ու կանխում, վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի կազմակերպում և այլ գործառնություններ:

բ. ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ՀՀ կառավարության՝ 2007 թվականի օգոստոսի 16-ի N 931-Ա որոշման 1-ին կետով ճանաչվել է Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով նախատեսված գետերի ջրերի վնասակար ներգործության կանխման և վերացման միջոցառումների կազմակերպման ու իրականացման պետական կառավարման լիազոր մարմին: Ներկայումս ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել և շահագրգիռ նախարարությունների հետ համաձայնեցվել է «Բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքներն ու բնակչության գույքը վարարումների և սելավների ռիսկից պաշտպանելու ծրագրի», որը մոտ ժամանակներս կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը: Ծրագրով կալանավորվեն և կկանոնակարգվեն վարարումների և սելավների ռիսկից պաշտպանության ուղղությունները, անհրաժեշտ միջոցառումները և այլ հարաբերությունները.

գ. ՀՀ այլ օրենքներով, ՀՀ կառավարության այլ որոշումներով վերապահված իրավասություններ:

4. ՀՀ քաղաքաշինության նախարարությունը՝

ա. ՀՀ կառավարության՝ 2002 թվականի հուլիսի 25-ի N 1294-Ն որոշման 2-րդ կետի «ա» ենթակետով հաստատված կանոնադրության 7-րդ կետի համաձայն Նախարարության նպատակներն և խնդիրներն.

- Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագրերի շրջանակներում քաղաքաշինության, ճարտարապետության, շինարարության, տարածքների ինժեներական պաշտպանության, բնակարանային-

կոմունալ տնտեսության, տարածքային հատակագծման և տարաբնակեցման համակարգերի ձևավորման, տարածքների պլանավորման ու զարգացման, դրանց նպատակային օգտագործման ուղղությունների և գերակայությունների, արտադրական կարողությունների տեղաբաշխման, ինժեներատրանսպորտային ու այլ ենթակառուցվածքների կազմակերպման ոլորտներում հեռանկարային զարգացման ծրագրերի և պետական քաղաքականության մշակման ապահովումը.

- Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմակայուն շինարարության իրականացման նպատակով կատարվող ինժեներահետազոնական, տարածքների ինժեներական պաշտպանության, շահագործվող շենքերի և կառուցվածքների (այդ թվում՝ ինժեներական) տեխնիկական վիճակի ուսումնասիրման, վկայագրավորման (անձնագրավորման) ուղղությամբ կատարվող աշխատանքների կազմակերպման ու համակարգման ապահովումը.
- աղետի գոտու վերականգնման աշխատանքների համակարգումը.
- Հայաստանի Հանրապետության տարածքային հատակագծման և տարաբնակեցման նախագծերի մշակման ապահովումը, մշված նախագծերի՝ սահմանված կարգով հաստատումից հետո դրանցով ամրագրված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը և այլն:

բ. Սողանքային աղետների բնագավառում պատասխանատու լիազոր մարմին հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության նախարարությունը: ՀՀ կառավարության՝ 2007 թվականի հունվարի 11-ի նիստի N 1 արձանագրության 19-րդ կետով հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության սողանքային աղետի կառավարման հայեցակարգը» և «Հայաստանի Հանրապետության սողանքային աղետի կառավարման հայեցակարգի խնդիրներից բխող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում առավել ռիսկային 131 սողանքային տեղամասերում միջոցառումների իրականացման ժամանակացույցը»: 2-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին հանձնարարվել է, սահմանված կարգով, ապահովել հայեցակարգից բխող օրենսդրական, ծրագրային և կազմակերպչակառուցվածքային առաջարկությունների ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն ու հաստատմանը:

5. ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի N633-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 8-րդ կետի համաձայն

ա. սահմանված կարգով ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկատվություն է ստանում ՀՀ հանրապետական գործադիր մարմիններից, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից.

բ. իրականացնում է ՀՀ մարզերի և Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման, քննարկման ու հաստատման աշխատանքների համակարգումը.

գ. համագործակցում է ՀՀ մարզային և համայնքային մշակակության նպատակային ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ.

դ. իրականացնում է իրավական հսկողություն համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների ու համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ.

ե. իրականացնում է ՀՀ համայնքային բյուջեների ձևավորման և կատարման ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիազորություններ.

զ. իրավական հսկողություն է իրականացնում Երևանի քաղաքապետի, մարզպետների ընդունած որոշումների նկատմամբ և անհրաժեշտության դեպքում ՀՀ վարչապետին ներկայացնում է առաջարկություններ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ.

է. մասնակցում է ջրի ազգային ծրագրի նախագծի նախապատրաստման աշխատանքներին.

ը. մասնակցում է օգտագործելի ջրային ռեսուրսների պահանջարկի հաշվարկման ամենամյա և հեռանկարային աշխատանքներին.

թ. ապահովում է ջրային ուղորտում առևտրային գործունեություն իրականացնող կազմակերպություններում ջրային պետական կոմիտեին հանձնված պետական բաժնեմասի կառավարման հետ կապված գործառույթները.

ժ. սահմանում է ջրային հողերի ու դրանց ջրակոհամակարգերի պահպանման գոտիների օգտագործման սահմանափակումները և նորմերը.

ժա. վերահսկողություն է իրականացնում`

- օրենքով սահմանված կարգով և տեխնիկական պայմաններին համապատասխան ջրային համակարգերի օգտագործման ու պահպանման նկատմամբ,
- ռոռզման և խմելու ջրերի մատակարարման ու ջրօգտագործման գործընթացում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման նկատմամբ,
- ջրային համակարգերի սանիտարական պահպանման և անօտարելի գոտիների պահպանման նկատմամբ,
- ջրային համակարգերի արդյունավետ օգտագործման, վերանորոգման աշխատանքների, ինչպես նաև համակարգերում ջրակորուստների նորմատիվային չափաքանակների նկատմամբ.

ժբ. մշակում է միգրացիոն իրավիճակի վերլուծության և գնահատման, փոփոխման միտումների բացահայտման հիման վրա միգրացիոն քաղաքականության հայեցակարգը.

ժգ. իրականացնում է փախստականների և ռնի տեղահանվածների համար բնակարանային, իսկ վերջիններիս խիտ բնակության վայրերում` նաև սոցիալական նշանակության տարբեր օբյեկտների շինարարության և զբաղվածության օժանդակությանն ուղղված ծրագրեր.

ժդ. վերլուծում և գնահատում է հանրապետության տարածքում բնակչության ներքին տեղաշարժերի հետևանքով ստեղծված միգրացիոն իրավիճակը, զարգացման հիմնական միտումները.

ժե. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համապատասխան մարմինների հետ մշակում և իրականացնում է վերաբնակեցման, ժողովրդագրական իրավիճակի բարելավման ծրագրեր և այլ գործառույթներ:

6. ՀՀ առողջապահության նախարարությանը ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N1300-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 8-րդ կետի համաձայն`

ա. մշակում է բժշկական օգնության կազմակերպման և բուժօգնության որակի գնահատման չափորոշիչներ ու չափանիշներ.

բ. առողջապահական կազմակերպություններին ապահովում է կազմակերպամեթոդական օգնությամբ.

գ. հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության (ծառայության) միջոցով` սանիտարական նորմերի ու կանոնների նկատմամբ վերահսկողությունը, հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների մշակումն ու դրանց նկատմամբ վերահսկողությունը, բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի ազդեցության գործոնների հիգիենիկ հետազոտությունների կազմակերպումը, վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը.

դ. բնակչության առողջության բարելավմանը, հաշմանդամության և մահացության նվազեցման նպատակային ծրագրերի մշակումն ու իրականացումը.

ե. բնակչության հանրային իրազեկության և առողջապահական կրթության կազմակերպումը, այդ ուղղությամբ ծրագրերի մշակումը և իրականացումը.

զ. մոր և մանկան առողջության պահպանման ծրագրերի մշակումն ու միջոցառումների իրականացումը.

է. արտակարգ իրավիճակներում բնակչության առաջնահերթ բժշկական օգնության միջոցառումների կազմակերպումը.

ը. առողջապահական համակարգի և բնակչության առողջության վիճակի մասին տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունն ու գնահատումը.

թ. հանրապետությունում արտադրվող և հանրապետությունն ներմուծվող դեղորայքի տեսակների ու որակի նկատմամբ պետական վերահսկողության և դեղերի պետական գրանցման կազմակերպումը.

ժ. իր իրավասության սահմաններում մարզային առողջապահական կազմակերպությունների (տարածքային կառավարման մարմինների առողջապահական ծառայությունների) գործունեության համակարգումը և այլ գործառույթներ.

7. Արտակարգ իրավիճակների մասնավոր դեպքերով այլ պետական մարմինների համար սահմանված լիազորություններ:

ՀՀ-ում ԱԻ կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, ԱԻ ռիսկերի կառավարման բնագավառում պետական տարածքային կառավարման (մարզպետարաններ) մարմիններին վերապահված են հետևյալ իրավասությունները՝

1. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝

ա. կազմակերպում են մարզի բնակչության պաշտպանությունն ԱԻ-ում.

բ. մասնակցում են պետական համապատասխան ծրագրերով նախատեսված՝ ԱԻ կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, ինչպես նաև օպերատիվ բնույթի միջոցառումների իրականացմանը.

գ. ՏԻՄ-ին ու բնակչությանը ներգրավում են ԱԻ կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին.

դ. հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններին տալիս են հանձնարարականներ՝ ԱԻ կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, բնակչության պաշտպանության վերաբերյալ.

ե. պատասխանատու են մարզի տարածքում բնակչության պաշտպանությունն ապահովելու համար.

զ. իրականացնում են բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

2. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

ա. կազմակերպում և ղեկավարում են ՔՊ միջոցառումների իրականացումը մարզի տարածքում.

բ. մասնակցում են պետական հանրապետական պլաններով և ծրագրերով նախատեսված ՔՊ միջոցառումներին.

գ. ՏԻՄ-ին, կազմակերպություններին և բնակչությանը ներգրավում են ՔՊ միջոցառումների իրականացմանը.

դ. ստեղծում են մարզային ՔՊ ծառայություններ և ուժեր.

ե. հանձնարարականներ են տալիս պետական կառավարման հանրապետական մարմինների տարածքային ստորաբաժանումներին՝ ՔՊ միջոցառումների իրականացման վերաբերյալ.

զ. իրականացնում են մարզի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը.

է. իրականացնում են մարզի բնակչության պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը և այլն:

3. «Խաղաղ նպատակով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝

ա. մարզերում ապահովում են խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարումը.

բ. մասնակցում են ատոմային էներգիայի օբյեկտներում հնարավոր ԱԻ հակազդման պլանների մշակմանը.

գ. ճառագայթային վթարների դեպքում կազմակերպում և իրականացնում են մարզի բնակչության պաշտպանությանն ու վթարի հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումներ:

4. ՀՀ այլ օրենքներով և ՀՀ կառավարության այլ որոշումներով սահմանված իրավասություններ:

ՀՀ-ում ԱԻ կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, ԱԻ ռիսկերի կառավարման բնագավառում ՏԻՄ-ին վերապահված են հետևյալ իրավասությունները՝

1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի համաձայն Երևանի քաղաքապետը ՔՊ բնագավառում և արտակարգ իրավիճակներում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

ա. քաղաքապետը ՔՊ պետն է.

բ. ՔՊ բնագավառում և ԱԻ-ում քաղաքապետն իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և բնագավառը կարգավորող այլ օրենքներով համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններ:

Իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով՝

ա. համայնքապետը իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները՝

- 45-րդ հոդվածի համաձայն կազմակերպում է համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությունը.

բ. համայնքապետն իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները՝

- 33-րդ հոդվածի համաձայն միջոցներ է ձեռնարկում՝ տեխնոլոգիական աղետները կանխելու, տարերային և տեխնոլոգիական աղետների հետևանքները վերացնելու ուղղությամբ.

- 44-րդ հոդվածի համաձայն կազմակերպում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքները, կազմակերպում է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայություն, հակահամաճարակային միջոցառումները, կենդանիների հիվանդությունների կանխման և ագրարային այլ կանոնների պահպանման աշխատանքները:

- 45-րդ հոդվածի համաձայն վերահսկողություն է իրականացնում բնության պահպանության բնագավառում, կազմակերպում է ընդերքի, անտառային, ջրային և օդային տարածքների, ինչպես նաև բուսական ու կենդանական աշխարհի օգտագործման և պահպանման միջոցառումները, ապահովում է հողերի պահպանությունը հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից:

գ. համայնքապետն իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունը՝

- 36-րդ հոդվածի համաձայն աջակցում է ՔՊ մարմինների գործունեությանը.

- 42-րդ հոդվածի համաձայն աջակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը:

2. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝

ա. կազմակերպում են համայնքի բնակչության պաշտպանությունն ԱԻ-ում.

բ. իրականացնում են վթարային և վերականգնողական միջոցառումներ ԱԻ-ում համայնքային ենթակայության կենսաապահովման օբյեկտների անխափան աշխատանքն ապահովելու համար.

գ. կազմակերպում են փրկարարական աշխատանքներ համայնքի տարածքում.

դ. իրականացնում են ԱԻ կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումներ համայնքի տարածքում.

ե. իրականացնում են համայնքի բնակչության ազդարարումն ԱԻ-ում.

զ. իրականացնում են բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

3. «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝

ա. հրդեհային անվտանգության բնագավառում պետության պատվիրակած լիազորություններն են՝

- հրդեհների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը.
- հրդեհային անվտանգության միջոցառումների կատարման, կազմակերպման և իրականացման աշխատանքներին աջակցելը և օգնելը:

բ. հրդեհային անվտանգության բնագավառում կամավոր լիազորություններն են՝

- հրդեհային անվտանգության ապահովման միջոցների ու կանոնների ուսուցումը բնակիչներին և նրանց ընդգրկումը հրդեհների կանխման ու հրդեհաշիջման աշխատանքներում.
- հրդեհային պահպանության հասարակական միավորումների գործունեությանն աջակցելը.
- հրդեհային անվտանգության ապահովման նկատմամբ հասարակական վերահսկողության կազմակերպումը.
- հակահրդեհային իրավիճակի վատթարացման դեպքում անհրաժեշտ ռեժիմի ապահովումը:

4. «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝

ա. կազմակերպում են համայնքի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման բնագավառում տարվող աշխատանքները.

բ. ապահովում են համայնքի տարածքում ուժեղ երկրաշարժերին բնակչությանը նախապատրաստելու աշխատանքները.

գ. աջակցում են համայնքի տարածքում սեյսմիկ պաշտպանության բնագավառում պետական ծրագրերի կատարմանը.

դ. իրականացնում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

5. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝

ա. կազմակերպում և իրականացնում են համայնքում ՔՊ-ն.

բ. իրականացնում են միջոցառումներ՝ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով.

գ. կազմակերպում են համայնքի ՔՊ միջոցառումների պլանավորումը և իրականացումը.

դ. իրականացնում են համայնքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը, բնակչության պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը.

ե. ստեղծում են համայնքային ՔՊ ծառայություններ.

զ. իրականացնում են համայնքի բնակչության ազդարարումը.

է. ստեղծում են ՔՊ կազմակերպման համար անհրաժեշտ ուժեր և ապահովում են այդ ուժերի պատրաստակարարությունը և այլն:

6. «Խաղաղ նպատակով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

ա. ապահովում են համայնքի բնակչության մասնակցությունը համայնքի տարածքում կառուցվելիք ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների նախագծերի հասարակական քննարկումներին և փորձաքննություններին.

բ. ճառագայթային վթարների դեպքում կազմակերպում և իրականացնում են համայնքի բնակչության պաշտպանությանն ու վթարի հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումներ և այլն.

7. ՀՀ այլ օրենքներով և ՀՀ կառավարության այլ որոշումներով սահմանված իրավասություններ:

ՀՀ-ում ԱԻ կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, ԱԻ ռիսկերի կառավարման բնագավառում ՀՀ տարածքում գործող կազմակերպություններին վերապահված են հետևյալ իրավասությունները՝

1. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝

ա. իրականացնում են իրենց աշխատողների պաշտպանությունը.

բ. աջակցում են փրկարարական և անհետաձգելի աշխատանքների իրականացմանը և ստեղծում են անհրաժեշտ ուժեր՝ համապատասխան աշխատանքներ կատարելու համար.

գ. հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտներն ապահովում են հնարավոր վտանգավոր ազդեցության գոտում բնակվող բնակչության անհապաղ ազդարարումը և պաշտպանությունը ՀՀ կառավարության սահմանած կարգով:

2. «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝

ա. իրավունք ունեն՝

- սահմանված կարգով ստեղծել, վերակազմակերպել և լուծարել հրդեհային պահպանության այն ստորաբաժանումները, որոնք պահվում են սեփական միջոցների հաշվին, այդ թվում՝ պետական հակահրդեհային ծառայության հետ պայմանագրի համաձայն.
- առաջարկություններ ներկայացնել պետական կառավարման մարմիններ և ՏԻՄ՝ հրդեհային անվտանգության ապահովման ուղղությամբ.
- աշխատանքներ տանել ծագած հրդեհի հանգամանքները և պատճառները պարզելու ուղղությամբ և այլն.

բ. պարտավոր են՝

- կատարել հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջները, ինչպես նաև կատարել հրդեհային պահպանության մարմինների պաշտոնատար անձանց կարգադրությունները, որոշումներն ու այլ օրինական պահանջները.
- մշակել և իրագործել միջոցառումներ՝ հրդեհային անվտանգության ապահովման ուղղությամբ, սարքին վիճակում պահել հակահրդեհային համակարգերը և միջոցները, այդ թվում՝ հրդեհաշիջման առաջնային միջոցները, արգելել դրանց ոչ նպատակային օգտագործումը.
- աջակցել հրդեհային պահպանությանը՝ հրդեհաշիջման, հրդեհների ծագման պատճառների և պայմանների բացահայտման, ինչպես նաև հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերը խախտած և հրդեհների առաջացման մեջ մեղավոր անձանց հայտնաբերման ուղղությամբ տարվող աշխատանքներում.
- հրդեհային պահպանության մարմիններին անհապաղ տեղյակ պահել ծագած հրդեհների, հակահրդեհային համակարգերում կամ միջոցներում տեղ գտած անսարքությունների, ճանապարհների և անցուղիների վիճակի փոփոխման մասին և այլն:

3. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝

ա. իրականացնում են իրենց աշխատողների պաշտպանությունը.

բ. ստեղծում են փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ուժեր.

գ. իրականացնում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

դ. պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, ինչպես նաև ՔՊ տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպություններն ստեղծում են ՔՊ ծառայություններ: Այդ կազմակերպությունների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը:

4. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձը պարտավոր է՝

ա. սահմանել տեխնիկական անվտանգության պահանջների պահպանման նկատմամբ մշտական վերահսկողություն.

բ. արտադրական պատահարները բացառելու և կանխարգելելու նպատակով արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման ամբողջ ընթացքում ապահովել տեխնոլոգիական սարքավորումների, տեխնիկական միջոցների, օբյեկտի կառույցների, տեղակայանքների անվտանգության գոտու տարածքների պարբերական զննումներ, ինչպես նաև կազմակերպել աշխատողների ուսուցում և որակավորման ստուգում.

գ. մշակել և իրականացնել միջոցառումների ծրագիր տեխնածին վթարների հավանականության նվազեցման ուղղությամբ.

դ. աջակցել տեխնիկական անվտանգության համակարգի այլ օղակներին՝ տեխնածին վթարների և դժբախտ դեպքերի պատճառների և հանգամանքների բացահայտման գործում.

ե. արտադրական պատահարների և տեխնածին վթարների դեպքում անհապաղ ձեռնարկել տեխնիկական անվտանգության վկայագրով նախատեսված միջոցառումները՝ միաժամանակ տեղեկացնելով Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնին.

զ. դադարեցնել արտադրական վտանգավոր օբյեկտի կամ դրանում առկա տեխնիկական միջոցի, տեխնոլոգիական սարքավորման շահագործումը, եթե փորձագիտական եզրակացության մեջ արձանագրվել է տեխնածին վթարի սպառնալիքը և այլն:

5. ՀՀ այլ օրենքներով և ՀՀ կառավարության այլ որոշումներով սահմանված իրավասություններ:

ՀԱՎԵԼՎԱԾ 5: Հարցմանը մասնակցած հիմնական դերակատարները և դրանց կոնտակտային տվյալները

Ստորև բերված ԱԿ ոլորտի հիմնական դերակատարներից յուրաքանչյուրի հետ անցկացվել է հարցազրույց: Հարցվողների շարքում հիմնականում եղել են փոխնախարար, ծառայության տնօրենի տեղակալ, իրավաբան, մասնագետ, ծրագրի պատասխանատու, վարչության պետ և տվյալ հարցում պատասխանատու այլ անձինք:

Նախարարություններ գործակալություններ կազմակերպություններ	Հասցե	Հեռախոս	Էլ. կայք
ՀՀ ԱԻՆ	Պուլշիհնի 25	(010) 28-42-80	www.ema.am
ՀՀ ՏԿՆ	Հանրապետության հրապարակ կառավարական տուն 2	(010) 52-52-74	www.mta.gov.am
ՀՀ Առողջապահության	Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3	(010) 58-24-13	www.moh.am
ՀՀ Գյուղատնտեսության	Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3	(010) 52-02-07	www.minagro.am
ՀՀ Կրթության և գիտության	Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3	(010) 52-66-02 (010) 52-73-43	www.edu.am
ՀՀ Բնապահպանության	Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3	(010) 58-53-49 (010) 52-10-99	www.mnp.am
ՀՀ Քաղաքաշինության	Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3	(010) 58-90-80	www.mud.am
ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների	Հանրապետության հրապարակ կառավարական տուն 2	(010) 52-87-04	www.minenergy.am
ՀՀ Կարավարությանն առընթեր Սիջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե	Տիգրան Մեծի 4	(010) 56-40-14 (010) 54-39-95 (010) 54-39-91	www.anra.am
ՍՊԱԾ	Դավիթաշեն 4-րդ զանգված	(010) 36-21-30	www.nssp-gov.am
ՍՊԱԾ Կառուցվածքների սեյսմակայունության կենտրոն	Դավիթաշեն 4-րդ զանգված	(010) 36-87-24	
ՀՓԾ	Պուլշիհնի 25	(010) 53-28-73 (010) 53-73-12	www.ema.am
ՀԱՅՊԵՏՀԻԴՐՈՍԵՏ	Լեոյի 54	(010) 53-36-16 (010) 53-03-16	
ՀՀ ԱԻՆ Պետռեզերվների գործակալություն	Պուլշիհնի 25	(010) 53-87-71	
ՀՀ ԳԱԱ ԵԳԻ	Բաղրամյան 24	(010) 52-44-26	
ԾԿՊԱ	Աճառյան 1	(010) 61-74-73	
ԵՊՀ Աշխարհագրության երկրաբանության ֆակուլտետ	Ալեք Մանուկյան 1	(010) 55-25-93	
«Գեոռիսկ» գիտահետազոտական ընկերություն ՓԲԸ	Բաղրամյան 24	(010) 52-65-17	
Հայսեյսմոլոգիկ ԳՀԻ ԲԲԸ	Ա.Ահարոնյան 3	(010) 28-13-02	
Հայաստանի սեյսմոլոգների և երկրի ֆիզիկայի ընկերակցություն	Լենինգրադյան 10/51	(010) 39-26-36	
Արամե Սարաֆյան ակումբ հիմնադրամ	Նոր Նորք Սուրբավան 17 /21	(010) 61-74-73	
Հայջրնախագիծ ինստիտուտ ՓԲԸ	Վ.Վաղարշյան 12	(010) 27-76-61 (010) 27-36-60	
ՀՀ ԳԱԱ Էկոլոգա - նոսոֆերային	Աբովյան 68	(010) 56-93-31	

հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ			
ՀՀ Զրային տնտեսության պետական կոմիտե	Վարդանանց 13 ա	(010) 54-09-09	
ՀՀ Սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայություն ՊՈԱԿ	ք. Գյումրի, Վազգեն Սարգսյան 5ա	(010) 28-46-12 (0312) 3-15-80	
Գառնի միջազգային կենտրոն	Բաղրամյան 24	(010) 52-34-66	
Գեոկոմ ՍՊԸ	Մ. Բաղրամյան 24ա	(010) 56-45-04	www.geocom.am
Հայկական Կարմիր խաչի ընկերություն	Պարոնյան 21	(010) 53-84-31	www.redcross.am
ԳՏՀ	Նալբանդյան 48	(010) 54-60-46	www.gtz.de
Համաշխարհային բանկ	Գրիգոր Լուսավորչի 9, 6 հարկ	(010) 52-48-84 (010) 52-09-92	www.worldbank.org.am
ՄԱԶԾ	Պետրոս Ադամյան 14	(010) 56-60-73	www.undp.am
SDC	Կորյունի 1 նրբանցք, 11 շենք, 16 բն.	(010) 52-40-88	www.swisscoop.am
ԵԱՀԿ	Սունդուկյան 64/1	(010) 22-96-10 (010) 22-96-11	www.osce.org
Սեյվ ղը Չիլդրեն	Ագաթանգեղոս 2ա	(010) 56-23-35 (010) 56-22-83	www.savethechildren.org
ՄԱԿ Մանկական հիմնադրամ	Պետրոս Ադամյան 14	(010) 54-38-09 (010) 58-01-74	www.unicef.org/armenia
ԱՀԿ	Ալեք Մանուկյան 9, Ամերիկյան համալսարանի բիզնես կենտրոն	(010) 51-20-29	www.euro.who.int
Վորլդ Վիժն	Ռ. Մելիքյան 1	(010) 74-91-18 (010) 74-91-19	www.wvarmenia.am
JICA	Ամիրյան 11	(010) 53-12-86	www.jica.go.jp
ԿԻՄԿՄ ՄՖ	Պարոնյան 21	(010) 53-94-43 (010) 53-92-17	www.ifrc.org

ՀԱՎԵԼՎԱԾ 6: Հարցաշար

1. Նկարագրեք Ձեր կազմակերպության դերը Աղետների կառավարման գործում
2. Ձեր կազմակերպության ենթակայությունը և համագործակցությունը
3. Ձեր ենթակայության տակ գտնվող կառույցները
4. Ձեր կարծիքը ԱԿ ոլորտի իրավական դաշտի ներկա վիճակի վերաբերյալ
5. ԱԿ ոլորտի կառավարման թերի կողմերը
6. Ձեր կողմից իրականացվող ծրագրեր ԱԿ ոլորտում և համապատասխան գործընկերներ
7. Ձեր ներգրավվածությունը Աղետների ռիսկի գնահատման ցիկլում (բացահայտում, գնահատում, մոնիտորինգ, տվյալների շտեմարան)
8. Ձեր դերը ԱԿ ցիկլում
 Նվազեցում
 Նախապատրաստում
 Արձագանքում
 Վերականգնում

Հավելված 7. ԿԻՐԱՌՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԻ	Արտակարգ իրավիճակ
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱԿ	Աղետների կառավարում
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԳԱԱ	Գիտությունների ազգային ակադեմիա
ԳՏՀ	Գերմանական տեխնիկական համագործակցություն
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ԿԽ/ԿՄ ՄՖ	Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա
ՀԱԷԿ	Հայկական ատոմային էլեկտրակայան
ՀԿԽԸ	Հայկական Կարմիր խաչի ընկերություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԾԾ	Հայաստանի փրկարար ծառայություն
ՃԿՊԱ	Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա
ՄԱԶԾ	Միավորված ազգերի զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍՊԱԾ	Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿՆ	Տարածքային կառավարման նախարարություն
ՈՒԹՀԿ	Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ
Քաղաքացիներ	Օտարերկրյա քաղաքացիներ
ՔՊ	Քաղաքացիական պաշտպանություն
ADRC	Ասիական աղետների նվազեցման խորհուրդ
GIS	Աշխարհագրական տեղեկատվական համակարգ
JICA	Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն
SDC	Շվեյցարական զարգացման և համագործակցության գործակալություն
UNEP	Միավորված ազգերի բնապահպանական ծրագիր
UNFAO	Միավորված ազգերի սննդի և գյուղատնտեսության կազմակերպություն
UNICEF	Միավորված ազգերի մանկական հիմնադրամ